


ԵԶՄԻԱԾԻՒ



1961

ԱՆԺԱ
ԺԼ ՏԱՐԻ

Հոկտեմբեր

ԷԶՄԻԱՇԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱՇԻ

Ժ

1961



ՀՐԱՄԱՆԱԿ

S. S. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ
ՎԵՀԱՓՈՐ ԵՒ ՄՐԲԱՋՆԱԿՈՑՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մայր Արոռ Սուրբ էջմիածնի տպարանի բացման առիթ	եզ 3
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ խոսքը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հազարվեցնարյուրամյա հոբելյանի առիթ	5
ԽՄՔԱԳՐԱԿԱՆ — «Եկայի շինեսցու սուրբ զխորանն լուսոյ»	8
Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հազարվեցնարյուրամյակի հոբելյա- նական հանդիսուրյունները Մայր Արոռ Սուրբ էջմիածնում	11
Հանդիսավոր սուրբ պատարագ և բարող Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի գանձակալուրյան վեցերորդ տարեդարձի առիթ	15
Մայր Արոռի նորաշեն տպարանի բացման հանդիսուրյունը	21
ՄԱՅՐ ԱԲՈՆՈՒՄ	26
Ա. Հ. Հյուախսային Ամերիկայի նայոց Արևելյան թեմի առաջնորդ գե- րազնորդ Տ. Սինե արքեպիսկոպոս Մանուկյանը Մայր Արոռում	28
Ա. ՄԱՏԻՆՅԱՆ — Մայր Արոռի նոր տպարանը	32
ԵԼԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐՅԱՆ — Օշական	37
ՄԻԱՄԱՆԹՈՐ — Գյուտին փառքը	39
ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ — Հայոց լեզուն	40
ՊՐՈՖ. Հ. ԱԶԱԽՅԱՆ — Մեսրոպ Մաշտոց	41
ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ — Մեսրոպյան այրքենարանները ԺԹ և Ի դա- րերում	51
ԶԵԿՈՎՅ Գալուստ Կյուլպենկյան ճիմճարկության	62



**ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ. ԷՉՄԻԱՅԻՆ
«ԷՇՄԻԱՅԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ**


• Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzinc, Arménie, URSS

Երևան, 1961 թ.



ՆՈՐԻՆ ԱՈՒԹԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.
ԾԱ.ՑՐԱ.ԳՈՒՅՆ ՊԱ.ՏՐԻԱ.ՐԻՔ ԵՎ ԿԱ.ԹՈՂԻԿՈՍ Ա.ՄԵՆԱ.ՑՆ ՀԱ.ՑՈՑ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածնի ՏՊԱՐԱՆԻ
ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Վ Ա Զ Գ Ի Ե Ն Ե Ա Ր Ա Ց Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ր Ի Ս Ո Ս Ի ,
Ո Ղ Ո Ր Մ Ո Ւ Ք Ե Ա Մ Բ Ի Ա Մ Ո Ց Ե Խ Կ Ա Մ Ո Ք Ն Ա Զ Գ Ի Ս
Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Պ Ե Տ Ե Խ Կ Ա Ր Ո Ղ Լ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց ,
Ե Ա Յ Ր Ա Գ Ո Յ Ե Պ Ա Տ Բ Ի Ա Ր Ք Հ Ա Մ Ա Զ Գ Ա Կ Ա Ն Ն Ա Խ Ա Մ Մ Ե Ն Ա Ր
Ա Ր Ո Ո Ւ Ո Յ Ա Յ Ր Ա Ր Տ Ե Ա Ն Ա Ռ Ա Վ Ե Լ Ա Կ Ա Ն Մ Ա Յ Ր
Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Մ Ր Ո Յ Ե Կ Ա Ր Ո Ւ Ղ Լ Ի Կ է Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի

ԲՐԻՍՏՈՍԱԿԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՐՋՈՇՆ ԵԻ ՕՐՀԱՌՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒ-
ՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԳԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈ-
ՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵԻ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՈՆԻԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵԻ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵԻ ՊԱՇՏՈՆԵԻՅ ԵԻ ՍԻՐԵՅԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽՏԱՅԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԻԵԱՆ ՀԱՅՈՑ



յայր հրճվանքով գրի կառնենք հայրապետական Մեր սույն կոնդակը
և Զեպի կիրենք զալն, ավետելու համար, թե Տիրոջ ողորմությամբ, հոկ-
տեմբեր 15-ին, կիրակի օր, կատարեցինք բացումը Մայր Աթոռիս նո-
րաշեն տպարանին, որ կոչված է լուսի նոր վառարան մը դառնալ մեր
Եկեղեցին և համայն հայ ժողովուրդի կյանքին մեջ:

Սուրբ Էջմիածինը ի սկզբանն գրի և գրականության և դպրության կեղրոն մը
եղած է, «բացեալ աղքիւրն գիտութեանն՝ Աստուծոյ (Կորյուն), մանավանդ հայ
տաւերու գոտիին և Աստվածաշունչի թարգմանության երանելի օրերեն սկսյալ, զի
«Սկիզբն դպրութեանս հայոց եղև սկիզբն մեծի գիտութեան և անպայման ուրա-
խութեան» (Ասողի):

Իրոք, մեր օրերուն տպագրված գիրն ու գրականությունը ուղիղ շարունակու-
թյունն են մշակութային այս մեծ գործին, որուն հիմք դրին Սուրբ Սահակ Պարթև և
Սուրբ Մեսորոյ Մաշտոց:

Սուրբ Էջմիածնի այս նույն կամարներուն ներքև, ուր մեր առաջին սուրբ թարգ-
մանիչները հայ լեզուն մազաղաթին հանձնեցին, Սուրբ Էջմիածնի այս կամարներուն

տակ, ուր Սիմեոն Երևանցի մեծագործ հայուապետը հայերեն տպող առաջին մեքենան հաստատեց 1771 թվականին, արև մենք ասոյօ, այս նույն սրբազն կամարներուն ներքև, կատարեցինք բացումը՝ մեր նորակերտ արդիական տպարանին:

Մայր Աթոռուն նոր տպարանը արգասիքն է Ամերիկայի մեր հայ հավատացյալ ժողովուրդի սիրույն և հավատարմության՝ դեպի Սուրբ Էջմիածին և հայրենի գիտությունն ու մշակույթը:

Խորապես մխիթարյան արտով, հանուն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, Մեր հայուապետական օրինությունն ու գործունակությունը կհայտնենք Միացյալ Նախագահ մեր երկու թեմերու ազգային-Եկեղեցական իշխանությանց, Մայր Աթոռու տպարանի հանգանակիչ հանճանաժողովին և անոր եռանրուն, անձնվեր նախագահ, Մայր Աթոռու հարազատ զավակ պարոն Երվանդ Աղաճանյանին և աստվածասեր բոլոր նվիրատուներուն, որոնց անունները անշնչելի պիտի մնան մեր սրտերուն և այս բազմադարյան սուրբ քարերուն վրա:

«Երանի որ ունիցի լիշտատկ ի Սուրբ Էջմիածին»:

Հայրենի Հողին վրա, Սուրբ Էջմիածին այս սրբազն հարկին տակ, լուսի աղբյուր մը ևս սկիզբ կառնե, որոգելու համար հոգեւոր անդաստանը մեր ժողովուրդին և բաշխելու անոր հոգեկան սնունդ, գիտությունն և մշակութային արժեքներ:

Մայր Աթոռու տպարաննեն լուս պիտի տեսնեն կրոնական գրականությունն, ինչպես և մանավանդ պատմա-բանասիրական, հայագիտական լուրջ ուսումնասիրություններ:

Սուրբ Էջմիածին տպարանը իր սեպուհ պարտը պիտի նկատեն նպաստել հայ իին և նոր մշակութային գանձերը լուս աշխարհ բերելու և արժեքություն նվիրական աշխատանքին:

Համրանքով փոքր մեր ժողովուրդը հարուստ է և մեծ իր հոգեւոր ու մշակութային արժեքներով։ Ան իր գոյությունը, իր ինքնությունը և ստեղծագործական իր թափը պիտի կարողանա նաև այսուհետև պահպանել՝ ներշնչվելով։ այդ վավերական արժեքներու աշխարհեն, վերանած Հայրենի Երկրի արևին տակ։

Այս ծշմարտությանց լուսին ներքև, նոր տպարանի հաստատումով, Սուրբ Էջմիածին անգամ մը ևս կփառավորվի և անգամ մը ևս կլեցվի կենդանության նոր ավյունով, իր պատմական առաքելության պահպան ճանապարհին վրա։

Թող Աստված օրինե լուսի այս նոր վառարանը, պահելով զայն անփորձ ու անսասան, և թող մեր Սուրբ Եկեղեցին ու մեր ժողովուրդը քաղցրությամբ ընդունին զայն, իրեն ընծա մը, որ առավել պիտի զորացնե և պայծառացնե հայ կյանքը, հայ հոգին ու հայ հանճարը։

«Ծնորիք, սէր ու խաղաղութիւն Տեառն մերոյ Թիսուահ Քրիստոսի Եղիցին ընդ Զեկ ընդ ամենեսին»:

Ամեն։

Վահագին (և)

**ԺԱՅՐԱԳՈՒՅԹ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ կոնդակս ի 16-ն Բոկսեմբերի

1961 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց ՌՆԺԱ,

ի մայրավանս Մրրոյ Էջմիածին։



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱԶԱՐՎԵՑՆԱՐՅՈՒՄԱՅՅԱ ՀՈԲԾԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Միքեցյալ հավատացյալ զավակներ Մեր.

Դաւեր առաջ, երանելի օր մը, 405 բկականին, մեր աշխարհին մեջ մեծահանդէս քափոր մը կշածվեր դեպի Երկրին հարավային սահմանները: Հայոց արքան՝ Վումշապոնի և Հայոց Հայրապետը Սահմակ Պարքե, հայ ժողովուրդի մեծամեծները և զորքը և բազմահազար շինական ժողովուրդը, Ռահ գետի ափին, «Ովսաննա»-ներով կղիմավորեին հայ հոգևորական մը՝ Մեսրոպ վարդապետ Մաշտոց:

Ո՞վ էր այդ վարդապետը: — Պարզազգեստ, համեստ վահական մըն էր ան, որ հեռավոր նամրաներե, մաշած տրեխներով, կվերադառնար հայրենի տուն:

Եվ ի՞նչ կըերեր իրեն նեա այդ վահականը: Ո՞՛չ ոսկի, ո՞՛չ բենեզ, ո՞՛չ զենք, ո՞՛չ զորք և ո՞՛չ ալ տիաղոսներ: Մեսրոպ Մաշտոց իր ժողովուրդին քննա կըերեր հշանագրերը մայրենի լեզվին, արգասիքը իր լուսափայլ հանարին և իր մեծ սրտին:

Սուրբ Մեսրոպ հոգինած էր հայ լեզվի տառերը և անոնց մեջ բյութեղացուցած և կաղապարած էր Արարատյան դաշտի վրա խոսված հայերեն լեզվի հնչյունները: Ժողովուրդի խոսած լեզվի շաղախին ձև և կա-

նոն տված էր ան, կրշելով հայոց լեզուն հավետ մշտանորդ կյանքի: Սակայն սխալ պիտի ըլլար Մեսրոպ Մաշտոցը նժարի վրա դնել միայն հայ տառերու իր զյուտով և Աստվածաշունչի բարգմանուրյամբ: Անտարակոյս, հանճարեղ են այդ զործերը և մեծ հաղթանակներ կհանդիսանան իր իմացական ուժերուն և իր հայրենասիրյուրյան, բայց իր գործը, իր առամելուրյունը և իր ժառանգուրյունը ավելին են: Արդարե, Մեծ Վարդապետը, բյութեղացնելով հայ լեզուն և դարձնելով զայն գրական լեզու, բյութեղացուց նաև հայ մտածողուրյունը, հայ իմացականուրյունը, վասնզի հայտնի է մեզի այսօր, թե լեզուն և մտածումը միասնակալուն:

Եվ ավելին տակամին. հայ իմացականուրյան զարդունքով ու զարգացումով, տակավ արթեցան ու անեցան Հայ Ազգի հոգեկան բոլոր բարուն ուժերը և այսպիսով հետզինեւ ծեռնեգ առին, հետզինեւ նորանոր կատարյալ ձևեր ստացան ու բարձր կատարեներու հասան հայ բահաստեղծուրյունը, հայ նարտարապետուրյունը, երածքշտուրյունը, նկարչուրյունը և մյուս ար-

վեստները: Ամեն խկապէս հայկական և վագերական արժեք, մեր անցյալին մեջ, ծնունդ կառնե Սուրբ Մեսրոպի տեսիլքեն ու նաևնարեն:

Մեսրոպ Մաշտոց, Փրկչի հշման տեղեն առած իր ներշնչումներով, իր արարշագործ ոգեկան ուժերով, իր ստեղծարար աշխատանով և դարերուն բռնած իր մեծ ժառանգությամբ, հիմնադիրն է, հայրն է հայ մշակույրին, բառին ամենալայն և ամենանըշմարիս իմաստովը:

Տակավին իր ձևերը փնտող, մշուշապատ հայ հոգեկան աշխարհին մեջ, փայլատակեց Սուրբ Մեսրոպի արարշագործ պատգամը՝ «Եղիցի լոյս»: «Եւ եղի լոյս»: Սուրբ Մեսրոպի հանճարով, հայ ժողովուրդը իր կյանքի սեփական հանապարհը գտուի: Գտավ իր ինքնուրյունը և աղբյուրը իր ոգեկան ուժերուն: Գտավ իր ոնք: Եվ ամրող Ազգ մը ահա, ավելի բան հազար և հինգ հարյուր տարիներ վեր, այդ ոգեկան-իմացական ձևերուն մեջ, կձուկե, կդարբնե իր մտածումները, իր հույզերը և իր տենչերը, առանց նինը կրկնելու, այլ միշտ նվաճելով նորանոր ու անմատչելի բարձունքներ մշակութային ստեղծագործությանց նորիզոնին վրա:

Մեսրոպ Մաշտոց իր ժողովուրդի հարազատ զավակն է: Եր տեսիլքներով, իր հանճարով ու ստեղծարար գործերով արտահայտիչն է հայ ժողովուրդի սպասումներուն, հայ ժողովուրդի ապրումներուն, հայ ժողովուրդի իմացական ու ոգեկան հնարավորություններուն: Եթե այդպէս շրլար. Մեսրոպ առանձին կմնար մեր պատմության մեջ և իր ժառանգությունը շատոնց ի վեր ժամանակի մոխիրներուն տակ բաղված ու կրաված:

Եթե Մեսրոպ Մաշտոց կարողացավ մշակույրի արև ջամբ վառել Հայոց Աշխարհին մեջ, հայ ժողովուրդն ալ կարողացավ այդ ջամբ վառ պահել տիրաքար ու փոխանցել զայն սերունդե սերունդ և հասցնել մինչև մեր օրերուն, մեր սերունդին: Եվ այսօր, այդ ջամբ կշռա փառքի մեջ, վերածնած Հայրենիքի բաղակամայր Երևանի Մատենադարանին, Հայաստանի պետական համալսարա-

նին, Գիտությանց կանագին և բազում գիտական, գեղարվեստական, կրթական, մանկավարժական ուսումնարաններուն և հաստատությանց կամարներուն ներևի:

Մեր ժողովուրդը համրանքով փոքր է, սուկայն մեծ է իր հին և նոր մշակույրի արժեներով: Գաղտնիք չէ ոչ ոչի համար, թե մանավանդ մեր Մայր Հայաստանի նոր և խաղաղ ու ապահով պայմաններուն մեջ, ոչ միայն աշխի լույսի պես կամապանվին ու կգեահատվին հայ մշակույրի հին վագերական արժեքները, այլ նաև, շնորհիլ մեր Ազգի տաղանդաշատ զավակներուն ներշնչումին ու աշխատանքին, կստեղծվին նոր արժեքներ, հարստացնելով հայ մշակույրի բազմադարյան մեծ զանձարանը: Եվ ավելին, փոքր չէ թիվը այսօրվան մեր հայրենի զիտնականներուն և արվեստագետներուն, որոնց գործերը շատոնց անցած են հայ կյանքի սահմանները և զնահատանքին առարկան դարձած մեր օրերու բաղականիցիր ազգերուն: Արհամարենի չէ նաև թիվը հայ զիտուններուն և արվեստագետներուն Սփյուռքի հայության ծոցին մեջ, որոնք հարազատ արտահայտություններ կիսանդիսանան նույն հայ ժողովուրդի տաղականիցիր ազգերուն:

Հայ ժողովուրդը մշակութածին ժողովուրդ եղած է անցյալին մեջ, մշակութածին ժողովուրդ է նաև այսօր: Այս է մեր Ազգի ամենաբռուշ հատկանիշը: Այս իրողության մեջ է մեր ժողովուրդի գորության իմաստը: Այս նշանարարության մեջ է նաև մեր Ազգի ապրելու իրավունքը:

Մենք կիավատանք Սուրբ Մեսրոպին և անոր ժառանգության: Մենք կիավատանք հայ լեզվին ու հայ մշակույրին: Մենք կիավատանք մեր ժողովուրդի ստեղծագործ ուժերուն: Մենք կիավատանք մեր հայութեան նոր կյանքին և նոր արժեքներուն: Մենք կիավատանք մեր Ազգի ապագային: «ՅԱՅՍՈՅ ՀԱԿԱՏՈՅ ԶՄԵԶ ՈՉ ՈՉ ԿԱՐԼ ԽԱԽՏԵԼ»:

Այսօր, Մրցոց Թարգմանչաց տանին, մեր եկեղեցին կտոնե Սուրբ Մեսրոպի ծննդյան 1600-ամյակը: Եվ մենք այսանդ, Օշականի մեջ, Մեծ Վարդապետի իսկ գերեզմանին վրա կառուցված այս տանարի կամարնե-

րուն տակ, հանդիսավոր սույր պատարագի մատուցմամբ կփառավորենք իր պայծառ հիշատակը: Եվ միիրարական է մեզ համար, որ քե՛ մեր Մայր Հայրենիքի և քե՛ Սփյուռքի մեջ պիտի տոնվին և պիտի փառարանվին Մեծն Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը, 1961 թվականը հորելյանական հվիրական տարի ըլլալով մեր ամբողջ ժողովուրդին համար անխտիր:

Մեսրոպ Մաշտոց լուսավորեց համայն Հայ Ազգը և բոլոր ժամանակները: Ուրեմն մեր ժողովուրդը ևս համազգային ցնծուրյամբ ու երախտագիտությամբ պիտի տոնե իր սհանչելազործ Մեծ Վարդապետը:

Օշականի Սուրբը մեզ կլուավորե նաև այսօր, մեզ կզորացնե նաև այսօր, և մեզ


կդարձնե ավելի բան երբեք լավատես ու գոտեպինդ, հայրենի պայծառ արեին տակ: Եվ կյանքի կոռչվի այն ուխտը, զոր կես դար առաջ մեծ բանաստեղծը կկատարեր իր խոսքը հայ ժողովուրդին ուղղելով. «Մենք, ԶԱՎԱԿԱՆԵՐԴ ՕԳՈՍՏԱՓԱՌ, ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՆՈՐ ԱՐՇԱԼՈՒՅՑ»:

Ահավասիկ, մեր Մայր Երկրի հորիզոնին վրա ծագած է նոր արշալույս:

Փա՛ռք Սուրբ Մեսրոպի լույս հիշատակին: Փա՛ռք հայ մշակույրին, փա՛ռք հայերեն լեզվին, փա՛ռք հայ ժողովուրդին:

«ՃՆՈՐՃՔ ԵՒ ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՉԵԶ ԱՅԺՄ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ»:

Ամեն:





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«ԵԿԱՅՔ ՇԻՆԵՍՑՈՒՔ ՍՈՒՐԲ ԶԻՈՆԻՑՆԵ ԼՈՒՄՈՅ»



ոկտեմբեր ամսվա 8—15 օրերը, Մայր Աթոռի և մեր եկեղեցու համար, հանդիսացան հոգևոր ուրախության, միմիքարության պատմական օրեր:

Տոկտեմբերի 8-ին, կիրակի օրը, հանդիսավորությամբ տոնվեց Վեհափառ Հայրապետի զահակալության վեցերորդ տարեդր:

Տոկտեմբերի 14-ին, շաբաթ օրը, Թարգմանիչ վարդապետների տոնին, Օշականում, հայրապետական սուրբ պատարագի մատուցմամբ, ապա Հոգևոր Ճեմարանում գրական-գեղարվեստական երեկոյրով տոնվեց Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 15-ին, կիրակի, հավարտ սուրբ պատարագի, կրոնական արարողակամբ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորաշեն ապարանի պաշտոնական բացումը:

Այս երեք սրտագին տոնախմբությունների և համազգային հանդիսությունների լուսավոր առանցքը, հոգևոր շաղախը ՄԱՅԻ ԱԹՈՌ ՍՈՒՐԲԻ Էջմիածնի ԱՆՈՒՆՆ ՈՒ ԽՈՒՇՈՒՐԴՆ էր:

Հայ ժողովրդի քրիստոնեական լուսավորության և դաստիարակության գործը սկսվել է Ս. Էջմիածնից: Հայ գիրն ու գրականությունը սկիզբ են առնաւմ ե դարից՝ նորից Ս. Էջմիածնից: Հայրենի հողի վրա, Մայր Աթոռի հոգանու տակ է, որ հիմնվել է առաջին տպարանը ԺՇ դարի 70-ական թվականներին:

Վեհափառ Հայրապետի զահակալության վեցերորդ ատեղարձի, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակերտ պապարանի բացման բերկրալի հանդիսությունների մեջ, մեր եկեղեցին և հավատացյալ ժողովությոր մի անգամ ևս միացրել էին իրենց որդիական երախտագիտություններ, սերե ու հավատարմությունը դեպի Ս. Էջմիածնին և նրա արծանավոր Գահակալը, խոհարենով Ս. Էջմիածնի նոգենոր բարձունքից նառագայրող ԼՈՒՅՍԻ եկ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԻ Ա. ՌԱ. Զ:

Վեհափառ Հայրապետի բազմազան գործունեության անցնող վեց տարիները ցույց են տվել արդարութեն, որ այսօր, հաճին Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին ունի իր ՋՈՂՅԱԲԵՐՎՈՂ, ԱԶՆՎԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆԵՐԻ մեկին, որը իր պայծառ մտքով, սրբազն հավատով, իր սուրբ և կատանելի ձեռների մեջ է պահում Հայ Եկեղեցու գերագույն դիկավարությունը և արհարար, իր պատքի խորունկ գիտակցությամբ, իր ուսերի վրա է կրում Ամենայն Հայոց Հայրապետության պատասխանառու լուծը, և այն կրում է խոր լավատեսությամբ ու հավատով դեպի իր ժողովությոր, Հայրենիքը, դեպի եկեղեցին և բովանդակ հայության պայծառ ապագան:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԾՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՏՈՆՆ է Ս. ԷջՄԻԱԾՆԻ ՏՈՆՆ. ՏՈՆՆ է ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱԹՈՌԻ, ՏՈՆԸ ՀԱՅ ՄՏՔԻ եկ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ եկ ՏՈՆԸ Ա. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՄԱՀ ՊՈՐԾԻ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տոնը հշելիս, մատենաճշվում է այն հոգիոր, բարոյական, հայրենասիրական, մշակուրային դերը, որը կատարում է այսօր Ազգի Վեհափառ Հայրապետը նայ կյանքում, կուսափորչի պատմական Արոնի վրա բազմած, Ս. Մեսրոպ Մաշտոցի դրոշակը ձեռքում:

Ս. Մեսրոպ, որի ծննդյան 1600-ամյակն ենք տոնում այս օրերին, ԱնջԱՄԱՔԵԼԻ ՀՈԴԵՎՈՐ, ԻՄԱՅԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԻՐՆ է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ, «գերազանցեալ ժան զամենայն... մտօֆ ծննդական..., բանիք պայծառ» (Խորենացի), «իրով անտարեական և ողջապատում գեացիք» (Կորյուն):

Գրի ու դպրուրյան, լուսավորուրյան և մշակույրի նկատմամբ բաց է եղել նայ ժողովրդի ազատատենչ և լուսարադ հոգին:

Վեհափառ Հայրապետը, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյա հորելյանի առիկ ասված իր պերեմասաս խոսի մեջ, եղան էր. «ԺՈՂՈՎՈՒՐՆԻ ԽՈՍԱԾ ԼԵԶՈՒԻ ՇԱՂԱԽԻՆ ԶԵՎ ԵՎ ԿԱՆՈՆ ՏՎԱԾ ԷՐ ԱՆ, ԿՈՉԵԼՈՎ ՀԱՅՈՒՅ ԼԵԶՈՒՆ ՀԱՎԵՏ ՄՇՏԱՆՈՐԳ ԿՅԱՆՔԻ», «ԲՅՈՒՐԵՂԱՅՆԵԼՈՎ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ ԵՎ ԴԱՐՁՆԵԼՈՎ ԶԱՅՆ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ, ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՅ ՆԱԵՎ ՀԱՅ ՄՏԱՆՈՐԻ ՀՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅ ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՎԱՍԽԻ ՀԱՅՏՆԻ է ՄԵԶԻ ԱՅՅՈՐ, ԹԵ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՄՏԱՆՈՐՄԸ ՄԻԱՏԵղ ԿԱԶԻՆ ՈՒ ՄԻԱՏԵղ ԿՅԱՐԳԱՆԱՆ ԵՎ ԶԻՐԱՐ ԿՊԱՅՄԱՆՆԱՎՈՐԵՆ»:

Արդարեւ, եղում է Վեհափառ Հայրապետը, «սխալ պիտի ըլլար Մեսրոպ Մաշտոցը ճամարի վրա դենել միայն նայ տառերու իր զյուտով և Աստվածաշունչի բարգմանուրյամբ»: Ս. Մեսրոպ բացակա պատվածային իմաստուրյան և մարդկային հանեարի անսպառ աղբյուրները մեր ժողովրդի բոլոր սերունդների համար:

Ս. Մեսրոպ Մաշտոցի «լույս ձեռքերով» հայերենի բարգմանված աստվածաշնչական առաջին հախադասուրյունը՝ «ՃԱՆԱԾԵ, ՃԻՄԱՍՈՒԹԻՒՆ ԵԼ ԶԻՐՄԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆԾ ՀԱՆՃԱՐՈՅ», երբեք պատմականուրյուն չէր: Առակաց զիրքը խառուում էր նանաչել Աստվածային իմաստուրյունը և մարդկային հանեարի գործերը, զիրք, որ սկիզբն է զիտուրյան, առաջադիմուրյան: Ս. Մեսրոպ Մաշտոց աստվածային այդ իմաստուրյան և հանեարի մեջ էր գտնում նայ ժողովրդի կենսունակուրյունը, ուժը, երիտասարդուրյունն ու պարզան:

Մեսրոպյան երկարագրի խորհրդի մեջ, նայ ժողովուրյա վերաբառ եղավ, Կորյունի պատկերավոր բացարուրյամբ, «ԱՄՏՈՒՄ-

ՄԱԴՈՐԾ ՄՔԱՆԶԵԼԱԳՈՐԾՈՒԹՅԱՆՑ» և խորամուս եղավ «ԱՌ ԺԱՄԱՅՑՆ ՎԱՂՎԱՂԱԿԻ ԱՄԵՆԱՅՆ ԻՐԱՅ»:

Ահա այս է Մեսրոպ Մաշտոցի գործի հայերժական նշանակուրյունը:

Եվ ԱՎԵԼԻՆ ՏԱԿԱՎԻՆ, — ասում է Վեհափառ Հայրապետը իր խոսքում, — ՀԱՅ ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԹՈՒՆՔՈՎ ՈՒ ԶԱՐԴԱՅՈՒՄՈՎ, ՏԱԿԱՎ ԱՐԹՆՑԱՆ ՈՒ ԱՃԵՑԱՆ ՀԱՅ ԱԶԳԻ ՀՈԳԵԿԱՆ ԲՈԼՈՐ ԹԱՔՈՒՆ ՈՒԽԵՐԸ ԵՎ ԱՅՍՊԻՍՈՎ ՀԵՏԶԵՆՑԵ ՆՈՐԱՆՈՐ ԿԱՏԱՐՅԱԼ ԶԵՎԵՐ ՄԱՍԱՑԱՆ ՈՒ ԲԱՐՁՐ ԿԱՏԱՐԵՆԵՐՈՒՆԸ, ՀԱՅ ՃԱՐՏԱՐԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԱԺԵՏՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱԿՈՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՅՈՒՄ ԱՐՎԵՏՆԵՐԸ:

ԱՄԵՆ ԻՄԿԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ՄԵՐ ԱՆՅՅԱԼԻՆ ՄԵՋ, ՍԿԻՃՐ ԿԱԾՆԵ Ս. ՄԵՍՐՈՊՈՒ ՏԵՍԻԼՔԵՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԵՆ»:

Դարեւ շարունակ Ս. Էջմիածինն է գլխավորել մեր ժողովրդի հոգեստ-իմացական գործունեալուրյունը:

«Իրոք, մեր օրերուն տպագրված զիրք ու գրականուրյունը ուղիղ շարունակուրյունն են մշակուրային այն մեծ գործին, որուն ճիմր դրին Ս. Մահակ Պարք և Ս. Մեսրոպ Մաշտոց, — գրում է Վեհափառ Հայրապետը Մայր Արոն Ս. Էջմիածինի ապարանի բացման առիկ գրած իր հոկտեմբեր 16 թվակիր սրբատառ կոնդակում:

1666 թվականին, Հակոբ Զուղայեցի կառողիկոսի օրով (1655—1680) Մայր Արոն Ս. Էջմիածինից ուղարկված օրինակի վրա, տպվում էր առաջին նայ Աստվածաշունչը Ամստեղամում:

1771 թվականին Սիմեոն Երևանցի կառողիկոսը (1763—1780) Հայաստանում բաց էր անում առաջին տպարանը Մայր Արոնի հովանու տակ՝ «ամենայն պարագայիք», այն կոչելով նայ ժողովրդի «լուսաւուրյան վերակացու» (Խորենացի) Ս. Գրիգոր Լուսավորչի անունվ:

Դարեւի հոլովուրի մեջ, շարունակվում էր Ս. Մեսրոպի գործը, Մայր Արոնի հովանու տակ:

Եվ դարեւ նետո, 1961 թվականի հոկտեմբերի 15-ին, Վազգեն Ս Ամենայն Հայոց Հայրապետը, իր գահակալուրյան վեցերորդ տարեկարձի բարեբաստիկ առիրով, կատարում էր Մայր Արոնի նոր տպարանի բացումը, տպարան, որը «կոչված է լույսի նոր վառարան մը դառնալ մեր Եկեղեցիի և համայն նայ ժողովուրդի կյանքին մեջ», — ինչպես նշվել է նույն կոնդակում:

Մայր Արոնի նոր տպարանը, որը սրտառու նվերն է բովանդակ Ամերիկայի հայու-

բյան, Վեհափառ Հայրապեաի գաճակալուր-
յան մեծագուծություններից մին պիտի
մեա պատմության մեջ, որպես շարունակու-
թյունը Ս. Մեսրոպի մշակութային մեծ գոր-
ծի:

Որևէ ժողովրդի մեծությունն ու արժանի-
քը չափվում են նրա մշակույթով, գրակա-
նությամբ, արվեստներով, ինչպես նաև նրա
բարոյական, նոգեոր արժանիքներով:

Այդպիսին է նաև մեր ժողովուրդը:
«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ, — պատգամում է
Վեհափառ Հայրապեար, — ՄՇԱԿՈՒԹԱԾԻՆ
ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՂԱԾ է ԱՆՑՅԱԼԻՆ ՄԵԶ, ՄՇԱ-
ԿՈՒԹԱԾԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ է ՆԱԵՎ ԱՅՍՈՐ.
ԱՅՍ է ՄԵՐ ԱՅԳԻ ԱՄԵՆԱԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱ-
ՆԻՇԸ: ԱՅՍ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ է ՄԵՐ ԺՈ-
ՂՈՎՈՒՐԴԻ ԳՈՅՉՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԸ: ԱՅՍ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ է ՆԱԵՎ ՄԵՐ ԱՅԳԻ
ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ:»


Այսօր, երբ նշում ենք Վեհափառ Հայրա-
պեաի գաճակալուրյան վեցերորդ տարե-
դարձը, ոգեկոշում ենք նիշատակը նայ Ճո-
ղովրդի մեծ լուսավորիշ Ս. Մեսրոպի և ու-
րախանամ ենք ազգութին Մայր Արք Ս.
Էջմիածնի հովանու տակ բացված լոյսի
նոր վառարանով, որ տպարանն է, ովհանենք
հավատարիմ մեալ մեր ճախենիքներից մեզ
ժառանգ մեացած հոգեոր, բարոյական, ի-
մացական մեր արժեքներին և ապրեցնել
մեր կյանքի մեջ այն մեծ ԳՈՐԾԸ, որի հա-
մար զիշեցերեկ աշխատեցին, քանեցին,
ու նախախ ճախատակվեցին մեր լուսարձակ
ճախենիքները:

Թող միջոտ պայծառ մեան նայ ժողովրդի
սրտի մեջ՝ լուհանի և որսանը, ՀԱՎԱՏԻ ՀՈՒ-
ՐԸ, ՆԱԽԵՆՅԱՑ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՍԵՐԸ, ՀԱՅ-
ՐԵՆՅԱՑ ՈՒԻՆ, որպեսզի արժանավոր ժա-
ռանգները լինենք մեծ լուսավորչի՝ Ս. Մե-
րոպի ՏԵՍԻՔԻ նվ ԳՈՐԾԸ:





ՑԱՌԱ ՊԵՐԱԳԱՎՈՐ



ՍՈՒՐԲ ՄԵՄՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ
ՀԱԶԱՐՎԵՑՅԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՀՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԱՅՐ ԱԹՋՈՒ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՄՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՅՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին, շաբաթ օրը, Սրբոց Թարգմանչաց վարդապետաց տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետի պլխավորությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, վանքի պաշտոնեալիյունը, արտասահմանյան մի շարք երկրներից ժամանած ուստավորներ, Հայ մտավորականության ներկայացուցիչներ ուստի գնացին Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանին:


Առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Մեծ Սրբի ծննդյան 1600-ամյակի առթիվ, Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում: Սուրբ Մելանին սպասարկում էին գերաշնորհ Տ. Հայկաց և Տ. Կոմիտաս սրբազնները, վար-

դապետներ, քահանա Հայրեր և Մայր Աթոռի սարկավագների խումբը:

Օրվա ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ Օշականում հավաքվել էր ուխտավորների խուռն բազմություն:

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էին Հոգևոր Ճեմարանի սաները: «Հայր մեր»-ից առաջ, Հոգեշնորհ Տ. Գրիգոր արեղա Եղիայանը, ի լուր ժողովրդյան, կարգաց Վեհափառ Հայրապետի օգոստոս 25 թվակիր սրբատառ կոնդակը՝ Հոկտեմբերի 14-ին Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը տոնելու կապակցությամբ:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, իշալ Մեծ Սրբի դամբարանը, աղոթեց, Համբուրեց և ապա բակում, Վահան Ամատունու գերեզմանի վրա «Հոգւոց» արտասանելուց հետո, հանդիսավոր երթով վերադարձավ Մայր Աթոռ:



ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ Է ՕՏԱԿԱԼԻ Ա. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՆԿԵՂԵՑՈՒՄ



ՄԻ ՊԱՀ ՊԱՏԱՐԱԳԻՑ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՐԱՀՈՒՄ

Ժամը 2-ին, Հոգեկոր Ճեմարանի հանդիսարահում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված ընդհանրապես մեր թարգմանիշ վարդապետների հիշատակին և ի մասնավորի թարգմանիշ վարդապետների զլուկա Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին:

Հանդիսությանը ներկա էին Տ. Միոն, Տ. Մահակ, Տ. Հայկազուն, Տ. Եղիկի, Տ. Վարդան, Տ. Կոմիտաս սրբազնները, Գերագույն Հոգեկոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգեկոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, արտասահմանյան ուխտավորներ և մասնավոր հրավիրյալներ:

Հանդիսության ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված գրական-գեղարվեստական երեկոն բացվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագով և Ճեմարանի երգչախմբի կողմից երգված թարգմանչաց վարդապետներին հատուկ «Որք վարդարեցին» շարականով:

Այնուհետև Հոգեկոր Ճեմարանի վերատեսուզ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը հանդես եկավ թարգմանիշ վարդապետների՝ Ս. Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Դրիգոր Նարեկացու և ներսես Կլայհցու խնկելի հիշատակին նվիրված բացման խոսքով:

Գերագույն Հոգեկոր Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանը խոսեց «Մեսրոպ Մաշտոցը որպես գիտնական» թեմայի շուրջ,

իսկ «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը Ս. Մեսրոպին ներկայացրեց որպես ազգային-եկեղեցական գործչի:

Հոգեկոր Ճեմարանի ուսանողությունը իր սըրտագին մասնակցությունը բերեց Ս. Մեսրոպի խնկելի հիշատակին խմբերգերով և արտասանություններով: Երգչախմումբը հաջողությամբ կատարեց Կոմիտասյան «Ով մեծասաքանչ դու լեզու», «Ու լո, սեզ Սիփանա սարին վրա» խմբերգերը, «Նմանեալ Մովսիսի» և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականները: Բ լաւարանի ուսանող Հակոր Պարոնյանը արտասանեց «Գյուտին փառքը» (Սիամանթո), նույն լարանի ուսանող Վումշապուհ Զիհանյանը՝ «Ա թ Գ-ի դասը» (Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան), նաիրի Զարյանի «Հայոց լեզուն» արտասանեց Բ լարանցի Կարապետ Քիրեզյանը, Գ լարանից Կարպիս Սերայտարյանը արտասանեց «Այս քարին վրա» (Ժ. Ավետիսյան), իսկ Թ դասարանցի Ղենդ Վարդանյանը՝ «Ծական»-ը (Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան):

Հոգեկոր Ճեմարանի ուսանողների մանդուինստների խմբակը կատարեց մի շարք կոմիտասյան և ժողովրդական երգեր:

Հանդիսության ժամանակ, ուկտավլորար Մայր Աթոռում գտնվող Հոգեշնորհ Տ. Վազգեն արքեղա Քերիշյանը կարդաց Ս. Մեսրոպին նվիրված իր քերթվածը:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ Մեծ Սրբի և օրվա մշակութային մեծ տոնի հիշատակին նվիրված օրհնության և երախտագիտության խոսքով:

Ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակին նվիրված հանդիսությունը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով և խմբովին երգված «Հայր»-ով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ժամը 4-ին, Հոգեկոր Ճեմարանի սերտողության սրահում, վերատեսչությունը կազմակերպել էր ընդունելություն Ս. Մեսրոպի հիշատակին:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը: Ճաշկերպութին մասնակցում էին բազմաթիվ հրավիրյալներ Մայր Հայրենիքից և արտասահմանից:

Հնդունելության ընթացքում մի անգամ ևս ոգեկոչվեց անմահ հիշատակը Ս. Մեսրոպի մեծ անվան և գործի:

Ս. Մեսրոպ Մաշտոցի գործին և հայ մշակույթին նվիրված ջերմ, հայրենասիրական ճառերով հանդես էկան Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Ազգելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Գերագույն Հռովման Հռովման Ա. Տիրապյանը, պրոֆ. Արշարինին, ճարտարապետ Ռ. Խորայելյանը, բանաստեղծ Պարույր Սևակը և Հոգևոր Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասատու Գրիգոր Գյուլյանը:

Հոգևոր Ճեմարանի դասախոսներ՝ հայոց լեզվի և գրականության դասատու Պարով Շահբաղը և գրաբար լեզվի դասատու Սամվել Անթույանը հանդես էկան Մեծ Մաշտոցին նվիրված գրաբար և աշխարհաբար արտասանություններով:

Մայր Աթոռի սարկավագների խումբը, Հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողապալյանի ղեկավարությամբ, երգերով իր մասնակցությունը բերեց ընդունելության:

Ներկաները հյուրասիրվեցին հայկական թանապուրով և ավանդական հերիսայով։
Սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։





ՀԱՅՐԱԾԱՎՈՐ ՍՈՒՐԵ ՊԱՏԱՐԱԳՅԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐԵՏԱԶԱՐՈՒՄ
ՎԵՃԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Հոկտեմբերի 8-ին, կիրակի օրը, Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ նշվեց Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեղարձը:

Հայրենի աշխարհի ոսկե աշնան գեղեցիկ, պայծառ և ջերմ օրերից մեկն է, սրտերը լիբր հրճվանքով, կենսունակությամբ:

Առավոտ կանուխ, հավատացյալների խմբեր ուստի են գալիս Հայրենի աշխարհի մոտիկ և հեռավոր շրջաններից Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Վանքի շրջափակում տոնական օրերի հանդիսություն և ուրախություն է տիրում:

Մայր Տաճարը զարդարվել է տոնականութեան հանգերը հնչում են հանդիսավոր և վեհական ակնվել է հանդիսավոր սուրբ պատարագը: Օրվա տոնի բարեբաստիկ առթիվ պատարագ է մատուցում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արեգակային թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ս. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, որը եկել է հանուն իր թեմի ժողովրդի և ազգային-եկեղեցական իշխանությանց մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեղարձի հանդիսություններին, իր հետ բերելով նաև իր ժողովրդի հավատարմության, սիրո և երախտագիտության տուրքը առ ոտու Հայրապետական Գահի:

Մայր Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնա-

կան անձնավորություններ, հյուրեր, ուխտավորներ, հրավիրալներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Սիրիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և Ֆրանսիայից: Մայր Տաճարը լիբր է նաև հավատավոր, աղոթանվեր ուխտավորներով:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Տաճար, ուր Մայր Աթոռի երգախումբը, երիտասարդ խմբավար Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ, կատարում է պատարագի երգեցողությունը:

Պատարագի սրբազնը, Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեղարձի առթիվ, «Հայր Մեր»-ից առաջ խոսում է հետևյալ քարոզը:

«Թանգի ի վերայ Աշոյն և էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կապեալ կայ:

Սիրեցյալ և բարեպաշտ ժողովուրդ հայոց: Այսօր հոգեկան մեծ հրճվանքով կտոնախմբենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Նորին Ս. Օծություն Տ. Ս. Վաղգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի հայրապետական օծման և գահակալության երջանիկ տարեղարձը:

Անցյալ վեց տարիներու ընթացքին, շնորհիվ Նորին Ս. Օծության, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերադարձավ իր հին և մեծ փառքը, և հայ հայ ժողովուրդին վերագտավ իր հմայքը և իր վեհությունը, և բովանդակ հայ ժողովուրդը, ցրված ի սփյուռս աշխարհի, սիրով, հուսով և հավատքով իր աշքը դարձուց ղեպի Հայրենի երկիրը և

դեպի Ս. էջմիածնի Մայր Աթոռը։ Շնորհիվ Նորին Ս. Օծության, Մայր Տաճարը վերանորոգվեցավ շքեղորեն։ Վերակառուցվեցան միարանական թաղերը և այսօր հիմնովին վերանորոգության մեջ է նոր Վեհարանը։ Վեհափառ Հայրապետի ջանքերով աշխարհի ամեն կողմեն բարեպաշտ հայեր, սիրով և առատածենությամբ, մասնակցեցան Հայրենի ծրկիր մեր պատմական վանքերու և սրբատեղիներու վերանորոգության նվիրական աշխատանքին։

Ս. էջմիածնի այսօր վերագուած է իր զաղեմի հմայքը և փառքը։ Ու մենք երջանիկ ենք տեսնելով հոգալոր այն վերածնունդը, որ ստեղծված է Մայր Աթոռեն ներս, շնորհիվ Նորին Ս. Օծության ու մասնավորաբար Հոգանոր Ճեմարանի սաներուն ու աշակերաներուն, որոնք կվայեն Վեհափառ Հայրապետի հայրական հոգածությունը, սերը և խնամքը։

Արդարեւ, Ս. էջմիածնի դարերով եղած է հայ ժողովուրդի հավատքի, լուսի փարոս։ Եվ պանդոխուտ հայ ժողովուրդը ցրված է ի սիյուս աշխարհի, իր ակնարկը՝ դարձուցած է դեպի Հայրենի ծրկիր, դեպի սեգ Մասիս, Վեհափառ Արարատը ու Ս. էջմիածնի ննջական որ արևածաղիկը իր դեմքը կդարձնե արևին, անկե ստանալու համար կենսատու ճառագայթներ ապրելու և աճելու համար, նույնպես և Սփյուռքի հայ ժողովուրդը իր աշքն ու ակնարկը դարձուց դեպի Հայրենի ծրկիր, դեպի Ս. էջմիածնի և անկե ստացավ վերանորոգության և կենսունակության ներշնչում և հավատք։ Եվ այսօր, դարեր վեր, Աստուծո ողորմությամբ, Հայրենի ծրկիրն մեջ սկսած է վերածնունդի և վերածնության, ծաղկումի նոր շրջան մը։ Այսօր Հայրենի ծրկիրն մեջ կծաղկի հայ մշակոյթը, այսօր Հայրենի ծրկիրն մեջ մեծ նվաճումներ կատարված են ոչ միայն գեղարվեստի և գրականության մարզերուն մեջ, այլ նաև ճարտարարվեստի և շինարարական մարզերուն մեջ։ Եվ այսօր նույնպես Ս. էջմիածնի, Մայր Աթոռը, հոգանոր վերածնունդի նոր շրջան մը կապրի շնորհիվ մեր առաքինազարդ Վեհափառ Հայրապետին։

Արտասահմանի հայ ժողովուրդը ակնարկը դարձուցած է դեպի Մայր Հայրենիք և Ս. էջմիածնի, որովհետև պատմական ճշշմարտություն է, թե հայ ժողովուրդի արմատները զորավոր տնկված են Հայրենի Շողին մեջ, ինչպես որ ծառ մը չի կրնար ապրիլ առանց արմատներու, նույնպես նաև ժողովուրդի մը չի կրնար ապրիլ առանց Հայրենի ծրկիրի, առանց իր արմատներուն, որոնք տնկված են Հայրենի ծրկիրի մեջ։

Հայկական ծառը, «Սիրանի ծառ»-ը միայն Հայկական Հողի վրա կրուսնի և համեղածաշակ պտուղներ կուտաւ։ Հայ ժողովուրդը ցրված է ի սիյուս աշխարհի, ամեն կողմեն ակնառուց կայի Հայրենի ծրկիրին և Մայր Աթոռ Ս. էջմիածնին։ Կնայի, անկե ստանալու համար հոգեկան սնունդ, ներշնչում և հոգեոր առաջնորդություն։

Մեր ժամանակները այլևս նոր դարերու ժամանակներն են։ Նոր շրջաններու մեջ կապրի բովանդակ մարդկությունը և աշխարհքը, պետք է ըսել, որ հակառակ իր գիտական հառաջդիմությանց, հոգեորարույական տագնապի մեջ կապրի, որովհետև գիտությունը մեծ նվաճումներ կատարած է գիտական մարզերուն մեջ, և ատոմական ուժի ահեղ զորություններու տիրացած է, որոնք կրնան աշխարհքը կործանելց եթե մարդկությունը չկրնա հակաշուղի բնական այդ ուժերը։

Սակայն մենք կհավատանք, թե մարդկությունը բոլոր ուժերը պիտի գործածելիացանության և ժողովուրդներու հառաջդիմության և երջանկության համար։ Նոր ժամանակները նոր պահանջներ և պարտադրություններ կդնեն նաև եկեղեցին վրա։ Մարտահրավեր կա նաև Հայ եկեղեցին։ Արտասահմանի հայությունը հոգեոր առաջնորդություն, ներշնչում և ղեկավարություն կանկալե Մայր Աթոռ Ս. էջմիածնեն։ Եվ մենք ուրախ ենք, որ առաքինազարդ Հայրապետը, գիտակից իր սրբազն և զսեմ պաշտոնին, հայրապետական ցուցը իր ձեռքը առած, այցի երավ իր պանդուխտ զավակներուն, մինչև հեռավոր Ամերիկաները, առաջին անգամ ըլլալով, և տարավ Ս. էջմիածնի լուսը և հավատքը, իր հայրապետական օրհնությունները, և հմայեց ոչ միայն մեր պանդուխտ ժողովուրդը ցըրված ի սիյուս աշխարհի, այլ նաև տեղացի ժողովուրդները, որոնք Անոր մեջ տեսան Քրիստոնեական եկեղեցվո մեծ առաջնորդներն և մեծ հայրապետներն մին, եվ Ան իր անձին հմայքովը, իր խոսքի ազգեցությամբ, իր կարի հայրական նկարագրով, առինքնեց և հմայեց բովանդակ գաղութահայ ժողովուրդը և ահավասիկ այսօր, վեց տարիներ վերց, թե՝ Հայրենի ծրկիրին մեջ և թե՝ արտասահմանի մեջ, բովանդակ հայ ժողովուրդը ցնծությամբ և ուրախությամբ կտոնախմբե նորին Ս. Օծության գահակալության վեցերորդ տարեդրձը։

Եվ կաղոթենք ամենքս միասին բարերարին Աստուծո, որպեսզի երկա՞ր, շա՞տ երկար տարիներ պարզեն նորին Ս. Օծության։ Կաղոթենք ամենքս միասին, որպես-

զի Տեր Աստված անշարժ և անսասան և հաստատուն պահն Մայր Աթոռ Ս. էջմիածինը: Կաղոթենք, որպեսզի Աստված պայծառ և բարեկարդ պահն Հայ Եկեղեցին, Կաղոթենք ամենքս միասին, որպեսզի Աստված երկար կյանք պարզեն մեր Վեհափառ Հայրապետին, որպեսզի Ան երկար տարիներ Հայրապետական իր իմաստությամբ առաջնորդե Հայ Եկեղեցու բանավոր հոտը, ցրված ի սփյուռս աշխարհի Կաղոթենք ամենքս միասին, որպեսզի Աստված բռվանդակ աշխարհին, բոլոր ժողովուրդներուն պարզեն տևական և մնայուն խաղաղություն:

«Ծնորհք, սէր և խաղաղության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամեննեսեանդ: Ամեն»:

Սուրբ պատարագի վերջավորության, Վեհափառ Հայրապետը, ցրջապատված Մայր Աթոռի ողջ միաբանությամբ, իշման Ս. Սեղանի առաջ նախագահում է Հայրապետական մաղթանքին:

Հավարտ սուրբ պատարագի, Նորին Ս. Օծությունը, ամպելվանու տակ, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մաղկյա դահլիճ, իր գահակալության վեցերորդ տարեգարձի առթիվ, ընդունելու իրեն ուղղված սրտագին և շերմ շնորհավորությունները ուրարեմաղթությունները:

Մաղկյա դահլիճում, հանդիսության ժամանակ, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միաբանության և գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ հանուն Հովկոր Շեմարանի, պրոֆետուր. Ա. Առաքելյանը հանուն Գերագույն Հովկուր Խորհրդի և Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիրոսյանը՝ Ռումինիայի և Բուլղարիայի Հայոց երիտասարդ առաջնորդը, հանուն իր թեմի ու ժողովրդի, շերմ և սրտագին խոսքերով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեգարձը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանի և իր անունից, անկեղծ արտահայտություններով շնորհավորում է Վեհափառ Հայրապետի տոնը:

Այսուհետև Վեհափառ Հայրապետը, Մաղկյա դահլիճի Հայրապետական իր Գահի վրայից, տալիս է իր օրհնություններն ու պատգամը իր գահակալության վեցերորդ տարեգարձի առթիվ: Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետի պատգամը ձայնասփուրմ է երեանի ուղիներայանից.

«Անա արդեն վեց տարիներ անցան այն օրեն, երբ ծունկի եկած Փրկչի իշման Ս. Սեղանի առաջ, ծառայության Մեր ուխտը կատարեցինք և աղոթեցինք, որ Տեր Մեր տկար ուժերը անեցնե, և առաջնորդի Մեր բայերը՝ ի շինուարյան մեր Ս. Եկեղեցվու և ի միխրաբության մեր հավատացյալ ծողովուրդին:

Մենք երջանիկ ենք, որ այս վեց տարիներու ընթացքին, նպաստավոր պայմաններ ստեղծվեցան Մեր շուրջ, և Մենք, Մեր գործակիցներու հետ միասին, կառողացանք կենսագործել Մեր ծրագիրները նովեր, ազգային և շինարարական աշխատանքներու ուղղությամբ:

Այս առքիվ, առաջին ներքին Մեր երախտագիտությունը պետք է հայտնենք մեր Մայր Հայրենիքի պետական իշխանությանը, որոնց լայն բարյացակամուրյունը վայելեցինք միշտ, Մեր գործունեության ընթացքին: Մեր սրտեն բխած ամենաջերմ աղոքն է, որ զեն ու բարօր մեան մեր վերածնած երկիրը և մեր հարազատ ծողովուրդը, որ անոնք գորանան ու ծաղկին, մեր հայրենի կառավարության ազգանվեց դեկալարության ներքին, խաղաղության մեջ:

Արդարեւ խաղաղությունը կենսական պայման է նաև Հայ Հայրենիքի և նայ ծողովուրդի կյանքին և երջանկության համար: Այս տարի հունիսին, Երբ Պարագայի Համարեկիստեական համաշխարհային համաժողովությունը Մեր խոսքը բախնել հօգուտ աշխարհին խաղաղության և ընդհանուր զինաքայլման, Մենք ավելի հայ երեք խոր զգացումը ապրեցանք, թե իրօք որ Մեր խոսքը կրիսեր համայն հայ ծողովուրդի սրտեն:

Մենք, մեր Եկեղեցին, մեր ժողովուրդը միշտ և անդադար պիտի աղոքենք և պիտի աշխատինք, որ ամեն անդ բարձր և հզոր հենչ խաղաղության երկնառակ պատգամը:

Մեր շնորհակալությունը նաև Մայր Աթոռու Կերպույն Հովկուր Խորհուրդին, միարանության և պաշտօնենության, որոնք ախվ և գիշեր, իրենց նվիրված աշխատանքներ, թե ու թիկունք կիանդիսանան Մեզի, Մեր ծրագիրներու և առաջարարանքներու իրականացման նաևապարհին վրա:

Գոյնունակության և երախտագիտության անկեղծ խոսք կուղյենք նաև մեր նվիրապետական բոլոր Աթոռենքներուն, մեր բոլոր թեմակալ առաջնորդներուն, արտասահմանի մեր ազգային-Եկեղեցական իշխանությանց, Մայր Աթոռի նվիրատուներուն և համայն մեր հավատացյալ ծողովուրդին, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որոնք բոլոր իրենց սիրով և հավատարմությամբ դիպի Ս. էջմիածին, անվերապահութենք Մեր կողին են և իրենց կենդանի խոսով և



գործով, և իրենց լումաներով կաստարեն Մայր Արոռ Ս. էջմիածնի և Հայաստանի սրբավայրերու վերաշինության սուրբ գործին:

Ստեղծված այս բարի պայմանները և իրողությունները և այս վեց տարիներու ընթացքին ձեռք բերված արդյունքները զՄեզ խորապես կմխիրաբեն և Մեզ եռու եռանդ ու նոր հույս կենցնչեն դեպի. մեր Եկեղեցին ու Ազգին ապագան:

Մեր Ազգի և Մեր Ս. Եկեղեցին ապագան, այո՛, Մենք կտեսնենք ապահով և լուսավոր: Եվ ինչո՞ւ այդպիս պիտի շրլար, ժանի որ այստեղ Մենք կանգնած ենք Մեր Մայր Երկրի հողին վրա, Երկնազարամյա աստվածակառույց այս կամարեներուն ներքև, մեր միակամ ու ինքնամարտ ժողովուրդի հետ միատեղ, որ կապրի, կանի ու կենառազդիմ հայոց վառ ու կենաստու արեին տակ, խաղաղ ու Եղածիկ:

Մենք ամենաբախտավոր հայրապետներեն մենք ենք, որ մեր օրերան կտեսնենք նիստամի արժանի նվաճումները մեր ժողովուրդին և զմայիլի վերելքը մեր վերածնած Հայրենիքին, որուն բառասեամյակը այնքան փառավոր կերպով, այնքան արդար հպատակով և այնքան վառ հույսերով տոնեց հայ ժողովուրդը անցյալ մայիսին:

Մեր լավատեսությունը կրիսի մեր օրերու այս ճշմարտի իրադարձություններ, որ ոչ պատրանք է, ոչ երազ, և ոչ ալ ուկ կարծիք:

Եվ տակավին ավելին, իրենց սուրբ հավատով և իրենց սրբով Մեր կողին են նաև մեր Եկեղեցին վրայ ուխտապահ սպասվությունները և բոլոր Մեր հոգերու զավակները ամբողջ աշխարհի մեջ, Ս. էջմիածնի օրենուրյան ներքև:

Հայ ժողովուրդի զանգվածները, որ որ այ գտնվին անոնք աշխարհի վրա, իրենց հայացքը հառած կպանեն դեպի Քրիստոսակերտ Մայր Արոռը ամենայն հայոց, դեպի հրաշագործ Արոռը Ս. Լուսավորչի: Եվ այս՝ ավելի բան հազար և վեց հարյուր տարիներ ի վեր:

Ժամանակները կփոխվին, կփոխվին կյանքի պայմանները, մարդիկ և սերունդներ շարան-շարան կուգան ու կերպան, սակայն հայ կյանքի մեջ կմնան մեկ, անսասանելի և փրկարար ոգեկան ճշմարտություն, որ իրը լուսատու շահ կփոխանցվի սերունդե սերունդ:

Մեր կյանքի այդ մեծ ճշմարտությունը՝ հայ հավատացյալ ժողովուրդի սուրբ հավատին և հավատարմությունը դեպի ամենայն հայոց Ս. էջմիածնի: Այս ճշմարտության լոյսին տակ է որ ապրած է, կապրի և պիտի ապրի Հայաստանյաց Ս. Եկեղեցին:

Այս ոգեկան ճշմարտությունը անզամ մը ևս խորապես զգացիկ և Մեր աշխերով տեսանք և կարծեք Մեր ձեռքերով իսկ շոշափեցիկ, իրեւ Եյուրականացած իրականություն, անցյալ հոգին ամսին, Ստամբուլի Հայ Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովին մեջ, որ կգտնվինք, ինչպես զիտեք, շատ տխուր առիրով մը:

Միայն անոնք, որ այդ օրերուն այսուղե գտնվեցան, զիտեք, թե ինչ պատահեցալ Ռուփորի ափերուն, հայոց սրտերու աշխարհներ և ներւ: Գուց ավելի բան երբեք հայությունը, իր հրաշալի ձևերուն մեջ, հայ հավատին ճշմարտությունը, հայոց հավատամուրյան ճշմարտությունը դեպի Ս. էջմիածնի:

Այդ ճշմարտության գրուրյան և տևականության մեջ է հայ ժողովուրդի կյանքի գաղտնիքը, և ապագայի բոլոր մեր հոգին իրականացման գրավականը: Հետերար, անա թե ինչո՞ւ արդարացի է Մեր լավատեսությունը, անա թե ինչո՞ւ իզուր չեն Մեր Եկեղեցը՝ վերաշինելու և ծաղկեցնելու մեր Մրություն Մրոց էջմիածնին, և իզուր չէ Մեր աշխատանքը՝ Ս. էջմիածնի լոյսը տանելու և բաշխելու բոլոր հայերուն:

Միրելի՝ հավատացյալներ Մեր, որ որ ալ գտնվիք, բացե՛ Ձեր հոգիները այդ լոյսին առջև, Ս. էջմիածնի աստվածային լոյսին առջև, և բազ գիտցեք, թե այլպես և միայն այլպես է, որ պիտի զորանակ և պիտի ապրիք, մանավանդ հետավոր աստղերու տակ:

Ինչպես Մեր Երշանկահիշատակ հախորդները, այնպես և Մենք կրղմանք և պատվեր կուտանք Ձեզի բոլորիդ, սիրեցյալ զավակներ Մեր որ ի սփյուս աշխարհի, որ ամառ փարած մեսք Ձեր հախնյաց սուրբ հավատին, և հավատարիմ՝ այդ սուրբ հավատի աղբյուր, աստվածապարզել, սրբազնատուր և հայերժական Ս. էջմիածնին:

Մենք կրղմանք և նոյն չերմուրյամբ պատվեր կուտանք նաև Ձեզի բոլորիդ, որ մեսք պարկեշտ, օրինապահ և շինարար բաղադրյունները Ձեր Երկիրեներուն, առանց երբեք առիք տալու, որ ձեր Եկեղեցին և ձեր համայնքային ազգային կյանքին վրա ունետ սուվերին իշնե այդ տեսակետնե:

Մեր սիրուր վշտով կեցըլի, Երբ արտասահմանյան մամուկեն կտեղեկանանք, թե նման Երևանիներ կրցւուրվին Երբեմն, Երբ մեր Ազգին զավակներեն ոմանք, այս կամ այն հյուրընկալ Երկրին մեջ, անհեռատես և անպատասխանատու արարքեներ կգրցեն, Հայ Եկեղեցին և հայ համայնքին վրա իրավիրելով տվյալ Երկրի ժողովուրդի և իշխանության դժգոհությունը:

Արտասահմանի մեջ Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը պետք է հեռու մնան միջազգա-

յին բաղաբական կյանքի ոլորտներեն և ապրին իրեւ կրոնական համայնքներ և գրադին իրենց հոգեւոր և մշակուրային ներքին հարցերով միայն:

Մասցածք ուժերու զուր վատնում է, ինչնախարեւորյուն և մանավանդ վտաճագլոր և վնասարեր, թե՛ մեր նկեղեցին և թե՛ մեր Ազգին համար:

Անցյալի դառն փորձությունները կիուրին քը բավական են այլևս, որպեսզի մեր ժողովութիւն զավակները ըլլան ավելի իմաստուն, ավելի շրջանայց և ավելի նեռատես:

Յավով պետք է համատեսնեն, թե սփյուռքանայ կյանքի և նկեղեցվա ծոցին մեջ բացված փորձիկ նեղեղածքը ևս, առիր տվալու որոշ անկարգություններու և վտաճոռող երեխույթներու, որոշ հայ զաղութերու մեջ: Մեզ և բոլորին ծանոր են այն միջոցները, որոնցով Անքիլիսախ շուրջ խմբված ուղեկարույսներ փորձեցին Մայր Արոռ Ս. էջմիածննեն բաժնել Հունաստանի և Պարսկաստանի Մեր հավատացյալ և Մեզի հավատարիմ ժողովությունը:

Մեզ ծանոր է նաև տիուր և վտաճագլոր գործունեությունը մանավանդ Պարսկաստանի մեջ գործող Անքիլիսան ուղարկված ինչնակոչ ժանի մը հոգեւորականներու:

Տանն Կիլիկիո անունով գործող՝ Անքիլիսախ Արոռին պարտադրված է տիուր դեր մը, զաղութահայ նկեղեցական կյանքին մեջ, այն է՝ հայ հավատացյալ ժողովությոր արվեստական և բռնի կերպով նեռու պահել իր հայալու կեղրոն Ս. էջմիածննեն և նույնիսկ ատել զայն:

Այս բոլոր վատաճոռոջ ու եկեղեցաքանի երևոյթները արդյունք են միենալու մոլորություններուն, անպատասխանատու կերպով միշազգային բաղաբական կյանքի ոլորտներուն մեջ խաղեր կատարելու միենալու փորձերով, որոնք հայ կյանքի տեսակետն բացարձակապես զուրկ են որևէ արժեք և որևէ իմաստ, այլ մանավանդ վնասարեր են և վտաճագլոր:

Բարերախտարար այդ բոլոր մասնակի երևոյթներ են, որոնք բնավ չեն համապատասխաներ բուն Հայ նկեղեցվոր և հայ ժողովութիւն նշմարիտ մտածումներուն և զգացումներուն:

Հայ ժողովությոր ամեն երկրի մեջ կարգապահ է, զնամնաված և շինարար տարը մը է, իսկ Հայ եկեղեցին հզոր և բարի այն ազդակն է, որ կերաշիավորե այս երջանիկ իրադրությունը:

Անա թե ինչո՞ւ անհրաժեշտ է, որ վերջ զանն անշատումները և հակամարտությունները սփյուռքահայ նկեղեցական կյանքին մեջ: Անա թե ինչո՞ւ անհրաժեշտ է, որ Անքիլիսա վերջ տա իր ներձագածողական բերաց-

ին և դառնա Հայոց Ս. նկեղեցվոր միուրյան մեջ, իր պատմական բայոր իրավասություններով: Ուրիշ հանապարհ չկա նշմարիտ հայ հոգեւորականի համար, նշմարիտ հայ մարդու դու համար:

Մեր գահակալության վեցերորդ տարեդր Մենք կողջունենք լավատեսությամբ և հավատքով լեցուն դեպի մեր ապագան, և անգամ մը ևս կոչ կրնենք համայն մեր հավատացյալներուն, որ մեան հավատարիմ մեր սուրբ հավատքին և ավանդություններուն, մեան հավատարիմ ամենայն հայոց լուս խորան Ս. էջմիածնին, մեան հավատարիմ Հայ նկեղեցվոր միուրյան կանոնին:

Այս է նշմարտության հանապարհը, այս է փրկության հանապարհը, այս է եկեղեցաշնեն հանապարհը: Այս է մեր հանապարհը:

Միւրիներ և հարազատներ Մեր, այս պատմական ծաղկյա դահլիճի կամարներուն ներմէ, մեր սրտերը բաղրուրեն հուզված են բացառիկ խոր ուրախությամբ մը, վասնզի ահա ժանի մը օրեն կպատրաստվինք տռնելու Ս. Մեսրոպ Մեծ Վարդապետի ծննդյան 1600-ամյակը, իսկ հաջորդ օրը հանդիսավոր բացումը պիտի կատարենք Մայր Արոռի նորաշնեն տպարանին: Պատմական բացառիկ հանդիսություններ, որոնց հախատոնակը հանդիսացած մեր այսօրվան հավաքույրը, մեր գործունեության վեցերորդ տարեդրի առթիվ: Առանձնապես Մենք շատ երջանիկ ենք և գործություն կուտանք Աստուծու այս զուգադիպության համար:

Գոտեանդիված այս մտածումներով և զգացումներով, այսօր, Մեր գահակալության օրեն վեց տարի նետո, Մենք հավատացյալ մեր ժողովութիւն կխսուտանանք առավել եռանդով և առավել նվիրումով աշխատիլ ու տիգիլ մեր Ս. նկեղեցվոր զորացման, միուրյան և Մայր Արոռ Ս. էջմիածնի ամբողջական վերաշինության և փառակորման համար:

Թող Աստված եր օրինությամբ անփորձ և ծաղկյալ պահն պահպանե Հայաստանյաց Առաքելական Ս. նկեղեցին և մեր հավատացյալ ժողովությորը:

Թող Աստված շեն և անսասան պահն մեր նկեղեցվոր աստվածադիր զլուխ Մայր Արոռը, Տանն Կիլիկիո Կարողիկոսական Արոռը, ինչպես և Պատրիարքական Արոռները հայոց ի Ս. Երուաղիմ և ի Կոստանդնոպոլիս:

«Եկ ինքն Տէր ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՑ ԶԵՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՅԱՄԵՆԱՅՆ ԻՐՍ» և «ՄԻՒԻԹԱՐԵՍՑ ԶՍԻՐԾՍ ԶԵՐ, ԵՒ ՀԱՄԵՆԱՅՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԲԱՆՍ ԵՒ ԳՈՐԾՍ ԲԱԼՐՈՒԹԵԱՆ» (Բ Թեսաղ. Բ 16, Գ 16):

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԽՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Եղիցին ԸՆԴ ԶԵՐ, ԱՅՃՄ ԵՒ ՄԻՇՏ»:

Ամենք:

Վեհափառ Հայրապետի պատգամը ունկնդրվեց խորին հարգանքով և զերմորեն։ Երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանի վերանորոգված շքեղ հանդիսասրահում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը կազմակերպել էր ընդունելություն, որին ներկա եղան մոտ 120 հրավիրյաններ։

Ընդունելության ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայեկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Վարպետ Մարտիրոս Սարյանը, բազմաթիվ մտավորականներ և այլ հրավիրյալներ։

Ընդունելության ներկա էին նաև բազմաթիվ ուխտավորներ արտասահմանյան միշտը երկրներից։

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Մայր Հողի բարիքներով բեռնավորված սեղանների շուրջ ստեղծվեց խանդավառ, հայրենասիրական մթնոլորտ։

Վեհափառ Հայրապետի գահակալության տոնը մի անգամ ևս վերածվեց հայ հավատավոր ժողովրդի դեպի իր Մայր Աթոռ Ս. էջմիածինը և դեպի Հայրենիքը ունեցած սիրո, երախտագիտության և դեպի Ս. էջմիածնի արժանավոր Գահակալը ունեցած հավատարմության և որդիական հարգանքի արտահայտության վառ ապացույցի։ Մայր Աթոռ Ս. էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռն ու Աթոռակալը, Գահը և Գա-

հակալը միշտ հայ ժողովրդի զգացմունքների առաջ միաձուլվել ու կազմել են մի սրբառուզ ամրողություն, մի անսպառ աղբյուր ազգային-եկեղեցական արժանապատվության, հայրենասիրության, ներշնչման ու կորովի, «Քե պարծի այսօր Ս. Եկեղեցի»։ Ս. էջմիածնով է հպարտանում ամեն մի հայ մարդ։

Սեղանի շուրջ հավուր պատշաճի խոսքերով հանդես եկան գեռաշնորհ Տ. Սիոն, Տ. Սահակ, Տ. Հայկազուն արքեպիսկոպոսները, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայեկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Սուրեն Հովհաննիսյանը, պր. Վարդան Բարակյանը (Արգենտինայից), պր. Ա. Գալստյանը (Լուս-Անջելոսից) և ուրիշներ։

Հոգևոր Ճեմարանի ուսանողները, իրենց արտասանություններով և խմբերգերով, շերմ, խանդավառ մթնոլորտ ստեղծեցին։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնեց իր զահակալության առթիվ արտահայտված համազգային անկեղծ և զերմագին զգացմունքների համար, օրհնեց Հայաստանյաց Եկեղեցին, հայրենի պետությունն ու հայ ժողովրդին։

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով վերջ գտավ ընդունելությունը։





ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆՈՐԱՇԵՆ ՏՊԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 15-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հանդիսավոր իրադրության մեջ, կատարվեց Մայր Աթոռ Ս. էջմիածնի նորաշեն տպարանի պաշտոնական բացումը:

Օրվա հանդիսության առիթով, առավոտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում հպիսկոպոսական սուրբ պատարագ մատուցեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազնը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիլ սրբազնը ընթերցեց Վեհափառ Հայրապետի հոկտեմբեր 16 թվակիր սրբատառ կոնդակը, որը տպագրվել է «էջմիածնի» ամսագրի առաջին էջում, ի լուր ժողովրդյան:

Սուրբ պատարագին ներկա էին Սփյուռքի մի շարք երկրներից ուխտավորների:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց նոր տպարանի շենքը, որը գտնվում է վանքի արևելյան դարրասի ձախակողմում:

Վեհափառ Հայրապետը հանդիսավորությամբ կտրում է տպարանի մուտքի ժամանակները և խանդավառ ժամանակները:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում են գերաշնորհ Տ. Սիոն, Տ. Հայկազուն, Տ. Սահակ, Տ. Եղիկի, Տ. Կարգան, Տ. Կոմիտաս սրբազնները, Գերագոյն Հոգևոր Խորհրդի և Վեհափառի հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Ճեմարանի դասախոսները և ուսանողները, ուխտավորներ և խուռն բաղմություն:

Հանդիսության ներկա են նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայեկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Հայաստանի Պոլիգրաֆ վարչության պետի տեղակալ Զ. Մարուխյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տպարանի ղիբեկտոր Մ. Մինասյանը:

Տպարանի երկրորդ հարկում, հանդիսարանում, տեղի է ունենում տպարանի բացման նվիրված հանդիսավոր նիստը:

Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է «Այսօր երկնայինքն ուրախացան» և «Էջ Միածնն ի Զօրէ» շարականները:

Գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազնը կարդում է Սերմնացանի առակը Մատթեոսի Ավետարանից:

«Օրհնեսցի և նախախնամեալ պահեսցի նոր տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի» տյառնագրում է և օրհնում Վեհափառ Հայրապետը այն պատմական ոսկյա խաչով, որով 1771 թվականին Սիմեոն Երևանցի կաթողիկոսը օրհնել է Մայր Աթոռի առաջին տպարանը:

Ի՞նչ երջանիկ զուգադիպություն:

Վեհափառ Հայրապետը նույն խաչով 1961 թվականի հոկտեմբերի 15-ին օրհնում է Մայր Աթոռի նոր տպարանը:

Այսուհետև գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը, հանուն իր թեմի ժողովրդի և ազգային-եկեղեցական իշխանությանց, հանդես է դալիս Հետեյալ հուզիլ և զերմ ճառով.

«Այսօր հրճվանքի օր մըն է ու միայն Մայր Աթոռո միաբանության ու Վեհափառ Հայրապետին, այլ նաև մեզի ու ամերիկահայության համար» Այսօր մեր սիրեցյալ ու շնորհազարդ Հայրապետը բացումը կկատարել Ս. էջմիածնի տպարանի նոր շրջանի գործունեության։ Հետ այսորիկ Մայր Աթոռո տպագրական մամուլը պիտի գործի անդուզ, մեքենաները պիտի ճոնչեն ու մեսրոպատառ գիրերով պիտի տպագրեն մեր դասական մատենագիրները, Աստվածաշունչ Ս. Մատյանը ու մեր կրոնական-եկեղեցական ճոխ գրականության գանձերը։

մատչելի եղան հասարակ ժողովուրդին, երբ գրոց համամարդկային սիրո և եղբայրության գաղափարներով ներշնչված գրականությունը մուտք գործեց ժողովուրդի խավերեն ներս՝ իրեկ լուսավորության և դաստիարակության մեծագույն միջոցներեն մին։

Տպագրության գյուտեն առաջ ե—ժե դար, հայ վանականներ, մեր մեծ ու նշանավոր վանքերու մութ ու խոնավ խուցերում մեջ, աշքի լույս սպառելով, ընդօրինակած են Ս. Գիրքն ու մեր դասական մատենագիրները, կորուատե փրկելով մեր հոգեւոր ու իմացական գանձերը և զանոնք փոխանցելով ասլա-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՅՈՒԹԵՐԸ ՏՊԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԱԽԱԶ

Տպագրական մամուլը քաղաքակրթության մեծագույն ազդակներեն մին եղած է այն օրեն ի վեր, երբ Գյութենբերգի հրաշալի գյուտով, մարդկության իմացական գանձերը՝ գրական գլուխ-գործոցները, որոնք ձեռնադիր և հազվագյուտ ըլլալով փոքրամասնության մը՝ բարձր դասուն ու պաշտոնական անձնավորությանց՝ մատչելի էին միայն, սեփականություն դարձան ժողովրդյան մեծ զանգվածներու, երբ դասական մեծ գործեր, կրոնական, գրական, գեղարվեստական ու գիտական մարզերու մեջ,

գա սերունդներուն, հակառակ ասպատակող ազգերու կողմե կորուատի մատնված բազում ձեռագիր մատյաններու անհետացումին։


Տպագրության գյուտեն վերջ, հայ ժողովուրդը առաջիններեն եղավ զայն որդեպերելու և Վեհափառիկի մեջ տպագրվեցավ առաջին հայ գիրքը՝ «Պարզատումար», 1512-ին։ Հետ այնորիկ Մեղավոր Հակոբի և ուրիշ հայ տպագրիչներու շնորհիվ հայ տպագրաններ հիմնվեցան Ամստերդամի մեջ, ուր Պոկան վարդապետ առաջին անգամ տպագրեց Աստվածաշունչ մատյանը՝ պատկերազարդ, 1666

թվականին, ապա Մարսել, Կոստանդնուպոլիս, Իզմիր, Ս. Երուսաղեմ, իսկ Ս. էջմիածնի տապարանը հաստատվեցավ 1771 թվականին, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ձեռքով։

Մայր Աթոռը, իրեն Հայ Եկեղեցվո բարձրագույն ու նվիրական կեղրոն, պետք է ըլլանակ մեր կրոնական մշակութիւ վառարանը, մեր հոգևոր գրականության կեղրոնը և զեկավարե մեր եկեղեցական մշակութը։

Տարակույս չկա, թե ամենուս փափագն է, որ Ս. էջմիածնի տապարանի առաջին հրատարակությունը պետք է ըլլա մեր ոսկեղեն դարու գրականության մայրն ու գլուխ-գործոցը։

Նացի, Մանդակունի, Հովհաննես իմաստասեր Օձնեցի, Նարեկացի, Շնորհալի և ուրիշներ իրենց ամբողջական գործերով նույնպես տպագրության կարոտ են մեր ժամապաշտական ու եկեղեցագիտական մատյանները։ Վեհափա՛ռ Տեր, Ամերիկայի մեր թեմի ժողովուրդը, գիտակից Մայր Աթոռու կատարած ու կատարելիք մեծ դերին, պահելու համար աշխարհի հայության ազգային-եկեղեցական գոյությունը և ազգային ոգին ու հայտիպ նկարագիրը, սիրով հանձն առած էր հոգալ նյութական միջոցները, Ս. էջմիածնի օժտելու համար արդիական տպագրական



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԽՈՍՈՒՄ Է ՏՊԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱԼԹԻԿԸ

Աստվածաշունչ Ս. Մատյանը, մեր գասական գրականության անզուղական գանձը, Սահակ-Մեսրոպյան ոսկի թարգմանության հարազատ բնագրի բուն օրինակին վրայեն։ Իրավամբ ան օտարներին իսկ կոչված է «Թագուհի թարգմանությանց»։ Այս առաջին տպագրությունը պետք է ըլլա լրիվ և ամբողջական, վասնզի անպաշտոն հրատարակությանց մեջ կպակսին կարևոր գրքեր, որոնք Ս. Գրոց կանոնին համաձայն, միշտ մաս կազմած են Աստվածաշունչին։ Ապա Ոսկեդարու մեր դասական գրականության գլուխ-գործոցները՝ Կորյուն, Եղիկ, Եղիշե, Խորե-

մեքենաներով ու մամուլով։ Այս մեր թեմի էջմիածնասեր ու հավատարիմ ժողովուրդի որդիական սրտագին նվերն է Մայր Աթոռին։ Ու մենք հանճունս կը ճշվինք, որ մեզի կվիճակի, հանուն մեր թեմի պաշտոնական մարմիններու, թեմական խորհուրդին, Տպարանի հանգանակիլ հանձնախումբին՝ ատենապետությամբ պր. Ե. Աղաճանյանի, թեմական խորհուրդի նախկին ատենապետին, ու մեր բոլանդակ ժողովուրդին, խոնարհաբար ու սիրով ընծայել Զերդ Ս. Օծության իրեն տրիտուր որդիական սիրո և հարգանաց, իրեն նշան հավատարմության ու մե-


ծարանաց՝ հանդեպ Մայր Աթոռ Ս. էջմիածնի և Զերդ Սրբության:

Կմաղթենք, որ տպագրական այս արդիական մամուլը իր օֆսետ մեքենաներով, ֆոտո-փորագրող-ցինկոգրաֆ գործիքներով, ծալիչ, կտրիչ և կարիչ մեքենաներով՝ կրոնական գրականության նոր շրջան մը բանա Մայր Աթոռին ներս մասնավորաբար և Հայ եկեղեցվոր կյանքին մեջ ընդհանարապես:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, հանուն Խորհրդի, շնորհավորում է Վեհափառ

Հայրապետի և Հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքների թարգմանը հանդիսանալ հայրենի կառավարության վարչապետ, շատ հարգելի պր. Քոչինյանի մոտ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հայրական իր ողջույնն ու օրհնությունն է հաղորդում ԱՄՆ-ի Հայ ժողովրդին Սիոն արքեպիսկոպոսի միջոցով, օրհնելով տպարանի հանգանակից մարմնի անդամներին և նրա անխոնջ նախագահ պր. Երվանդ Աղաճանյանի եկեղեցանվեր աշխատանքը: Վեհափառ Հայրապետը, առանձին ջերմությամբ, իր գոհունակությունն է հայտնում տպարանի կազ-



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

Հայրապետին Մայր Աթոռի նոր տպարանի բացման ուրախ առիթով:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, հայտնելով իր սրտագին երախտագիտությունն ու շնորհակալությունը հայրենի բարեխնամ կառավարության, որի բարոյական ազակցության շնորհիվ կարելի եղավ տպարանի նոր շենքի կառուցումը, տպագրական մեքենաների առանց մաքսի ներածումը և Մայր Աթոռի նոր տպարանի բացումը: Վեհափառ Հայրապետը խնդրում է հայրենի կառավարության ներկայացուցիչ պր. Ս. Հովհաննիսյանին՝ Ամենայն Հայոց

մակերպիչներին, շենքի կառուցողներին, բանվորներին և վարպետներին:

Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ-ով վերջանում է տպարանի բացման արարողությունը»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելում է տպարանի բոլոր բաժինները, որտեղ մեքենաների մասին բացատրություններ է տալիս Մայր Աթոռի տպարանի կազմակերպիչ ինժեներ Աշոտ Մատինյանը:

Որպես առաջին նախափորձ և տպարանի բացման ակտ, տպագրվում է հետեւյալ պատմական փաստաթուղթը:

0.9980 ՎԵՀՈՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏ ԿԱՐԵ ՍԱԲՐ ԱՌՈՒԹՅՈՒՆ
 S. S. Գ. 0. Զ. Գ. Ե. Ա. Ա. ՄԵԽԵՅԻՆ ՀԱՅԱՅ ԿՈՓՈՎԴԻՎՈՒԲ ԲԱՐՁՐ
 ԿՈԽՈՎՈՀՈՎՅԱՄՐ, ԱՅԱՋՐ, ԿՐԻՋԻ, 1961 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅ-
 ՏԵՄԵՐԵՐԻ 15-ԻՆ, ՍԱԲՐ ՄԵԽՈՎ ՄԱԿԱՅՅ ՄԱՅԻՆՅԱ, 1660-
 ԱՄՅԱՄԻ ՏՈՒԽ, ՀԱՅԻՖՈՎԸՐ ԻՐԱՎՐԻՎՅԱՅ ՄԵԶ ԿՈ-
 ՏՈՐԳԵՑ ՊՈԵՏՈԽՈԽԱ, ԲԱՅՈՒՄՐ ՄՈՅՅ ԱԹՈՒ ԱՆՔ-
 ԷԽՄԻԱԾԻ ՆՈՐԱՇԵՆ ՏՊՈՐԱՅ, ԲԳՈՅԱՇԵՐ 0.9980 ՀԱՅԱՅ

ՍՈՒՅՆ ՀԱՅԻՄՈՒԹՅԱՅ ԵԵՐԱԿ, ԵԳՈՅԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ-
 ՆԵՍԻՐԵՐԻ ՍՈՎԵՏԻ Ա.Ո.ԲԵԹԵՐ ՀՈՅ ԵԳԵՎԵՅՑՈՒ ԳՈՐԾԵՐ-
 ԽՈՐՃՐԻ ԽՈԽՈՎՈՀ ՏԵՎԱԿՈՅ, ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵԼՅՈՅԻ.
 ՏՊՈՐԱՅԻ ՆՎԻՐՈՍՈՒ Ա.ՄԵՐԻՎՈՀԱՅ ԺՈՂՈՎՐԻ Ա.ԽՈՎՅԱՆԻ-
 ԿԵՐՈՇԵՐՀ Տ. ՄԻՌԱ ԱՐՔԵՓՈԽՈՎՈԽՈ ՄԱՅՈՎՅՅՈՅԻ. ԳԵՐԱ-
 ԴԻՈՅՆ ՀՈՎԵՎՈՐ ԽՈՐՃՐԻ ԵՎ ՄՈՅՐ Ա.ԹՈՒԻ ՌԵՎՈՎՈՒԹՅՈՒՆ-
 ԱՆՔՈՄԵՐԻ, ՀՈՅ ՄՏՈՎՈՎՈԽՈՅԻՎՅԱՅ ԵԵՐԱՅՈՅԱՅԵԶ-
 ԵԵՐ ԵՎ ԲԱՅՈՒՄՐ, ԱԲԵՏՈՎՈՐԵՐ ՄՈՅՐ ՀԱՅՐԵՎԵՐԵՎ ԵՎ
 ԱՓՅՈՒԹԻՎՅ.


ՄԱՅՐ Ա. ԲԻ Ա. Ա. Խ. Ի. Պ. Ա. Խ. Ի. Ա. Խ.

15 Խորագիր 1961 թ.

Ժամը 5-ին, Վեհարանի սեղանատանը,
 տրվում է ընդունելություն Մայր Աթոռի
 տպարանի բացման առթիվ:

Հոկտեմբերի 14 և 15 օրերը Մայր Աթոռի
 համար եղան հոգևոր ուրախության և մխի-
 թարության անմոռանալի օրեր՝ հորելլանա-
 կան այս հանդիսությունների առթիվ:

Թող Տեր Աստված հաստատուն պահի
 Մայր Աթոռ Ս. էջմիածինը և Վեհափառ Հայ-
 րապետին շնորհի երկար, քաշառողջ տարի-
 ներ՝ իրականացած տեսնելու իր ազգաշեն,
 հայրենաշեն, եկեղեցաշեն բոլոր նման ծրա-
 գրերի կենսագործումը ի մխիթարություն հայ
 ժողովրդի:





ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ին, ԽԱԶՎԵՐԱՑԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը, բնաբան ունենալով Խաչի շարականի հետեւյալ խոսքերը. «Այսօր և մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ Խաչին»:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ին, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեղարձի հանդիսություններին:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ին, ՇԱԲԱԹ, «տօն Սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, Աղոկտոսի և Ռոմանոսի երգեղոցին»: Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Եղիշե արեղա Գարաջանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ին, ԿԻՐԱԿԻ, «տօն Վարագայ Սրբոյ Խաչի»: Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողապալյանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-ին, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պալյանը ժամանակավորապես գործուղվեց Թբիլիսի, թեմակալ առաջնորդ սրբազնի հրավերով:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ին, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Փերաշնորհ Տ. Միոն արքեպիսկոպոս Մանուկյանը, մասնակցելու համար Վեհափառ Հայրապետի գահակալության վեցերորդ տարեղարձի և Մայր Աթոռի նոր տպարանի բացման հանդիսություններին, հանուն իր թեմի: Սրբազնը օդանավակայանում դիմավորվեց Մայր

Աթոռի միաբանների կողմից: Նույն օրը Տ. Միոն սրբազնը ներկայացավ Վեհափառ Հայրապետին և զերմ զրուց ունեցավ նորին Ս. Օծության հետ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ին, ՈՒՐԱԱԹ, գերազնորհ Տ. Միոն արքեպիսկոպոս Մանուկյանի գլխավորությամբ, մեծ թվով ամերիկանայ ուխտավորներ Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, ներկայացան Վեհափառ Հայրապետին և ստացան նրա օրհնությունը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ին, ՇԱԲԱԹ, որպես ուխտավոր և Վեհափառ Հայրապետի հյուր, Արգենտինայից Մայր Աթոռ ժամանեցին տեր և տիկին Վարդան և Զինա Բարակյանները: Հյուրերը Մայր Տաճարում իրենց ուխտը և աղոթքը կատարելուց հետո, ներկայացան Վեհափառ Հայրապետին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ին, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ և ներկայությամբ գերազնորհ Տ. Միոն արքեպիսկոպոս Մանուկյանի, գումարվեց Մայր Աթոռին կից ճարտարապետական հանձնաժողովի հերթական ժողովը, քննության առնելու համար նյու-Յորքի հայոց Մայր Տաճարի շինության նախագիծը, որը Միոն սրբազնի կողմից ներկայացվել էր Վեհափառ Հայրապետին, Հայաստանի ճարտարապետների կարծիքը առնելու համար:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ին, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Եթովպիայի Հոգեւոր Հովիկ Հոգեշնորհ Տ. Վաղգեն արեղա Թեղիշյանը: Օդանավակայանում դիմավորվեց Հոգեշնորհ Տ. Ներսես արեղա Պողապալյանի և բարե-


շնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանի կողմից: Հայր սուրբը առաջնորդվեց Մայր Տաճար, ուր իր աղոթքը և ուխտը կատարելուց հետո, ներկայացավ Վեհափառ Հայրապետին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ին, ՈՒԲԲԱԹ, Վրաստանի հայոց առաջնորդ գերազնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Մտեփանյանը, թեմական խորհրդի անդամների ընկերակցությամբ, ժամանեց Մայր Աթոռ, մասնակցելու համար Ա. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հորելյանական հանդիսության:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերազնորհ Տ. Միռն

արքեպիսկոպոս Մանուկյանի մեկնման առթիվ, նորին Սրբության նախագահությամբ, ողջերթի ընդունելություն կազմակերպվեց Վեհարանի սեղանատանը, որին ներկա էին Մայր Աթոռի բոլոր միաբանները, տեր և տիկին Վարդան և Զինա Բարակյանները: Ներկաներից շատերը շերմ խոսքերով բարի ճանապարհ մաղթեցին սրբազնին:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-ին, ԵՐԵՔԾԱԲԹԻ, գերազնորհ Տ. Միռն արքեպիսկոպոս Մանուկյանը, առավոտյան ժամը 9-ին, «ԻԼ-18» ինքնաթիռով թռավ Մոսկվա, իր թեմը վերադառնալու համար: Սրբազն հորը ճանապարհեցին գերազնորհ Տ. Մահակ և հայկական արքեպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Ներսես արքով Պողապալյանը և բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը:



ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՍԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱԵՆՈՐԸ Տ. ՍԻՐՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՍԱՅՐ ԱՐՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին, շորեթարթի, Մայր Ա-
թոռ Ս. էջմիածին ժամանեց Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թե-
մի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիս-
կոպոս Մանուկյանը, մասնակցելու Վեհափառ
Հայրապետի գահակալության 6-րդ տարե-
դարձի հանդիսություններին, հանուն իր
թեմի ժողովրդի, և ներկա լինելու Մայր Աթո-
ռի մաքարանի բացման տոնակատարությանը:

Ամսագրիս խմբագիրը ամսի 10-ին, երեք-
շարթի, պաշտոնական այցելություն տալով,
բարի գալուատ մաղթեց նորին Սրբազնու-
թյան և խնդրեց նոր և սրտապնդի լուրեր
հաղորդել ԱՄՆ-ի հայության Արևելյան թեմի
ազգային-եկեղեցական կյանքի մասին:

Ամերիկահայ թեմը Հայ եկեղեցու նորա-
գույն թեմերից մեկն է: Շատ հին չէ այդ թեմի
և գաղութի պատմությունը: Ամերիկահայ գա-
ղութի հաստատման թվականը բարձրանում է
մինչև 1830-ական թվականները:

Ամերիկահայ գաղութը, որպես հոգևոր
հովվություն, առաջին անգամ կազմակերպվել
է 1889 թվականին, Կոստանդնովուլուսի Պատ-
րիքության կարգադրությամբ, և 1898
թվականին, Խրիմյան Հայրիկի հովիս 2 թվա-
կիր սրբատառ Կոնդակով, հոչակվել է առաջ-
նորդական վիճակ՝ Մայր Աթոռ Ս. էջմիածնի
հոգևոր իշխանության ներքու:

Ամերիկյան ասպանական հողի վրա,
երկրից և Մայր Հայրենիքից գաղթած հայու-
թյան բեկորներ, ապաստան գտան ու հաս-
տատվեցին մանավանդ 1915 թվականի հա-
մաշխարհային պատերազմի օրերից հետո և
իրենց օրինապահությամբ, աշխատասիրու-
թյամբ, ձեռներեցությամբ, ոչ միայն շուտով
տուն ու տեղ ստեղծեցին, այլ նաև տնտե-
սական մեծ հաջողությունների հասնելով,
շինեցին հայկական եկեղեցիներ, դպրոցներ
բաց արին, հրատարակեցին մամուլ, կազ-
մակերպեցին բարեգործական, մշակութա-
յին, հայրենակցական միություններ և օտա-
րության մեջ ապրեցին նոր կյանքով, բայց

միշտ Մայր Հայրենիքի կարոտով, Ս. էջ-
միածնի սիրով և հիշատակով, բոլորված
տեղական հայ եկեղեցիների շուրջ:

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-
հանգների հայ գաղութը համախմբվել է եր-
կու թեմերի շուրջ՝ Արևելյան թեմ, կենտրոն
ունենալով Նյու-Յորքը, և Արևմտյան կամ
Կալիֆոռնիայի թեմ, կենտրոն ունենալով
Լոս-Անջելոսը:

ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմը, կազմա-
կերպական տեսակետից, գտնվում է օրի-
նակելի բարձրության վրա և թեմի ազգա-
յին-եկեղեցական կյանքը իր ամբողջու-
թյան մեջ դրվել է ամուր, առողջ եկեղեցա-
սիրական, հայրենակարգական հիմքերի վրա,
շնորհիվ թեմի նախկին առաջնորդների և
այժմյան առաջնորդ գերաշնորհ Տ. Սիրոն
արքեպիսկոպոսի, թեմական-եկեղեցական
խորհուրդների, հոգևորականության, ազգա-
յին-եկեղեցական մարմինների իմաստուն,
շրջահայաց զեկավարության և մանավանդ
թեմական կենտրոնական իշխանության ող-
շամիա և համերաշխ գործունեության:

Արևելյան թեմում, որաեղ ապրում է ավե-
լի քան 180 000 հայություն, գործում են
շուրջ 45 կրոնական համայնքներ, իրենց եկե-
ղեցիներով և հոգևորականներով:

Մեր տեսակցության ընթացքում, առաջ-
նորդ սրբազն հայրը մխիթարական լուրեր
հաղորդեց իր թեմի գործունեության մասին:
Առաջնորդ սրբազն հորից իմացանք հե-
տևյալ շինարարական, մշակութային ձեռ-
նարկների մասին, որոնք ուրախությամբ են
լցնում յուրաքանչյուր՝ հայ մարդու սիրությամբ:

1. ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՆ ԲԱՑՈՒՄԸ. — Սեպտեմբերի 10-ին, առաջ-
նորդ սրբազն հոր նախագահության տակ,
կատարվել է ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի
երկրորդ մեծ համայնքի՝ Դիտրոյտի նորա-
կերտ Սշակութային տան բացման հանդի-
սությունը, խուն բազմության ներկայու-
թյամբ:

Մշակութային տունը գտնվում է քաղաքի նոր շրջանում և շինվել է Դիտրոյտի հայ համայնքին պատկանող 17 աքր ընդհանուր տարածություն դրավող ազգային հողամականի մեկ բաժնի վրա: Ենթադր բաղկանում է մի մեծ շքեղ հանդիսարանից, մոտ 1 200 հոգածի ընդգրկող, կիրակնօրյա դպրոցի հատուկ 22 դասարաններից, կիրակնօրյա պաշտամունքների հատուկ մի մատուից և այլ գրասենյակներից:

Մշակութային տան հանդիսավոր բացումից հետո, կազմակերպվել է ընդունելություն-ճաշկերույթ 1 000 հոգու մասնակցությամբ և հանգանակվել է 120 000 դոլար, Մշակութային տան կահավորման համար:

2. ԲՈՒՏՈՆԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՑ Ս. ԵՐ-
ՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԻ եկեղեցնի նԱՎԱԿԱՏԻՔԸ
ԵՎ ՕԾՈՒՄԸ.— Սեպտեմբերի 16—17-ին,
առաջնորդ սրբազն հայրը կատարել է Բու-
տոնի հայոց նորակառույց Ս. Երորդություն
եկեղեցու նավակատիքի և օծման կարգը,
իներկայության բազմահազար հայ հավա-
տացալների և օտար հյուրերի:

Բուտոնի հայոց նորակառույց եկեղեցին
գտնվում է Քեյմբրիչի թաղամասում, համա-
նուն համալսարանի և սեմինարիայի մոտ:
Եկեղեցին կառուցվել է հայկական ոճով,
կաթողիկե սլացիկ գմբեթով, և իր ճարտա-
րապետական կառուցով հիացմունք է
պատճառում դիտողին: Քեյմբրիչի համա-



ԲՈՒՏՈՆԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՑ Ս. ԵՐ-ՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԻ եկեղեցն

Դիտրոյտի հայոց Մշակութային տան շի-
նության հանձնաժողովի ղեկավար և ժրա-
շան անդամներն են հանդիսացել պր. պր.
Ալեք Մանուկյանը և Եղիշարդ Մարտիրոսյանը,
որոնք ոչինչ չեն խնայել օր առաջ կառուց-
ված տեսնելու համար ազգային այդ նոր
օջախը, որ իր շուրջը կբոլորի Դիտրոյտի
հայրենասեր հայությունը:

Արոշվել է հաջորդ մեկ-երկու տարիների ընթացքում, նույն ազգապատկան հողի վրա, մշակութային տան առընթեր, կառուցել հայկական ոճով գեղեցիկ մի նոր եկեղեցի,
որպես աղոթքի տուն:

լսարանական թաղում գտնվող հայ ճարտա-
րապետության այս նոր գոհարը օտարներին
պատմում է հայ ժողովրդի կառուցողական
մեծ ճաշակի և արժանիքների մասին և
պատիվ է բերում այն կառուցողներին:

Եկեղեցու ճարտարապետն է Զավեն Պայ-
քարը, եկեղեցու մարմարները բերվել են
Խոալիայից, իսկ վեմբարը՝ Մայր Աթոռ Ս.
Էջմիածնից: Եկեղեցին կարող է ընդգրկել
շուրջ 1 000 աղոթքավորների:

Եկեղեցու օծման արարողությունից հետո,
կազմակերպվել է մեծ ընդունելություն 800
հոգու մասնակցությամբ:

3. ՀԱՐՎՈՐԴԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՎԱԿԱՏԻՔԸ ԵՎ ՕՍՈՒՄԸ.— Հարվորդի հայ համայնքը փոքր է, մոտ 200 ընտանիքից բաղկացած, բայց մեծ է իր ազգասիրությամբ և եկեղեցափրությամբ, իր սրտով և գոհողության ոգով:

Առաջնորդ սրբազն հայրը սեպտեմբերի 24-ին կատարել է նախկին գետնահարկ մատուան վրա շինված Ս. Գեորգ եկեղեցու նավակատիքն ու օծումը Համայնքը կանգ մի առել նյութական ու բարոյական ոչ մի գոհողության առաջ՝ ունենալու համար իր աղոթքի տունը:

Հարվորդի հայոց հոգեկոր հովիվն է հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Սեմերճյանը: 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑ ԷՎԵՆՍՈՆՈՒՄ.— Առաջնորդ սրբազն հայրը գոհունակությամբ հաղորդեց, որ արդեն գնվել է Զիկագոյի մոտ, էվենստոնում հայկական Աստվածաբանական դպրոցի շենքը և ընթացիկ տարվա վերջերին կամ 1962 թվականի առաջին ամիսներին բացվելու է այն, Ամերիկայի հայոց երկու թեմերի համար ապագա հոգեկոր հովիվներ պատրաստելու առաջադրությամբ:

Էվենստոնի Աստվածաբանական հայկական դպրոցը կոչվելու է Ս. Ներսես Շնորհալու անվամբ: Դպրոցի վարիչ մարմնի նախագահն է Հանդիսանում ըստ կանոնադրության, ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդը, իսկ փոխ վարիչ՝ Կալիֆորնիայի թեմի առաջնորդը:

Նոր բացվելիք հոգեկոր դպրոցի տեսուչ է նշանակվել գերաշնորհ Տ. Տիրան արքապիսկոպոս Ներսոյանը, որը բոլոր տվյալներն ունի արժանավորությամբ և արդյունավետ կերպով ղեկավարելու Աստվածաբանական նոր դպրոցը: Դպրոցը պահպելու է ծանոթ ազգայինների սրտաբուխ նվիրատվություններով:

Աստվածաբանական դպրոցի բացման հետ կապված մանրամասնությունները կհաղորդվեն ավելի ուշ, երբ գոյության կողմից դպրոցը նախատեսված է, որ առ այժմ էվենստոնի Աստվածաբանական նոր դպրոցը ունենա 10 աշակերտ: Աշակերտները ընդունվում են և ԱՄՆ-ից և արտասահմանից և Հայաստանից: Մրագրված է հետագայում ուսանողության թիվը բարձրացնել 25-ի:

Ուսանողները անգերեն լեզվի իրենց գիտելիքները խորացնելու և դիպլոմ ստանալու համար կհաճախեն մերձակա եպիսկոպուսական Սիրլոյի սեմինարիան:

5. ՆՅՈՒ-ՑՈՐՔԻ ՀԱՅՈՑ ՏԱՅՅԻ ՏԱՅԱՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ.— Գերաշնորհ Տ. Սիրն սրբազնը հաղորդեց նաև, որ շուտով կկատարվի հիմնարկեքը նյու-Ցորքի առաջնորդանության:

«Մայր Տաճարը խորհրդանիշը և փաստը պիտի հանդիսանա թեմին մի և անբաժանելի եկեղեցական միության», — հայտարարեց սրբազնը և շարունակեց:

«Բոլոր ծովերը, սեռելով իրենց ակնարկները գեպի Մայր Տաճարը, ավելի և պիտի գիտակցին, որ տեղական հոգերե և հոգերանությունները վեր, մեկ մասը կկազմեն հոգերոր ու վարչական ամբողջության մը:

Ազգային առաջնորդարանին կողքին և այդ առաջնորդարանի հեղինակության հմայքին իրը վահան պիտի կանգնի Մայր Տաճարը, որով ամուր և անխախտ պիտի մնա: Նաև, ու պիտի զարգանա վարչական միասնականությունը թեմին:

Հայաստանյաց եկեղեցին ճանցված է իրեկ մին արևելյան ուղղափառ դարավոր եկեղեցիներեն, ու իր այդ հանգամանքով իսկ անդամ է Ամերիկայի եկեղեցիներու Ազգային խորհրդին՝ նեշինը ԳԱՐԻՒՍԻԼ ԱՎ ԶԵՐՉԱ:

Ամերիկյան այդ մեծ կազմակերպության ծոցին մեջ, ինչպես նաև գեմ հանդիման մեզ շրջապատող բոլոր ազգերուն և եկեղեցիներուն, որոնք այս երկրին մեջ ունին իրենց առաջնորդանիստ Մայր եկեղեցին, Ամերիկայի Հայաստանյաց եկեղեցին ալ պիտի կարենա, Մայր Տաճարով, իր դիրքին համապատասխան հեղինակություն, վարկ ու հարգանք ստանալ:

Հոյակապ կոթողներ լավագույս կհիշեցնեն Ազգի մը քաղաքակրթական բարձր շափանիշը ու եկեղեցիի մը մեծությունը:

Գեղեցիկ Մայր Տաճար մը, պատվարեր նմուշը մը հայ ճարտարապետական հանճարին, արժանապատվության և ազգային արդար հպարտության հարց է միանգամայն:

Ան մշտականգուն վկայությունը պիտի հանդիսանա մեր ազգային ու եկեղեցական դարավոր արժեքին:

Ու պիտի տա փաստը, որ մեր ներկան կրտսելի մեր անցյալի բարձրության վրա, որով մեր նպաստը կրերենք այս նոր երկրին վրա կրտսումի մեջ եղող հառաջպեմ ու ապագային նայող քրիստոնեական քաղաքակրթության մը»:

Մայր Տաճարի և մշտականգուն տան կենտրոնական հանճնաժողովը ծրագրել է 1962 թվականի աշնան սկսել Տաճարի կառուցումը:

Տաճարի շինության համար 1 000 000 դուարի նոր հանգանակությունը, ասաց սրբազնը, ընթանում է շատ հաջող:

1959 թվականին շինվել է և օգտագործվում է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդանիստ գեղեցիկ վարչական կենտրոնը:

երեքնարկանի, կառուցված Տիարպերիույսն եղբայրների նվիրատվությամբ.

Սիոն սրբազնը հայտարարեց, որ «Մայր Տաճարի վերջնական հատակագիծները պիտի պատրաստվին համաձայն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին թելադրությանց և Հայաստանի հայ ճարտարապետական ոճի մասնագետ ճարտարապետներու խորհուրդներուն»:

Արդարե, Հոկտեմբերի 10-ին, երեքշաբթի օրը, Վեհարանում տեղի ունեցավ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, ճարտարապետների խորհրդակցություն, որին մասնակցեց նաև գերապատիլ Տ. Սիոն արքեպիսկոպոսը: Ճարտարապետների խորհրդակցությունում քննության առնվեց նյութորոշում կառուցվելիք հայկական եկեղեցու հատակագիծը:

Առաջարկ սրբազն հայրը հաղորդեց նաև, որ նյութ-Յորքի մոտ, ազգապատկան նույն հողի վրա, շուտով կառուցվելու է նաև


Հայ մշակութային տունը, որի համար Կյուլապի Կյուլպենկյան կտակից հատկացվել է 500 000 դոլար:

«Հայ մշակութային տունը,— հայտարարեց սրբազնը,— արդեն իսկ կազմ ու պատրաստ է կառուցման համար, իր ամեն դյուրություններով օժտված հանդիսարարահով, գրադարանով ու զանազան գրասենյակներով և պիտի դառնա մեծագույն նյութ-Յորքի հայ համայնքի և ամբողջ թեմի կրոնական, կրթական, ընկերային և մշակութային կյանքի կեղոնը»:

Ավելի քան կես ժամ տևող տեսակցությունից հետո, ամսագրիս խմբագիրը հրաժեշտ է առնում ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերապատիլ Տ. Սիոն արքեպիսկոպոսից, սրտագին շնորհակալություն հայտնելով ամերիկահայ ազգային-եկեղեցական կյանքի մասին նրա տված շատ շահեկան և սրտապնդիլ լուրերի համար:

Ա. Հ.





Ա. ՄԱՏԻՆՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆՈՐ ՏՊԱՐԱՆԸ

Հոկտեմբերի 15-ին կատարվեց Մայր Աթոռ Ս. էջմիածնի նոր տպարանի պաշտոնական բացումը:

Մայր Աթոռ Ս. էջմիածնի առաջին տպարանը կառուցվել է 1771 թվականին, Սիմեոն կաթողիկոս Երևանցու օրով: Այդ տպարանը պատմականորեն առաջինն է եղել Հայաստանում և մեր ժողովորդի մշակութային պատմության մեջ գրավում է իր ուրույն տեղը: Տպարանին առընթեր, Սիմեոն կաթողիկոսը կառուցել էր նաև տպագրական թղթի մշակման իր արհեստանոցը: Սիմեոն Երեվանցու կառուցած տպարանը եղել է միահարկ և մեկ մուտքով, ներկա տպարանի հյուսիսային և միջին մասերում:

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Վազգեն Ա, իր գահակալության առաջին խոկ օրերից, իր ուշադրությունը կենտրոնացրել է Մայր Աթոռը նոր տպարանով օժտելու անհրաժեշտության վրա: 1955 թվականի Հոկտեմբերին, Ազգային-եկեղեցական ժողովի Դ նիստում, Վեհափառ Հայրապետը, բոլոր պատգամավորների ներկայության, շեշտում էր այն միտքը, որ «Մայր Աթոռը անհրաժեշտաբար պետք ունի տպարանի»:

Ամերիկահայ պատգամավորությունը, ընդառաջելով նորընտիր Կաթողիկոսի ազգաշեն

ցանկության, խոստացավ Մայր Աթոռը օժտել արդիական նոր տպարանով:

Վեհափառ Վազգեն Հայրապետը, իր անդրանիկ կոնդակում, նորից անդրադարձավ տպարանի հարցին, իսկ 1958 թվականին, իր 50-ամյա հորելլանի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ կարդացած իր զեկուցման մեջ, հոկտեմբերի 16-ին, խոսելով ընթացիկ և հաջորդ տարիների շինարարական աշխատանքների վրա, կոնկրետ կերպով դնում էր «վերակառուցում տպարանի շենքի երկրորդ հարկի» հարցը:

Այսուհետև, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովը, հաճախ զբաղվեց տպարանի շենքի կառուցման հարցերով: Վեհափառ Հայրապետը ճարտարապետական հանձնաժողովի առաջ խնդիր էր դրել ստեղծել Մայր Աթոռի համար ժամանակակից ավտոմատ սարքավորումներով հագեցած օրինակելի մի տպարան:

Հանձնաժողովը հանգամանորեն քննության առավ Վեհափառ Հայրապետի ցանկությունները և ձեռնհասորեն զրադեց Մայր Աթոռի նոր տպարանի և շենքի կառուցման և այն նոր տիպի մերենաներով օժտելու հարցով:

Տպարանի շենքի նորոգման և երկրողի հարկի կառուցման աշխատանքները սկսվեցին 1958 թվականին։ Առաջին հարկը ենթարկվեց մասնակի վերանորոգման։ Քանդվեցին մեծ սրահների մեջ կառուցված փոքր խցիկները, ամբողջ շենքը ծեփվեց և հարմարեցվեց տպարանի պահանջմունքներին։

Համաձայն նոր նախագծի, ամբողջովին բանդվեց երկրորդ հարկը, ուր տարվեցին շինարարական ավելի մեծ և լուրջ աշխատանքներ։ Շենքի ծածկը և առաստաղը ամրողովին վերացվեցին, առաստաղը ավելի քան մեկ մետր բարձրացվեց և ծածկվեց

գեղեցկություն։ Ամբողջապես փոխված են շենքի առաջին և երկրորդ հարկի դռներն ու պատուհանները։

Տպարանն ունի երկու մուտք՝ արևելյան կողմի բակից և երկու մուտք՝ Մայր Տաճարի կողմից։

Ամբողջ տպարանով անց է կացված շեռուցման սիստեմ, առաջին և երկրորդ հարկերում ստեղծված են կաֆելապատ սանիտարական հանգույցներ և զրի ծորակներ, աշխատանքից հետո մաքրվելու համար ցընցուղներ՝ տաք զրի կենտրոնական մատակարարումով։



ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է ՏՊԱԳԻՐՎԱԿ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԲ

մոնոլիտ երկաթ-բետոնյա ծածկով, ըստ որում դգալապես բարձրացվեցին և ավելացվեցին պատուհանները։

Տպարանի աշխատանքի համար ընական լուսավորությունը ապահովելու նպատակով, շենքի Մայր Տաճարին նայող ճակատին երեք տեղ բացվեցին նոր լուսամուտներ, բոլոր հողապատ միջնորմերը բանդվեցին և դարձվեցին արտազրության հարմար, բարձր առաստաղ ունեցող մեծ սրահներ։ Լայն առողջանավանդակները, մարմարի խիճով պատրաստված աստիճանները տալիս են


երկհարկանի վերաշինված և վերակառուցված շենքում տպարանի արտադրական բաժինները առանձին-առանձին դասավորված են բատ տեխնոլոգիական պրոցեսների երկրորդ հարկում գտնվում են ֆորմա պատրաստող, իսկ առաջին հարկում՝ տպագրող և տպագրածը նշակող բաժինները։

Երկրորդ հարկի հյուսիսային կողմի լուսավոր երկու սրահներից արևելյանում տեղափորված են շարող երկու լինոտիպ մեքենաները, որոնցից մեկը 4, իսկ մյուսը 8 մայրատուփով, և սրբագրության օտիսկ հանող

ձեռքի մեքենաները: Այս սրահին կից է մետաղ հալելու և գլաններ ձուլելու սենյակը: Ալստեղ է նաև էլեկտրական հոսանքով մետաղ ձուլող կաթսան, որն աշխատում է անխափան: Արևմտյան սրահում գտնվում են ձեռքի գրաշարական բաժնի տառապահարանները, տառարկղները, սրբագրության օտիսկ հանող «VORAN» մեքենան: Այս սրահին կից է մեխանիկական արհեստանոցը:

Հարավային կողմի երկու արևոտ սրահները նախատեսված են ցինկոգրաֆիական բաժնի համար: Այս բաժնի մեքենաներից ստացված և տեղադրված են

կարաժնի հյուսիսային կողմի երկու սրահներից մեկը հատկացված է օֆիսետ տպագրության բաժնին, իսկ արևելյան սրահում տեղադրվելու են ֆորմա պատրաստող սարքավորումները՝ պատճենահան շրջանակը, մոնտաժի սեղանը, փորձնական օտիսկ հանող, կենտրոնախազ մեքենաները: Արևմտյան սրահում տեղադրված են օֆիսետ տպագրության միագույն երկու մեքենաները, թուղթ կախելու սարքավորումը: Այս բաժնի սարքավորումներից մի քանիսը դեռ նոր են պատվիրված: Դրանք շուտով կստացվեն ու կտեղադրվեն:



ՏՊԱՐԱՆԻ ԿԱՐՈՂ ՄԵՔԵՆԱՅԻ ՄՈՏ

մինչև այժմ էլեկտրափորագրող (կլիշ պատրաստող) «KLISCHOCRAPH K 150», պատճենահանող, ցինկ կտրող, ֆրեզող մեքենաները: Մոտ ապագայում կստացվեն ֆոտո ապարատը, խածատման, պատճենահանող, օդաճնշական ապարատը և այլ սարքեր, որոնց ստացումով այս բաժինը լրիվ կերպով պատրաստ կլինի:


Ենթադրություն է, որ առաջին հարավի հատկանիւնը պատճենահանող կառավագանություն կունենա: Առաջին հար-

առաջին հարկի միջին մասը հատկացված է տպագրական բաժնին: Արևմտյան սրահում տեղադրված են տպագրական երկպտույտ «Պլանետա ZT 28» և մեկ կողմից կտրող «A 112 Ալո» մոդելի մեքենաները: Արևելյան սրահում տեղադրված են տպագրական միջակ ավտոմատ «ՄՃ», տիգելին և կտրիչ մեքենայի դանակը սրող մեքենաները և հատուկ սեղաններ՝ տպագրված ֆորման մեքենայից հանելու համար: Առաջին հար-

իի կաֆելապատ սանիտարական հանգույցը և ցնցուղը գտնվում են այս սրահին կից:

Այդ բաժնի հարավային կողմին արևոտ և լուսավոր երկու սրահների մեջ է տեղավորված կազմաքարական բաժինը, հալող ավտոմատը, երեք կողմից կտրող «PERFECT», երկաթալար կարող «RAPID N 103^{1/4}», թելակար կիսավլումատ «N 38^{3/4}H2», ոսկեզօծ տպող և ճնշող «BV», պապշեր «DE» մեքենաները, ինչպես նաև կլորացնող և սեղմող հաստոցները: Ցուրաքանչյուր բաժին ապահովված է արտադրանքը մի բաժնից մի այլ բաժին փոխադրող տարբեր տեսակի սալլակներով:

Կատարեց օգտակար թելադրություններ: Պետք է նշել, որ պր. Աղաճանյանը տպարանի կազմակերպման նյութական միջոցները հավաքելուց բացի, մեքենաների և սարքավորումների համար Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովի ուղարկած պատվերները ըստ ֆիրմաների պատվիրել էր արդեն և գիտեր մեքենաների տեսակներն ու անունները, նրանց շափերը: Պր. Աղաճանյանի տված լուսարանությունների հիման վրա, տեղում իսկ ծանոթացանք տպարանի տեխնոլոգիական նախագծին: Պր. Աղաճանյանը մամուլում հրապարակած իր հուշերի մեջ հետագայում նշում էր. «... Խոսելի վերջ



ՏՊԱԳԲԱԿԱՆ «ՄԵՐՍԵՒԹԵՍ» ՄԵՔԵՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Տպարանի բոլոր բաժիններում անց են կացված օդափոխիչ սարքավորումներ:

Ինչպես հայտնի է, Մայր Աթոռի տպագրական մեքենաները սրտագին նվերն են ամերիկահայ մեր եղբայրների:

1958 թվականին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում Մայր Աթոռի տպարանի հանգանակից հանձնաժողովի եռանդուն նախագահ պր. Երվանդ Աղաճանյանը անձամբ տեսակ Մայր Աթոռում տարված աշխատանքները տպարանի կապակցությամբ, և


կարծես հասկցանք, որ տպագրական մեքենաները գործածության դնելու համար ոչ Ամերիկային և ոչ ալ Գերմանիային մասնակիութեան դրկելու հարկ կար: Մեր միտքը բոլորովին խաղաղեցավ...»:

Երբ մեքենաները ստացվեցին, մեր պոլիգրաֆիական մասնագիտները սիրով ձեռնամուխ եղան նրանց հավաքման և տեղադրման աշխատանքներին:

Մի քանի ամսում մեր հայրենի մասնագիտները մեծ հաջողությամբ և վարպետու-

թյամբ ավարտեցին մեքենաների տեղադրուման, կարգավորման գործը։ Այստեղ հիշենք անունները լավագույն վարպետ մեխանիկներ Սիմոն Գրիգորյանի և Հայկազ Ավետիսյանի ու Նրանց օգնականներ Դերենիկ Սիրեկանյանի և Շավարշ Աշուրյանի, որոնք Հոգևոր Ճեմարանի նախկին սաներ են և 2—3 տարի պատրաստվել են որպես մայր Աթոռի տպարանի սաներ։ Տպարանի էլեկ-

տրական մոնտաժային աշխատանքները կատարել են էլեկտրիկ ինժեներ Պարույր Մկրտչյանը և Մացու Միքայելյանը։
Մայր Աթոռի նոր տպարանի մեքենաների տեղադրման աշխատանքները արդեն ավարտված են։ Մայր Աթոռի տպարանի բացումը մի տեսակ հիշատակի հավերժացումը հանդիսացավ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի։



Օ Շ Ա Կ Ա՛Ն

Օշակա՞ն,

Քանինե՞ր այսօր քեզ ուխտի եկան...
Ու դեռ քանինե՞ր պիտի գան նորեն
Համբուրել այն քարն որ անշըթորեն
Կը ծածկե Տիրի փառքն հափշտակող
Հայ Գիրի Հսկան իբրև լուռ կոթող:

Օշակա՞ն,

Բերդիդ բեկորներն՝ որ վաղուց ինկան՝
Եթե իրար գան՝ չեն կրնար մրցիլ
Այն սուրբ քարին նետ՝ որ իբր երփնածիլ
Անուրջի խորան՝ կայք մ'է Բեթելի,
Մրբված՝ հայ Մտքի օծումովն առլի:

Օշակա՞ն,

Հողերդ՝ ուր ոսկրեր փըտած են այնքան՝
Թե ի կշիռ գան հոծությամբ ժայռի՝
Չեն զորեր շարժել մետ մը նըժարի
Դեմ այն աճյունին՝ ուր հայ հոգվույն պերձ
Կրակն է անթեղված դարերով անվերջ:

Օշակա՞ն,

Թե քու անուշակ հուլվերդ այգեկան
Մեկ հնձանի մեջ ճմլըվին առատ՝
Չեն կրնար բորել կաթիլ մ'անարատ
Դեպի խառնարանը մեծ Մըշակին՝
Ուր խանդ ու խորհուրդ կը պոազչակին:

Օշակա՞ն,

Քեզ ծոնված խունկերն այն կալսեռական՝
Որ երկար ատեն ծըխեցան քու մեջ՝
Չեն կրնար պարել բույրի մ'ելսէջ.
Մինչ ծոցդ թափված յուր անուն մը ჩեզ
Դեռ նարդի հոտով կը խնկե ըպքեզ:

Օշակա՞ն,

Շողի ու սովերի նախանձ մը կպան
Ցերեներդ նախկին՝ գիշերներդ հետին
Լուսավորության մեր Շահապետին
Անմուտ արնեն; և իր չիրմին սառ
Սընարքը պճնող աստղերեն պայծառ:

Օշակա՞ն,

Իրմով սրբավայր մ'ես նըվիրական...
Եթե Մորիկ մ'իսկ ցանկա մականի՝
Հոդ չըկա դափնի մ'իրեն արժանի.
Գըրիչը միայն նիշերովն անմաշ՝
Հոդ իր վեմն ունի ջինջ ու սրբատաշ:

Օշակա՞ն,

Օր մ'ալ ես եկա իբրև ուխտական...
Ու այն Քարին մոտ՝ որուն ներքւ նա
Կը հսկե արթուն քան թե կը քնանա,
Ըսի. Հողին տակ Գիրը՝ երկաթե
Շունչով մը կ'ապրի... իսկ Քա՛րը.— Միթե
Չէ՝ երապին խորքն՝ ուր դեռ կը հածին
Իր միտքն ադամանդ, մատներն ոսկեծին:

Օշակա՞ն,

Ով Սուլքը Մեսրոպի հանգիստ սիրական,
Եթե օր մ'երբեք նոր հովիվ նոր հոտ
Պաշտամունքի՝ նոր ծեսով գան քեզ մոտ՝
Ու իրենց համար նոր Աստված մ'ուզեն,
Արթընցո՛ւր Հըսկան Գիրի երապեն...:



ԳՅՈՒՏԻՆ ՓԱՌՔԸ

Մեսրոպ, նայ դարերուն դիմաց կեցող
Դուն աղամանոյա պառաօժ,
Դո՞ւն մանուկներու մերկ ուղեղեն
Մինչև հանճարը ցոլքեր ցանող,
Գիտակցությանց անստօյն ոտ փարոս...
Դուն, որուն կոփյունը կռանին,
Ժամերուն պես, րոպեին պես անդադար,
Խմացական թանգարանին արձանները մեզ կը ծույն...
Դուն աննինջ հսկող, դուն տիտանյան Տեսանող,
Դուն օրորոցեն մինչ գերեզման,
Մեր մեն մի խոսքին, մեն մի շունչին,
Գեղեցկածաւն բացատրիչ...
Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տևողության,
Դուն գոյացության արգավանդ հայր,
Դուն լուսի անիվ, դուն հավատքի հրավեր,
Դուն հայրենի հողին վրա մրրկին պես բարձրացող
Անտա՞ռ անհուն, անտա՞ռ սրտի,
Որուն մեն մի հաստատաբուն ծառերն հսկա,
Մեկ-մեկ քնար, մեկ-մեկ փանդիռ են մեր շունչին...
Մեկ-մեկ շեփոր մեր հագագին ռազմական,
Մեկ-մեկ պատնեշ ճակատագի՞ր պատուհասին...
Դուն անվատնելի ցորյանի դաշտ, դուն ծրի՝ հաց,
Դուն հունձք հարուստ, և դուն հնձան հրաշեկ,
Դուն արբեցությանց և զինի ավագան,
Որուն մեջ ե՞ս ալ ոսկի սափորս եմ միսրճեր...
Արևներու ծարավես խենթ...

Եվ այսօր, քու սրբութամբ սնած՝
Ես ապաժաման քնարահար,
Եվ անվճար ու անարժան երախտագետ,
Ես՝ քու ցեղիո հոգիին հայելին քեզ կը բերեմ...
Աչքերուս մեջ անոր աչքեն հուր առի...
Ու իմ խոսքերս անոր սրտեն եմ քաղեր,
Եվ ի՞նչ որ կարդաս ճակտիս վրան,
Ինչ որ կարդաս ժպիտիս մեջ,
Անոր Հուսո՞վն եմ ես գրած...
Եվ թույլ տուր այսօր, ո՞վ Մեսրոպ,
Որ Հայոց հողեն մինչև աստղերը հասնող
Քու ոսկես սանրուխեղ վեր բարձրանամ,
Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան
Ու պսակե ի պսակ և լուսե ի լուս,
Իբր զավակ մը մտածումիդ,
Ես ի քեզ գամ, իմ այս երգս երգելու...

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Արի, եղբայր, փառաբանե՞նք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաբսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն:

Նա առաջին կանչն է եղել դրուցավնական մեր նախարհը,
Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:

Քերթողահայր Խորենացուց մինչև Զուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ ու ճանապարհ՝ հայոց լեզուն:

Կըմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կըկորչեինք, եթե ճամբին չըրոցկլտար հայոց լեզուն:

Քանի՛ ցեղեր ցամաքեցին ինչպես հեղեղն ավավի մեջ,
Բայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն:


Նրան իր ձեռքն է վերցըրել մեր պետությունն աշխարհաշեն,
Այդ վեհ ձեռքով է բարձրանում դեաի կատար՝ հայոց լեզուն:

Այսօր էլ նա բօնության դեմ փայլատակում է բարկացայտ,
Հերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն:

Ուրեմն ե՛կ փառաբանենք, փայլեցընենք թըրի նման,
Որ զընգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն:

Հունիս, 1943 թ., Երևան:





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱԴՏՈՑ*

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Լուսավորություն Աղվանից, Բաղասականի, Գարդմանի, Վրաց և Տաշրաց)

§ 1

Հինգերորդ ճամբռորդությունը չորրորդից շատ կարճ ժամանակով միայն բաժանվում է: Մեսրոպ վերադառնալով Հունահայաստանից, նպատակ ուներ ո՛չ թե հանգստանալ, այլ ուղղակի անցնիլ Աղվանից երկիրը, որոնց համար արդեն այրութեն հնարել էր թենիամինի միջոցով: Ուստի մի քանի օրից («աւուրս ինչ») դադարից հետո Վաղարշապատում, ճանապարհ ընկալ դեպի Աղվանք:

Մեսրոպ իջավ Աղվանից մայրաքաղաքը, որ այն ժամանակ զեռ ջողա քաղաքն էր և ոչ Պարտավը (տե՛ս Մովսես Կաղանկայտվացի, թ դ): Այսուեղ նա ներկայացավ Աղվանից երեմիս եպիսկոպոսապետին և թագավորին, որի անունը Կորյունի մի ձեռա-

գրում գրված է Արսվադ, մյուառմ՝ Արսվադէ, Խորենացու մոտ Արսվադէն, Կաղանկայլացու մոտ նույնպես Արսվադէն, Կիրակոսի (էջ 97) և Օրբելյանի մոտ՝ Խսվադէն: Եղիուսն էլ սիրով ընդունեցին Մեսրոպին. «Առավել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի»: Հետո հարցրին իր գալստյան նպատակը: Մեսրոպը բացարևց, թե իր նպատակն էր նորագյուտ աղվաներն գրերը տարածել ժողովրդի մեջ և նրանց վարժեցնել դրականության և քրիստոնեական կրթության մեջ: Արսվադն և Երեմիա ուրախությամբ ընդունեցին Մեսրոպի առաջարկը և շոտով հրաման հանեցին իրենց իշխանության տակ գտնված գավառներից հավաքել մանուկների բազմությունը, որպեսզի հանձնեն Մեսրոպին դպրության համար: Այսպես հիմնվեցին Աղվանից առաջին դպրոցները, որոնց ծախսը նշանակվեց արքունիքից:

Ավանդում է, թե Մեսրոպ իր այս քարոզության ժամանակ հիմնել է Շամախի մոտ Ս. Ստեփանոս վանքը, որի համար հետեւալ ծանոթությունն է տալիս «Նորդար» լրագիրը (1887, № 202). «Շամախից 18 վերստ հեռավորությամբ դեպի հարավ, Թիֆլիս և Երևան գնացող ճանապարհի մոտ գտնվում է Սաղիանի Ս. Ստեփանոս վանքը մի վայելու բարձրահայաց դիրքի վրա, որ,

* Հայ գրերի անմահ ստեղծող Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ, վերսկսում ենք ընդհատված հրատարակությունը մեծամուն հայագետ, ակադեմիկոս պրոֆ. Հ. Աճառյանի «Մեսրոպ Մաշտոց» աշխատության.

Աշխատության Ա. —է դրուժները անվագրված են «Էջմիածին» ամսագրի 1954 թվականի X, XII, 1955 թվականի I, II, III, IV, IX և 1956 թվականի I, II, IV—V, VIII—IX և XI—XII համարներում:— ԽՄԲ.

ըստ ավանդության տեղաբնակների, հիմնը զված է Ս. Մեսրոպ թարգմանչից՝ նրա այս կողմերը եկած ժամանակ։

Դպրոցների հաստատությունից հետո, երեմիա եպիսկոպոսը ձեռնարկեց թարգմանելու Աստվածաշունը աղքաներեն լեզվի, որով ասում է Կորյուն, «անդէն յական թօթափել, վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից, մարդարչափտք և առաքելածանօթք և աւետարանաժաննք լինէին, և ամենայն Աւանդելոցն Աստուծոյ, ոչ իւրեք անտեղեակք» (էջ 19): Այս խոսքերից երևում է, որ Ս. գրքի ամենամեծ մասը (Հատկապես հիշում է Կորյուն Մարգարելությունները, Գործք Առաքելոց և Ավետարան) թարգմանվեցին աղքաներենի, անշուշտ հայ թարգմանության վրայից: Իսկ Արսվաղեն թագավորը հրաման հանեց հետ կենալ բոլոր այն կոպապաշտական սովորություններից, որոնք դեռ մնում էին այդ քրիստոնյա ժողովրդի մեջ. «Դարձեալ առաւել ևս երկիղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և դիսամոլ ազգին սաստի՛ թափել զերծանել յունայնավար հնացելոցն, և հնազանդ լինել ամենաշշտ լծոյն Քրիստոսի»:

§ 2

Աղվանից աշխարհի քարոզությունից անմիջապես հետո տեղի ունեցավ Բաղասական աշխարհի քարոզությունը: Թայց այս քարոզության մասին տրված տեղեկությունը այնքան հակիրճ, այնքան համառու է Կորյունի մեջ, որ կարող է անցողակի հիշատակություն համարվել: Արումն դժբախտության, խոսքի իմաստը նույնպես շատ մուժ է և պարզելու համար այն՝ պետք կամի քանի քերականական դիտողությունների:

Ահավասիկ Կորյունի հիշալ հատվածը. «Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ, և լցեալ զպիտոյն իւրեանց, և զկամացն յօժարութիւն, ձեռնատու ևս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ Կոլէին» (Կորյուն, էջ 19):

Հատվածին առաջին երկու անցյալ դերայները (արարեալ, լցեալ) պետք է որ

1 Զ. Աղայան («Անահիտ», Ա տպ., Թիֆլիս, 1886, էջ 75 ծանոթ). ասում է, թե այս սատանայականա աղանդը, որ ըստ Կորյունի չնչեց Մեսրոպը Աղվանում, Կաղանկալուվացու մատնահատության և այլ տնօւններով նկարագրած աղանդն է: Այս առթիվ Աղայանը տալիս է նաև Կաղանկալուվացու այս գըլիսի աշխարհաբար թարգմանությունը: «Անահիտ»-ի մյուս տպադրությանց մեջ այս հավելվածը չկա:

պատկանին Արսվաղենին ու երեմիային, նմա դերանունը դրված է Մեսրոպի համար. ի՞նչ հուզվ է սրբոյ եպիսկոպոսին, սեռական թե տրական: Եթե համարենք տրական, այնպես կհետևի, որ Մեսրոպ օգնել է Մուշեղին և Բաղասական աշխարհի քարոզիչը կլինի Մուշեղ. Թայց այս պարագային նմա բառի գործածությունը իզուր եղած պիտի լինի, ուստի չի կարող եպիսկոպոսին տրական լինել Եթե սեռական է, կարող է լինել հատկացուցիչ վարդապետութեան բառի, որով դարձալ Մուշեղ կլինի քարոզիչը, և կամ սեռական հոլով ենթակա եղեալ դերայի: Չի կարող հատկացուցիչ լինել, որովհետև նախ որ այս պարագային պետք պիտի լիներ ասել «սրբամատոյց վարդապետութեանն սրբոյ եպիսկոպոսին», և երկրորդ, որ խոսքը ամենաին իմաստ չի ունենա: Մնում է ընդունել սեռական ենթակա: Այս ժամանակ խոսքի իմաստը պարզվում է հետեւյալ ձևով. «Երբ Արսվաղեն և Երեմիա՝ երկուսը միասին կատարեցին այդ բանը, լրացրին իրենց պետքերը և իրենց կամքի փափագածը, երբ Մուշեղ անուն սուրբ եպիսկոպոսը օգնեց Մեսրոպին Բաղասականի քարոզության մեջ, այնուհետև...»:

Այս մեկնությունից այն է ստացվում, որ Մեսրոպ Աղվանից քարոզությունը լրացնելուց հետո, ժամանակավորապես թողնելով այդ երկիրը, անցավ Բաղասականի կողմերը (Հյուախային Կովկաս): Այստեղ էլ տարածեց քրիստոնեական վարդապետությունը իրեն օգնական եղավ Մուշեղ եպիսկոպոսը, որ թերևս Բաղասականի առաջնորդն էր կամ եղավ Քարոզությունից հետո, Մեսրոպ իր աշակերտներից մի քանիսին նշանակեց Աղվանից վերակացու, որոնց մեջ հատկապես հիշվում է պալատական քանանա Հովնաթան անուն անձը, և նրանց բոլորին հանձնելով աստվածային շնորհներին, հրաժեշտ տվակ թագավորին, եպիսկոպոսներին ու ժողովրդին և դիմեց նորից Վրաստան:

Թեև մյուս պատմագիրները շոնեն բնակ տեղեկություն Բաղասականի քարոզության մասին, թայց Խորենացին տալիս է մի քանի նոր մանրամասնություններ: Հստ Խորենացու (Պ կ) Գողթն գավառի երկրորդ քարոզության ժամանակ, Մեսրոպ, որ զբաղված էր ջնջելու հեթանոսական մնացորդները այդ գավառում, տեղեկություն ստացավ, թե կուապաշտական աղանդի քարոզիչներն ու գլխավորները գտնվում են Բաղասական երկրի կողմերում. ուստի դիմելով այնտեղ. սկսեց քարոզություն և այդ գլխավորներից շատերին ուղղության բերակ. իսկ մնացած մի քանիսին, որոնք

Համառում էին իրենց կարծիքների մեջ, հայածական վտարեց դեպի Հոնաց երկիրը: Հետո Բաղասականի քարողական գործին վերակացու նշանակեց Մուշը և ափսկոպոսին, իսկ ինքը դարձավ Թարզմանի ձորով:

Խորենացու այս հատվածը կարեղ է մեղ համար այն պատճառով, որ հաստատում է մեր տված բացատրությունը Կորյունի մութ հատվածին, որ տեսանք քիչ առաջ: Միայն այստեղ Մուշեղը դառնում է Մուշ:

§ 3

Նախքան Մեսրոպի ճանապարհորդության ընթացքը շարունակելը, հիշենք այն տարրերությունները, որ հետին պատմագիրները (Խորենացի, Կաղանկայտվացի, Օրբելյան) ընծայում են Աղվանից ու Բաղասականի քարողության մեջ:

Խորենացին Աղվանից քարողությունը դնում է Վրաց լուսավորությունից անմիջապես հետո. Մեսրոպ իշխում է Աղվանք, Արսվաղենի և Երեմիայի մոտ, որոնք աշակերտներ են Հավաքում և նրան հանձնում: Հետո Մեսրոպ արքունիքից կանչում է Բենիամին թարզմանին, նրանց օգնությամբ հնարում է գրերը և Հովնաթանին վերակացու թողնելով՝ Հայաստան՝ դառնում: Ահավասիկ ամբողջ բնագիրը. «Եւ եկն յԱղուանս իշեալ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ, որոց կամաւ յանձն առեալ զվարդապետութիւն նորա, ետուն մանկուն ընտիրս եւ կոչեալ զբենիամէն ոմն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց Տէր՝ ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ. որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղիալուր խժական խեցբեկագունին այնորիկ գարգարացոց լեզուին: Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զբովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ դրանն արքունի, ինքն դառնայ ի Հայս» (Խորենացի Դ ծդ):

Ասենք անմիջապես, թե Կորյունի այս պարզ ու բնական պատմությունը այնպես է խաթարված այստեղ, որ բոլոր դեպքերը խանգարված ու անբնական են դարձած: Ի՞նչ միտք կար աշակերտներ Հավաքելու և կրթության համար Մեսրոպին հանձնելու, երբ տակավին Մեսրոպ չէր հնարած աղվաներն գրերս և գեռ նոր պիտի կանչեր շնորհավոր թարզմանին նույն գրերի գյուտի համար: Եվ ինչո՞ւ Մեսրոպ ստիրված պիտի լիներ Սյունիքից կանչելու թարգման, մանավանդ եթե այդ շնորհավոր թարզմանը աննշան մեկն էր (ոմն): Մի՞թե շկար ամբողջ Աղվանքում գտնե մեկ անձ, որ կարենար հայերեն լեզուն հասկանալ: Կարելի՞ է

նեթաղբել, թե Աղվանից Երեմիա եպիսկոպոսը, որ կրոնապես կապված էր Հայոց հայրապետության հետ, հայերեն շիմանար և շկարողանար Մեսրոպի փափագը լրացնել: Ո՞վ էր Բենիամին թարզմանի ընկերը, որոնց (որովք) միջոցով կարողացավ Մեսրոպ հնարել աղվաներեն գրերը. արդյոք Անանիա եպիսկոպուն էր, ինչպես ընդունում է Օրբելյան. և եթե այո, այդ ի՞նչ զարմանալի օգնություն է, որ օտար այսունեցի մի եպիսկոպոս պիտի կարողանար տալ, բայց բուն աղվան Երեմիա եպիսկոպոսը շափտի կարողանար մատուցանել՝ աղվաներն գրերը հնարելու համար:

Բոլոր այս տարօրինակովթյունները կվերանան, եթե ընդունենք, որ Կորյունի պատմության համաձայն Բենիամին քահանան աղվան էր, որին պատահեց Մեսրոպ Հունահայաստանում և որին հարցաքններով կազմեց աղվաներեն այրութենք: Այսուհետև զալուկ Աղվանք, բաց արեց զպրոցներ և կրթությունը տարածեց առանց մի թենիամինի կամ Անանիայի օգնության: Խորենացին այս բոլորը ձևափոխել է Հայրենասիրությամբ: Ինչո՞ւ աղվան լինի Մեսրոպին օգնողը. ավելի լավ չէ՞՝, որ հայ լինի. և եթե հայ է լինելու, անշուշտ պետք է որ աղվաներեն իմանա, այսինքն դառնաշնորհաւոր թարզման»: Եվ ո՞ւր կարելի էր գտնել այդպիսի աղվանագետ շնորհալի մի հայ թարզման, անշուշտ Աղվանից ամենամոտիկ նահանգում, այն է Սյունյաց մեջ: Այսպիսով աղվան թենիամինը դառնում է հայ և այնպիսի մեկը, ինչպես ներկայացնում է Խորենացին:

§ 4

Կաղանկայտվացին (Բ գ) բառացի հետեւում է Խորենացուն. ուստի ամենեին հետաքրքրություն շի ներկայացնում, հետեւար և առանձին քննության արժանի չէ:

Բայց Օրբելյան, որ բացի Խորենացուց, օգտվել է նաև Պետրոս Սյունյաց եպիսկոպոսից, շատ ավելի է մեծացնում ինդիրը: Ըստ Օրբելյանի՝ թենիամին, ինչպես և Անանիա, Մեսրոպի ընտրելագույն աշակերտներից են. Սյունյաց երկրի առաջին թարզության ժամանակ (տե՛ս գլ. վեցերորդ, § 3), Մեսրոպ այս երկուսին նշանակեց թարզման և ուսուցիչ. իսկ երկրորդ թարզության ժամանակ (տե՛ս նույն տեղը) Անանիա եպիսկոպոս ձեռնադրվեց և թենիամին նշանակվեց Սյունյաց ընդհանուր զպրոցական տեսուչ: Սյունյաց աշխարհի երկրորդ լուսավորությունից հետո, Մեսրոպ Աղվանք գնացած լինելով, խնդրեց Անանիայից, որ իր մոտ գա: Անանիա իր հետ վեցերոց թենիամինին,

գնաց Աղվանք և երեքով միասին հնարեցին աղվաներեն գրերը, զպրոցներ բաց արին, կռապաշտության մնացորդները սրբեցին։ Այնուհետև Անանիան (ոչ թե Մեսրոպ) դրոցների և թարգմանչական գործի վրա վերակացու թողեց Բենիամինին և ինքը Աղվանից թագավորից ստանալով շքանշան, դարձավ Սյունիք։ Ահավասիկ այս հետաքրքրական պատության հարազատ բնագիրը։ «Եւ յետ զայս յարդարելոյ» (այն է՝ Անանիայի դպրոցներ բանալուց հետո) առեալ ընդ ինքեան զթենիամին՝ գնաց յաշխարճն Աղուանից առ թագաւորն եսվաղէն ի խնդրոյ Մեսրոպաց։ և արարին ի միասին գիր ազգին այն ընդ խեցրեկագոյն լեզուի նոցա, զմնացեալ կռապաշտութիւնն սրբեցին, և աստուածային վարդապետութեամբն լուսաւորեաց զաշխարճն կրկին անգամ։ և եթող զթենիամին անդ ի վերայ թարգմանութեան դպրոցաց մանկուոյն, և ինքն Անանիա կամեցաւ անդրէն զառնալու հսկ թագաւորն Աղուանից եսվաղէն, որ էր առաջին Շապհոյ Արտաշրեան Պարսից թագաւորի թոռն քեռ, պատիւ արարեալ նմա՝ երախտացոյց լինի և պարզեէ զիւր նշանակն թագաւորական ոսկէտուտն վառիւ և ի գուտին գումատ ոսկի և ի վերայ խալ պատուական։ Եւ հրամայէ զայն հանապազ շրջեցուցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն Սինեաց ի յիշատակ թագաւորացն Աղուանից։— Զայս ցուցանէ մեզ սուղ ինչ Մովսէս քերթողահայրն և զբովանդակն ճշշգրիտ աշակերտ նորին՝ Պետրոս Սիմեաց եպիսկոպոս (Օրբելյան, ԺԵ):

Հնթերցող նկատում է, թե ինչպիսի՞ ցավալի դրության է հասցված Մեսրոպի գործունեությունը, որի բովանդակ արժանիքը տրվում է Սյունյաց Անանիա եպիսկոպոսին։ Ստիպվում է մարդ մտածելու, թե այսպիսի հանգամանքներում ավելի լավ չէ՞ր, որ Մեսրոպ ամենակին շշարժվեր Վաղարշապատից, և Անանիային հրաման ուղարկեր գալ Աղվանք, գրերը հնարել ու ժողովրդին լուսավորել։ Այս բոլորը արել է Օրբելյան՝ տեղական հայրենասիրությամբ, բարձրացնելու համար Սյունիքի պատիվը, Սյունեցուն տալով մի ամբողջ երկրի լուսավորությունը, որին իրեւ գնահատություն թագավորն էլ իր թագավորական նշաններն է շնորհում։ Գուցե Օրբելյան Աղվանից գահն էլ տար Անանիային, եթե եպիսկոպոսը կարողանար թագավոր դառնալ։ Դժբախտաբար կորած է Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի պատությունը, որ միջոց պիտի տար մեզ գտնելու այն միջին աստիճաններից մեկը, որից հետզհետերաձրանալով, Օրբելյանը հասել է այնպիսի այլակերպ չափազանցության։ Խորենացին այս աստիճանների մեջ գեռ շատ ցածր

տեղ է գրավում։ սրա մոտ Անանիայի դերը շատ երկրորդական է, և ամեն ինչ ընկնում է Բենիամինի վրա։ Մինչև իսկ կասկածելի է, թե արդյո՞ք ըստ Խորենացու Անանիա մասնակցեց գրերի գյուտին, գնաց Աղվանք Մեսրոպի մոտ, թե միայն Բենիամին գնաց։ Անանիայի մասնակցության համար Խորենացուց հանվելիք ապացուցը միմիայն մի տառ է (թ), որ զնելով՝ կարող է Անանիան հանդիստ նստել իր եպիսկոպոսական աթոռի վրա և բավականանալ միայն Բենիամինին ուղարկելով։ «Եւ կոշեալ զթենիամին ուն շնորհաւոր թարգման, զոր անդանդաղ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց Տէր՝ ի ձեռն Անանիայի եպիսկոպոսի իւրոյ, ուռվի ստեղծ զնշանագիրս...»։ Ենդագիր բառի Ֆ ձայնը պահանջում է, որ Բենիամինի հետ զոնե ուրիշ մեկն էլ օժանդակած լինի Մեսրոպին։ Զի էլ կարելի կարծել, թե այստեղ Ֆ գրչագրական վրիպակ լինի, որովհետեւ նույնը հաստատում է նաև Խորենացուն ստրկորեն հետևող Կաղանկայտվացին, ասելով։ Հնակօֆ ստեղծ զնշանագիրս կոկորդափառում... լեզուին Գարգարացոց։ Բայց հաստատ է թվում, թե Խորենացին այս Ֆ-ով չէր ուզում ակնարկել Անանիային, քանի որ հակառակ պարագային պետք պիտի լինի ասել ոզոր անդանդաղ արձակեաց... հանդեռ Անանիայի եպիսկոպոսաւ իւրով։ և ոչ թե ի ձեռն, այն է «միջոցով»։ Եթե Անանիայի միջոցով է ուղարկում, նշանակում է, թե Անանիան չի գնում։ Ուռվի ձեր արդարացնելու համար մնում է ընդունել, թե Մեսրոպի ու Բենիամինի գործակիցը Աղվանից երեմիա եպիսկոպոսն էր։ ուռվի հարաբերականը թեւ շատ հեռու, բայց կարող է նաև այս անձը հարաբերել։ Եվ անշուշտ այսպես է հասկացած նաև Կաղանկայտվացին, որի բառերը հետևյալներն են. «Եկեալ երանելին Մեսրոպ յԱղուանս՝ մեծավաստակ ընտիր անօթ Հոգուն Սրբոյ, առ հայրապետն մեր երեմիա և թագաւորն Արսավելին, որոց կամաւ առեալ յանձն զվարդապետութիւն նորա որ ըստ շնորհելոյ նմա յաստուածուստ պարզեին։ Հայոց և Վրաց ետ նշանագիր ի ձեռն նորա հովի սուրբ, հաճեցան և հետոն զմանկունս ընտիրու յուսումն, և զթենիամին թարգման կոշեալ ի Սիւնեաց, զոր Վասակ մանուկ ի ձեռն Անանիի եպիսկոպոսի արձակեաց։ Եւ նորա եկեալ առ Մեսրոպ, Հնակօֆ ստեղծ զնշանագիրս» (Կաղանկայտվացի, թ թ)։ Գրեթե այսպես է նաև Վարդան, որ իրեւ Մեսրոպի ընկեր՝ միայն Բենիամինին է ճանաշում։ «Եւ զնացեալ յԱղուանս, ստեղծու և նոցա գիր ըստ նոցա լեզուին, ձեռօք Բենիամինին՝ որ անտի աշակերտացաւ նմա» (Վարդան, էջ 51)։

Ուրեմն Օրբելյանի ամբողջ պատմության հիմնաքարը Խորենացու խոսքի մեջ հարաբերյալը լավ չորոշելն է. և այդ հիմնաքարի վրա է բարձրանում Անանիայի ամբողջ անդու գործունելությունը, որ գուցե Մեսրոպի ստվերին էլ արժանի չէ:

Մեզ նման չի մտածում դժբախտաբար Վենետիկի Միթթարյան բանասեր Հ. Բ. Սարգսյանը, որ, իրու բացարձակ ճշմարտություն ընդունելով Օրբելյանի խոսքերը, շափազանց պահասկցնում է Մեսրոպի գերը և ընդհակառակը մեծացնում Անանիայի գերը Աղվանից լուսավորության գործում:

Մեսրոպը, ինչպես տեսանք, աղվաներեն տառերը հնարել էր Հունահայաստանում, էլ ուրեմն ի՞նչ պետք կար նորից հնարելու Աղվանքում: Այդ տառերը հնարելու համար իր օգնության էր կանչել աղվան թենիամին քահանային, էլ ի՞նչ պետք ուներ Սյունիցի Անանիային: Նվ ինչ դատարկ ու անբովանդակ խոսքեր են «տառերը... անոնց կենդանի բարբառներուն հարմարցնելու մասին Անանիայի պետք ունեցավ»:

Հիմնական մեծ պակասությունը, որ գրտնում ենք Սարգսյանի մոտ, այն է, որ նա Անանիային համարելով ոսկեդարյան հեղինակ և երեց թարգմանիչների կարգից, նրան է վերագրում երկու գրվածք, որոնք ոսկեդարյան հայերեն չեն: Ահավասիկ մի քանի օրինակ հետոսկեդարյան հայերենի:

Հենց սկզբից (էջ 1) «Յաղագս Յովհաննու... բացահայտելով... վասն որո՞յ պատճառի» ոսկեդարյան չեն:

Էջ 2, տող 5 (ներքեւից) Փարբամուրեամբ.

Էջ 3, տող 14 (ներքեւից) պատճոյց և տող 12 բացարել.

Էջ 4, տող 3 և 9 նրաշու.

» 7 անքարայինի.

» 8 անզերծանելի.

» 10 անփախչելի.

» 9 (ներքեւից) պարապնդեալ.

» 6 (ներքեւից) արտափնեալ.

և այսպես բազմաթիվ բառեր: Չեմ խոսում ոճերի, դարձվածների և քերականական սխալների մասին:

§ 5

Մեսրոպ Աղվանքից հեռանալով, միտք ուներ անցնել վրաստան, իր հիմնած գրպոցներին և իր հոտին այցելություն տալու համար Աղվանքից Վրաստան երթալու կարճ ճանապարհը, եթե պետք էր Աղվանից երկրի հարավային սահմաններից անցնել, էր իհարկե Կուր գետի մյուս երեսը, որ ուղղակի հասցնում էր Տփդիս. կամ եթե պետք կար երկրի ավելի հյուսիսային սահմաններից անցնել, պետք էր Եաքե Ռստանից (նուիսի) անցնել դեպի Կապիձան (Ճաքաթալա), այս տեղից էլ դեպի Սղնախ ու Տփդիս: Բայց

Մեսրոպ ոչ առաջին ճանապարհը բռնեց և ոչ վերջինը, այլ կարու ժողովրդին ավելի հոգ տանելու համար, իշավ դեպի հարավ, և երկի Ռատի նահանգից անցնելով՝ դիմեց դեպի Գարդման: Գարդմանաձոր հասնելու վրա էր, և ահա Գարդման զավառի Խորենու իշխանը դիմավորեց նրան, և աստվածասեր երկյուղածությամբ Հյուրընկալություն ընծայելով Մեսրոպին, ինչպես և իր կառավարած երկիրը (Գարդման), նրա տրամադրության տակ որավ: Կորյունի խոսքերից հայտնի չէ, թե Մեսրոպ հապաղեց Գարդմանում և այս հապաղման ժամանակ ի՞նչ արավ: Բայց ի նկատի ունենալով իր գործունելության անսահման թափն ու եռանդը, անկարելի է լընդունել, թե Մեսրոպ Գարդմանում էլ մնաց զոնե մի փոքր ժամանակ, նույն երկրի կրոնական ու կրթական պահանջները լրացնելու համար Խորենացին Գարդմանի քարոզությունը զնելով Բաղասականի քարոզությունից անմիջապես հետո (Կաղանկալավացին էլ Սյունյաց քարոզությունից հետո՝ Հու, Բ դ), հետեւյալ պատճառներն ու գործունելությունն է ընծանալում Մեսրոպին: Եթե Մեսրոպ Բաղասականում զբաղված էր կոռապաշտական աղանդի մնացորդները զնշելով, լսում է, թե նույն աղանդի վարդապետների ընկերներից մի քանիսը անցել են Գարդման. ուստի Գարդմանաձորվ անցնելով, զայիս գտնում է նրանց և ուղիղ հավատին զարձնում: «Ինքն դառնայ (ի Բաղասական կողմանց) զԳարդմանայ ձորովն. զի և ի նմալուալ լինել լընկերաց նոցին աղանդոյն: Զորս գտեալ, ածէ և զնոսս ի զիտութիւն ճշմարտութեան, հանդերձ վերստին ուղղութեամբ իշխանին Գարդմանայ, որում անոն էր Խորս» (Խորենացի Գ կ): Վերջին «Հանդերձ վերստին ուղղութեամբ» ձեր մութ է, բայց հնթաղրել է տալիս, թե Գարդմանի Խորս իշխանն էլ հակված էր նույն կոռապաշտական աղանդին և Մեսրոպ իր քարոզությամբ վերադարեց ուղիղ հավատին: Վերջապես Խորս իշխանը վայելելով Մեսրոպի քարոզության օգուտները, ուղիղիր եղավ նրան դեպի Վրաստան. «Անուաւելագոյն իսկ վայելեալ ի հիմք և ի պարարտութիւն վարդապետութեանն, յուղարկէ զերանելին ուր և երթալոցն էր» (Կորյուն, էջ 20):

§ 6

Նույն ժամանակ Վրաստանում դեռ նոր թագավոր էր նստել Արձիւլ. «Առ որով ժամանակաւ Արձիւլ անուն թագաւորեալ Վրաց» (Կորյուն, էջ 20). «Առ որով ժամանակաւ Արձիւլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց» (Խորենացի Գ կ): Ինչպես տեսանում ենք, թագավորի անունը մի քիչ շփոթ է. Կորյուն զնում է Արձիւլ, Խորենացին Արձիւլ, ուրիշ ձեռագիր՝ Արշիւլ: Սա նույն անձն է, որ Վրաց

պատմության մեջ կոչվում է Արշիլ և որի մասին խոսեցինք վերևում։ Անոնների տարբեր ձևի համար հետևյալ դիտողությունն եմ արել Արարատա հանդեսի 1898 թվականի էջ 314-ի ժանության մեջ։ «Վրացի ցերեն բառից երևում է, որ մեր ձեզ սիսալ է և այս սիսալը առաջացել է մեր երկաթագիր Զ և Զ տառերի նմանությունից»։ Կորյունի հնագույն բնագրում գրված էր ԱՐՁԻԼ, որ հորենացու մի ձեռագրում դարձավ ԱՐՁԻԼ, հետո ԱՐՁԻԼ, Կորյունի մի որիշ ձեռագրում ԱՐՁԻԼ, վերջապես հորենացու բոլորգիր ձեռագրում Արշիլ ձևն ստանալուց հետո, և և շրջորդիր տառերի նմանության շփոթությամբ դարձավ Արշիլ։

Արշիլ թագավորը շերմեռանդ և ուսումնասեր մարդ էր. հոգ տարավ ավելի ծաղկեցնելու Մեսրոպի ձեռքով վերանորոգված քարոզչությունն ու նրա միջոցով հիմնված կրթական գործը. «որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն» (Կորյուն, էջ 20)։ Երբ Մեսրոպ եկավ Վրաստան, նորանոր քարոզություններ անելու նպատակ լուներ, այլ այցելություն տալ իր հիմնած դպրոցներին և աշակերտներին, հորդոր կարդալ նրանց ու քաջալերել ուսման մեջ։ Այս պատճառով մանեկավ ամբողջ երկիրը, ուր որ դպրոցներ ու աշակերտներ էր կարգել. «եւ նորա շրջեալ զամենայն աշակերտօք, պատուիրեալ կալ ի ձշմարտութեանն»։

§ 7

Մեսրոպ գեռ բռն Վրաստանում էր, երբ Գուգարաց նահանգի Տաշրաց գավառի իշխանը՝ Աշուազ, հրավեր ուղարկեց Մեսրոպին՝ գալ նաև իր իշխանության տակ գոտնված բաժինը վարդապետելու Այս իշխանը, որի անունը Կաղանիայտվացին (Բ գ) դնում է Հաշտուշտ. և որին «այլ պատուական և աստուծասէր» ածականներն է տալիս Կորյուն, Հայոց լորս նշանավոր իշխաններից մեկն էր և կոչվում էր որդեաշխ Գուգարացւոց» կամ «որդեաշխ Վրաց»։ Մեսրոպ, միշտ պատրաստ դիմելու այնտեղ, ուր աշ-

խատանքն է կանչում, ընդունեց հրավերը, անցավ Գուգարաց նահանգը՝ Տաշիր: Աշուազ թի' իր անձը և թի' իր ամբողջ գավառը Մեսրոպին հանձնեց. «ի ձեռն տայր նմանն ամենալյ զաւառովն իւրով»։ Իսկ Մեսրոպ այստեղ էլ ընդարձակ շափով ուսում և քրիստոնեական վարդապետություն տարածելուց հետո, գավառը հանձնեց Վրաստանի Սամվել եպիսկոպոսի ինամարկության և ինքը դարձավ գեպի Մեծ Հայք: «Եւ նորա ամենասփիւր վարդապետութիւնն, ոյինչ պակասութեամբ՝ քան զայլոցն զաւառաց անցուցեալ» (Կորյուն), կամ նույնիսկ ավելի քան բոլոր մյուսները. «ուր երթեալ լաւագոյնս վարդապետեաց, և հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն» (Խորենացի Գ կ):

Մեսրոպ եկավ Վաղարշապատ, ողջույն տվակ Սահակին ու ամենքին, պատմեց նրանց իր նոր գործերը, «որք իբրև լուան, առաւել գոհանային զարգեացն Աստուծոյ»:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ

1. Մեսրոպ Վաղարշապատում իսկույն անցնում է Աղյանեմի Չողա մայրաքանակը. Աղյանից Արավաղեն քազավորը և Երեմիա կարողիկոսը սիրով ընդունում են երան. աշակերտներ հավաքեցին, դպրոցներ բաց արին և հիմք դրին աղյաներեն գրականության։— 2. Մեսրոպ գնաց Բաղասական աշխատեալ նետ երանց մեջ էլ բարողեց։— 3. Խորենացու տված սիալ տեղեկությունները Աղյանից բարոգրության առիվի։— 4. Օրբելյանի նօխարանությունները։— 5. Վրաստան այցելելու համար Աղյանից մեկնելավ, Մեսրոպ նախ մտավ Գարդման, նետու անցավ Վրաստան։— 6. Նոր էր զան բարձրացել Արձյուղ (իսկականն էր ԱՐՁԻԼ), որի օգնությամբ Մեսրոպ ման եկավ ամբողջ Երկիր՝ կրթության գործը բաշակերելու համար։— 7. Գուգարաց Աշուազ թղեշխի երավերով Մեսրոպ գնաց Տաշիր, այստեղ էլ բարողեց և Երկիրը հանձնեց Վրաց Սամվել եպիսկոպոսի ինամարկության։

Գ Լ Ո Ւ Խ Ն Ն Ե Բ Ո Ր Դ

ՄԵՍՐՈՊԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

§ 1

Ինչպես Մեսրոպի աշխարհական կյանքի և իր գործունեության առաջին մասի վրա եղած տեղեկությունները սակավաթիվ են, սակավաթիվ են նույնպես գրերի գյուտից և գրական շարժման սկզբնավորությունից հետո իր վերջին օրերի մասին եղած տեղեկու-

թյունները։ Արա համար պիտի բավականանանք Կորյունի տված կարծառութ և ընդհանուր խոսքերով ու Մովսես Կաղանկայտվացու անվատակելի տեղեկություններով։

Կորյունը պատմում է, թե Սահակ և Մեսրոպ երկրում այն երևելի շարժումը գլուխ բերելուց հետո, իրենց անձը տվին ուսում-

նասիրության, իրենց ամբողջ ժամանակը, գիշեր ու ցերեկ, նրանք հատկացրել էին Ս. Գրեքի ընթերցանության, և սրանով բարի օրինակ էին հանդիսանում իրենց աշակերտներին ու բոլոր մերձավորներին. «Եւ այնպէս զամենայն ժամանակս իրեանց՝ ընթերցուածս Գրոց ծախէին հարբն՝ զտիւ և զգիշեր, և նովիմբ ծաղկեալք և շահաւետնել՝ օրինակ բարեաց ուսումնաէր առութերակայից լինէին. մանաւանդ զի ունէին պատուիրանս. զգուշացուցիչ յաստուածակարգ պատգամաւորացն, յորոց առաջինն հրամայէ, թէ Յօրէնս Տեառն խորհեցիս ի տուէ և ի գիշերի. և երկրորդն հանգոյն պատուիրէ թէ Մի' տ զիր ընթերցուածոց միաթարութեան վարդապետութեան, մի' անփոյթ զշնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեա՛ և ի գոյն յամեսչիր. զայդ եթէ առնիցես և՛ զանձն ապրեցուացես, և՛ զայնոսիկ որ քեզն լսիցեն» (Կորյուն, էջ 21):

Այս ուսումնասիրությանց հետ զուգընթաց ընթանում էին նաև նորանոր թարգմանություններ, որոնցով երկու հայրերը նորածիլ հայ գրականությունը ճոխացնել էին ուղում: Կորյունն ասում է Մեսրոպի համար, թե գրեց մի խումբ ճառեր, որոնց մեջ հատկապես հոգ էր տարել լեզվի՝ պարզության, ժողովրդին ավելի դյուրամատշելի դարձնելու համար: Այս աշխատությանց մասին ավելի մանրամասն խոսել վերապահելով առանձին գլխի, անցնենք շարունակելու Մեսրոպի վերշին օրերի կյանքը:

Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհները լուսավորելուց հետո, Մեսրոպ իր գրական գործունեությունը վերջացած չհամարեց, այլ ավելի եռանդով այցելություններ էր անում միշտ ժողովրդին, աշակերտներին և իր հիմնած դպրոցներին, մոտիկից հսկելու համար նրանց կացության վրա, ցուց տալու նրանց թերությունները և քաջալերելու արժանավորություններն ու առավելությունները: Ամառ և ձմեռ, գիշեր ու ցերեկ, ասում է Կորյուն, անվեհեր ու անդանդաղ քարոզությամբ պարապեց, թագավորների, իշխանների, հեթանոսների և հակառակորդների առաջ Քրիստոսի անոնը քարոզեց, ամենքի սիրութ հոգեոր եռանդով լցրեց, շատ բանտարկյալների ու կալանավորների ազատեց, շատ նեղալների բռնավորների ձեռքից խլեց, շատ սպավորների ու հուսահատների աստվածային հույսով միհիթարեց, շատ անիրավ մուրհակներ պատուց և առհասարակ ամենքի սրտում ճշմարիտ հավատը զորացրեց. «Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից, զամենան ժամանակս կենաց իրոց, զամառն և զմենոն, զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարա-

նական և ողջապատում զնացիքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց, և ամենայն հեթանուաց և անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անոն կրեաց յանձին: Եւ զամենայն ոգի բրիստոսազգեստ և հոգեղին վառեաց, և բազում բանդականաց և կալանաւորաց և տագնապելոց և բռնաւորաց թողութինս արարեալ՝ կորզեալ զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուրհակս անիրաւութեան պատառեաց, և բազում սպաւորաց և կարճամտելոց՝ միհթարական վարդապետութեամբն զակնկալ յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի նօթճեաց. և զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդ փոխեաց» (Կորյուն, էջ 22):

§ 2

Մեսրոպ հոգ տարավ նույնպես ճգնավորական կյանքը զորացնելու, որ ինչպես տեսանք վերը, անմիտ մենակեցությունից հեռու ուսումնական ինքնակրթական նպատակներ ուներ այն ժամանակ: Հաստատեց վանականների բազմաթիվ խմբեր՝ գյուղերում և անապատներում, դաշտերում և լեռներում, անձավներում և քարայրներում: Ինքը շատ անգամ անձնապես օրինակ տալ ուղելով այս վանականներին, մենաստաններից իր հետ էր առնում մի քանի աշակերտների և նրանց հետ լեռների քարայրները քաշվելով՝ ճգնության էր տալիս իր անձը նրանց հետ. «Զորս ընդ ժամանակս օրինակ տալ ուղելով այս վանականներին, մենաստաններից իր հետ էր առնում մի քանի աշակերտների և նրանց հետ լեռների քարայրները քաշվելով՝ ճգնության էր տալիս իր անձը նրանց հետ. «Զորս ընդ ժամանակս ժամանակս օրինակ տալ ուղելով այս վանականներին, իսկ օրինակ տակախիթ եղեալ, զառօրէական զկերակուրն խոտաբուտ ճաշակօքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձն տային: Մանաւանդ որոց հայեցեալ ի միհթարութիմ առաքելական բանիցն, թէ Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ. և թէ կաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ լիս զօրութիւնն Քրիստոսի» (Կորյուն, էջ 22):

Կորյուն նկարագրում է նաև այն կյանքը, որ Մեսրոպ իր աշակերտների հետ անց էր կացնում քարայրներում՝ ճգնավորության ժամանակ: Զկար այնտեղ, ասում է, գինիով արքեցություն, այլ հոգու առավելություն. Նրանք իրենց սիրոտը պատրաստում էին հոգեոր երգերով՝ Աստուծոյ փառքի և գովության համար. հոգեշահ գրքեր էին կարդում այնտեղ՝ այս ընթերցումներով իրենց հոգին կրթելու հեմար: Մեծ ուսուցիչը քաշալերում և հորդորում էր իր աշակերտներին ավելի և

ավելի առաջադիմության համար։ Եռուն էր ամենքի հոգին աստվածային պաշտամունքով և աղերսալիր աղոթքներ էին բարձրանում միշտ առ Աստված՝ ամենքի բարօրությունը խնդրելու համար։ «Անդ էր այնուհետև շարբենալ գինով, այլ առաւելով հոգելով, և պատրաստել զսիրս երգօք հոգետորք, ի փառս և ի գովութիւն Աստուծոյ։ Անդ աղօթք աղերսալիր, և խնդրուածը հաշտցոցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուծօ» (Կորյուն, էջ 23):

Այսպես էին անց կացնում Մեսրոպ և իր աշակերտները իրենց ճնական կյանքը՝ մշտական աղօթքի, ընթերցանության և ուսման մեջ. նրանք այդ անապատներում մնում էին մինչև որ այն կողմէ եկեղեցիների երեցներից հրավեր էին ստանում կարևոր մի գործի համար օգնության հասնելու։ Այն ժամանակ Մեսրոպ իր գործակից աշակերտների հետ անմիջապես թողնում էր անապատը և հասնելով այնտեղ՝ ուր կանչված էր, կատարում էր խնդրված գործը, և իր հորդապատքարողականությամբ ամենքի սրտի մեջ բխում էր աստվածային վարդապետության շնորհները։ Այսպես ապրեց Մեսրոպ իր ամբողջ կյանքը՝ իր երկրի և իր աշակերտների համար, իր ժողովրդի և գիտության համար, օրինակ ունենալով Հիսուսին, որ քարոզում էր և սովորեցնում, բայց իր քարոզածները առաջին անգամ իր անձամբ էր կատարում։ «Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնն՝ կանոն աշակերտելոցն դնել, մանաւանդ յուշ առնելով դտէրունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ. քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել...» (Կորյուն, էջ 23):

§ 3

Մովսես Կաղանկայտվացի պատմագիրը (Ա. իէ) պատմում է, թե Մեսրոպ Աղվանից քարոզությունից հետո, այսինքն իր գործունեության այս վերջին շրջանում, երթապահեմ ուխտի գնաց և վերադարձին եկավ Ուտյաց և Աղվանից կողմերը քարոզելու։ Որքան էլ անվավեր լինի այս պատմությունը, այնուամենայնիվ կարող է գոնե մասսամբ ճշմարտություն պարունակել, ուստի հարկավոր ենք համարում Կաղանկայտվացու հիշյալ պատմությունը թարգմանությամբ դնել այստեղ։ Աղվանից Գրիգորիս կաթողիկոսի նահատակությունից հետո, Արևելքի բարբարոս ցեղերը նորից ընկան կուսաշտության մեջ, և ատրուշաններին ովհատ կատարելով՝ հալածանք հանեցին քրիստոնեության դեմ։ Նախկին վարդապետներից մեկը, որ Սուրբ Հոգու շնորհիվ երեք աղջերի՝ Հայոց, Աղվանից և Վրաց գրերը հանրեց, և նրանից հետո Ս.

երրուսաղեմ ուխտի գնաց, իր աշակերտների հնտ այնտեղից զարձած ժամանակ, իր հնտ բերավ արծաթեղեն ոսկեհյուս մի խաչ, որի մեջ ագուցված էր նաև Քրիստոսի խաչից մի մաս։ Հայաստանից անցնելով՝ ճանապարհ ընկավ նա գեպի արևելյան սահմանները՝ Ուտյաց զավարաց, եկավ բնակվեց Գիւ կոշված տեղի մոտ, ճախճախուտ և լուսաբուլյա ճահճաներում։ Անյտեղ նորոգելով քրիստոնեության հավատը՝ ամուր հիմքերի վրա դրավ. Ավետարանի քարոզությունը տարածեց Ուտյացոց, Աղվանից, Լիխնաց, Կասպից աշխարհներում, Զորա դուռը և ուրիշ բաղմաթիկ ժողովուրդների մեջ, որ Ակեսանդր Մակեդոնացին իրեն գերի բերել և բնակեցրել էր Կովկաս լենաների շուրջը. Գարգարներին և Կամիճիկ Հեփթաղներին հավատի բերելով՝ սովորեցրեց աստվածպաշտության կարգը, որ վաղուց արդեն սովորած ու մոռացած էին։ Եվ այս խուժագութ լեռնակներին քարոզիչ և առաքյալ դառնալով՝ ծանոթացրեց նրանց իրենց լեզվով գրականության։ Այստեղից դարձավ եկավ բնակվեց ճահճներում, դժբնակ իշխանների սպառնալիքից ծածկվելու համար։ Այստեղ անտառներում պահվելով՝ օրեցօր զորացնում էր Աստուծուն եկեղեցիները։ Շուտով մոլորության ոգին գրգռեց զազանացած բռնակալների միտքը, որոնք զայրագնած աշխատում էին գտնել և սպառնել նրան։ Սակայն երանելին Մաշտոց՝ Սուրբ Հոգուց աղդվելով, փութաց մի փոս փորեց ինչպես հարկն էր, և այդ գետնափոր տեղը դնելով՝ աստվածային գանձը՝ այն է տերունական խաչը, ծածկեց այնտեղի Այնուհետև իր հավատարիմ և իրեն նման աշակերտները միասին աղոթքի և խնդրվածքի ապավինելով՝ փոխադարձ կամքով երկու խմբի բաժանվեցին. առաջին խմբի մի մասը գավառները գնաց, իսկ մյուս մասը դիմեց զանազան աշխարհներ քրիստոնեությունը քարոզելու և իսկ մյուս խումբը խաչի գտնված տեղում քիլ ժամանակ հետո մարտիրոսական պատակ ընդունեց. նրանց նահատակության տեղի վրա լուսեղեն նշաններ և հրաշքներ տեղի ունեցան, որ շատ անգամ տեսնելով անհավատները և հասկանալով, թե մեծ Աստուծուն շան է ան, բոլորն էլ հավատում ու մկրտվում էին։ Նորահավատներից մեկը, որ շատ անգամ տեսել էր այն նշանը, խաչի գետնափոր կայանի վրա, հողե քառակոսի մի մատու շինեց և տափառակապատ մի տապան պատրաստելով՝ նրանց նշանարները այնտեղ ամփոփեց. ամեն տարի էլ ուխտի գնալով՝ կատարում էր նրանց հիշատակը. շատերը նույն տեղում թժկություն էին գրտենում։ Հավատացյանները հաստատելով՝ այս տեղերում, հետղիներե շատացան. և նախ

հիմք գնելով խաչի գտնված տեղը, եկեղեցի կանգնեցին. այդ տեղը առաջ կոչվում էր Հին Եկեղեցի, իսկ այժմ Գիս է կոչվում: Շատ ժամանակ հետո, Առաջնաշիկ տոհմից Վարապետության վեհազգի մի իշխան ուղենալով նորոգել Հին Եկեղեցին, չկարողացավ քանդել գմբեթի աղյուսաշար պատերը, որովհետև այնտեղ էին բնակվում տերունական խաչն ու նահատակների նշխարները:

§ 4

Կաղանկայտվացին հաջորդ ի՞լ, ի՞թ և լ գլուխներով պատմում է, թե ո՞վ եղավ Մաշտոցի հաջորդը, ի՞նչպես Ռոսմոսոքյան թագավորը արշավեց Ռույաց վրա և կոտորեց Մեսրոպի աշակերտներին, ի՞նչպես Թեոփիլոս զորավարը հավատաց և նահատակվեց. Այս բոլորը տալիս է ինչ-ինչ տեղեկություններ նրա մասին, ուստի հարմար ենք համարում ի՞լ գլուխն էլ թարգմանել, իսկ մյուս երկու գլուխների նյութը ամփոփելով ներկայացնել այստեղ:

«Սուրբ Մաշտոցից հետո թիւ ժամանակ անցած, իր այն աշակերտները, որ գտնվում էին Աղվանից կողմերում, Սուրբ Հոգու ազգումով միաստեղ հավաքվելով ու խորհրդակցելով՝ աշխատեցին մի լավ արդյունքի հասնել «Ի՞նչ պիտի անենք մենք, ասացին, երբ նա, որ մեր լուսավորության պատճանն էր, վախճանվեց. և ահա մենք իրանից որք մնացինք. եկե՞ք, եղբայրներ, զնանք երսաղեմ աստվածային քաղաքը և մեղ առաջնորդ խնդրենք, որովհետև այս արևելյան երկրի առաջին լուսավորությունը Սուրբ Եղիշեի միջոցով՝ երուսաղեմից է սկսած»: Այն ժամանակ նրանք պատրաստվեցին, երեք խմբի բաժանվեցին և Աղվանից կողմերից դուրս գալով՝ դիմեցին դեպի Ասորեստանի սահմանները, և հետո երուսաղեմ հասան, ուր մտնելով աստվածաբնակ եկեղեցին, երկրապացեցին ամենակեցուց Կենաց Փայտին Այնտեղ հանդիպեցին Հոգեպահը աստվածապարդ հայրապետին, ողջույն տվին եկեղեցուն և նրանցից ընդունվեցին խոնարհ սիրով: Սուրբ Մաշտոցի ջանքն ու աշխատանքը բովանդակ պատմեցին սուրբ հայրապետին, թե ի՞նչպիսի հրաշքներով բարբարուները դարձի եկան: Որ նրանք լսելով, մեծ ուրախությամբ ընդունեցին, շատ խնամք ու մեծարանք ցույց տվին. այնտեղ մնացին շատ օրեր և իրենց կողմը դարձրին երեք աստվածասեր քահանաների, որոնցից առաջինն էր Աթանասիոս. աղաշական խոսքերով համոզեցին նրանց գալ իրենց. հետ, որպեսզի իրենց երկրում առաջնորդ նստեցնեն: Նրանք երկրապատճյուն և ուխտ կատարելով, երանավետ համբույրով ողջունեցին սուրբ պատրիարքի

ուները և նրա հրամանով ճանապարհ ընկնելով, մշտական ուրախությամբ հետ դարձան ոսկեղեն և արծաթեղեն սպասներով և աստվածային բոլոր սրբություններով շատ նշխարներով, քահանաների հետ: Քառասնորդաց պասի յոթերորդ շարթում, Զատիկին եկան հասան Արցախի անտառուտ երկիրը՝ Մեծ Կուևնից գավառը: Ճանապարհի կիրճերում երկու խմբի բաժանվելով, մի խումբը մնաց կատեղ բլրի հյուսիսային կողմը, իսկ երկրորդ խումբը Տրտուական (Թարթառ) գետից այն կողմ անցնելով, բնակվեց մայրապատ հովտի հարավային կողմը՝ Զղար կոշված պորակում, որովհետև ուստի ուստի էին արել Սուրբ Զատիկը այնտեղ տոնելու (գլուխ ի՞լ):

Նույն ժամանակները Ռումոսոքյան թագավորը իր զորքերով, Թորելական զնդով և Հոնաց բանակով անցնում է Կով գետը և հարավի է արշավում՝ Հայոց, Վրաց և Աղվանից վրա: Մի խումբ էլ գալիս է Մեծ Կուանք, կոտորում է Մեսրոպի հիշյալ աշակերտներին, որոնք երաւաղեմից առաջ ներավարի էին բերել: Զորավարի ձեռքն է ընկնում թագուհի անոնով ուտեացի մի գեղեցկուհի, որին զորապետը ուրացնելով կին առնել էր ուզում: Բայց նա Հոփիսիմեի նման դիմաղրելով, վերջապես նահատակվում է, որի վրա լույս ծագելով, զորապետը հավատում է և մկրտվում (գլուխ ի՞թ): Ռումոսոքյան թագավորը վրա է հասնում և երկար համոզելուց հետո, նահատակել է տալիս զորավարին՝ 30 զինվորներով, 2 որդիներով և նրանց հետևող զնդով (գլուխ!):

§ 5

Կաղանկայտվացու երկրորդ հատորում (գլուխ ի՞թ, լ, լԱ և լԳ) պատմվում է հսրայել ճնավընը տեսիլքը, որով Հայտնվում են Մեսրոպի աշակերտների բերած մասունքները Զղախում: այս առթիվ եպիսկոպոսները թուղթ են գրում Աղվանից Ուփտանես կաթողիկոսին և Զվանշիր հշխանին, սրանց հրամանով Սուրբ Խաչը Պերոժապատ մայրաքաքն են տանում: Այնտեղ Ուփտանես և Զվանշիր երկրապագելով նրան, թուղթ են տալիս վերապարձնել իր վանքը: Մի տարի հետո, նույն հորայելը ցանկություն է ունենում գտնելու նաև Մեսրոպի խաչը. զագդումն ցանկութեան յոյժ ունէր սուրբ երէցն խնդրել զփափագելի խաչն՝ զծածկեալն սրբոյն Մաշտոցի ի Գիս անուանեալ գիւղն, որ յԱւտի գաւառից: Վերջապես իր հետ առնելով կրոնավոր մի եղբայր, գնում է Հին Եկեղեցին և փորելով գտնում է Մեսրոպի խաչը, «որ ունէր առհասարակ հայ, հոռոմ և ասորի գիր և ցուցանէր ի նմա գոլ զմասն կենդանարմատ փայտին.

և կայր անդ նշանն Քրիստոսի արծաթաձոյլ գեղազանեալ ոսկիհաղօտ տեսակաւ, որ յաւէտ ի խաչին Քրիստոսիս: Լուրջ հոչակվում է, լուռմ են Եղիազար Հայրապետու ու Զվանշիրը, Հրամայում են իրենց բքրել այդ խաչը: Նրանք տանում են. Եղիազար և Զվանշիր «ակն յայտնի զնորոգափայլ խաչն Քրիստոսի տեսանէին, որ Սրբոյ Մաշտոցի իր իսկ ձեռացն լեալ էր, որով դարձուցանէր զաշխարհս Աղուանից ի կողցն մոլորկենէ լուսածնութեամբ աազանին շնորհաց» և երկրպագում են նրան: Հետո խըմբով գնում են Գիս և օծում խաչն ու Եկեղեցին: Եղիազար Մեսրոպի խաչի մեջ եղած կենաց փայտից մի մասը հանում է և 120 զահեկանի ոսկու մեջ պատշաճելով, կանգնեցնում է Գիսի եկեղեցում:

§ 6

Գիսի խաչից հետո նշանավոր է նաև Գագա Ս. Սարգսի խաչը, որ Պարսկաստանից է բխում և Մեսրոպին վերագրվում: Ահա ինչ որ գտնում ենք այս մասին մեր հին մատենագրության մեջ:

Առաջին տեղեկությունը տալիս է «Յայսմաւուրք»-ը (Արաց ԻՌ-Հունվարի 31), հետեւյալ ձևով:— Ս. Սարգսի Պարսկաստանում Մազանդարանի մեջ նահատակվելուց հետո, թաղվել է Համիան քաղաքում. «Եւ յետոյ եկեալ մեծ վարդապետն Հայոց Ս. Մեսրոպ, և առեալ զուրբը մարմինն Սարգսի և տարա ի յոտն Արագածու և եղ պատուվ ի Յուշի (կամ ի Ուշի), մօտ ի գիւղաքաղաքն Կարրի, և արար զտեղին վանք Հոչակաւոր, որ է մինչև յայսօր Եւ առեալ տարամն մի յատամանց Սրբոյն Սարգսի և տարեալ ի Վրաց տուն ի դաշտն Դագայ, եղ ի մէջ փայտեալ խաչի. և օծեալ զիաշն՝ կանգնեաց ի վերայ գագաթան բլրին Գագայ, որ կոչի մինչև յայսօր Գագայ Սուրբ Սարգսի և առնէ մեծամեծ նշանս և սքանչելիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերժյալ:— Այս Ուշիի վանքի մասին տեղեկություն է տալիս նաև Առաքել Դավրիժեցի (տպ. 1884, գլուխ Իջ, էջ 270—271). Հետեւյալ բառերով, «Այսպէս և վանքն Սրբոյն Սարգսի զօրավարին՝ որ է ի գիւղն Ուշի, շինեալն ի Սրբոյն Մեսրոպայ մեծ վարդապետէն մերոյ որ և սա մերձ է ի գիւղն Կարպի, որ ի ստորոտս Արագած լիրինն...»: Այսուհետև պատմում է նույն վանքի նորոգումը Փիլիպոս կաթողիկոսի աշակերտ Ուկան վարդապետ Երևանցու ձեռքով:

¹ Բնագիրը կազմել եմ Թավրիզում գտնված երեք ձեռագիր «Յայսմաւուրք»-ների և տապարի համեմատությամբ Զեռագրերն են՝ № 47, էջ 279, № 48, էջ 360 և № 49, էջ 283.

Երկրորդ տեղեկությունը տալիս է Վարդան պատմիլը (Վենետիկ, 1862, գլուխ ԶԵ, էջ 145). «Գագ, անուանի բերդ և գաւառ ի Դագկայ թագաւորէ շինեալ, որ կայ հոչակաւոր և սուրբ ուժան խաչ և եկեղեցի յանուն Սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ ի Սրբոյն Մեսրոպայ վարդապետէն և թարգմանչն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարածած»:

Երրորդ տեղեկությունն ունի Կիրակոս Գանձակեցին (գլուխ ԻԲ, էջ 134). «Եր ի Գագի խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, մանաւանդ առ գերիս. զի որք ապահովէին ի նա բոլորով սրտիւ, ինքն իսկ Սարգսի բանայր զդրունս բանտից, և արգելլոցն լուժանէր զերկաթս, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս. զոր կանգնեալ ասեն զնա Սրբոյն Մեսրորայ վարդապետին մերոյց»:

Վերջապես շարորորդ մի փոքր տեղեկություն էլ գտնում ենք Ս. Սարգսի շարականի մեջ. «Խաչաշարշար սուրբ դիտապետ նշանագործ անուամբ ի խաչ և յեկեղեցի. առաւել պայծառ ի գլուխս Գագայ, ի գագաթան տեղուցն օրհնեալ Սրբոյն Մեսրոպայ»:


Սրա նման մի փոքրիկ տեղեկություն էլ տալիս է Մաղաքիա արեղան (Հրտ. Պատկանյանի, էջ 34). «Երթեալ ի Գագ առ ատենահաս Ս. Սարգսին, զոր օրհնեաց երանեին և սուրբ վարդապետն Մեսրոպա»:

Ավելորդ եմ համարում պատմել թուրքերի արշավանքները Գագա խաչի վրա և խաչի ազատումը հրաշքով, ինչպես պատմում են Սամվելը. Անեցին, էջ 138 և Վարդան պատմիլը (579=1130 թ.), էջ 123:

Ա. Մ. Փ. Ո. Փ. Ո. Ի. Մ.

1. Մեսրոպը շարունակում է իր գրական և ուսուցչական գործունեությունը:— 2. Իր աշակերտների նետ հանախ եգեական կյանք. է վարում:— 3. Կաղանեկայտվացին մի սուս պատմություն ունի, որ իր թե այդ ժամանակ Մեսրոպը գնացել է Երևանին, նետը բերել Սուրբ Խաչը, բնակվել Գիսի համեմեներում և մոռացված բրիսոնենությունը նորոգել մինչև Հյուախային Կովկաս և մինչև Հնիքալենը:— 4. Մեսրոպի մահից նետո իր աշակերտները գնում են Երևանաստան և իրենց համար առաջնորդներ քերում. Հյուսիսի բագավորը նահատակում է քոլորին:— 5. Խորայել եգեակալոր գտնում է Մեսրոպի խաչը Գիսում:— 6. Սի այսպիսի խաչ էլ Մեսրոպը կանգնեցրել է Գագում Ս. Սարգսի անունով:

(Շարունակելի)



ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՍՅՐԲԵՆՄՐԱՆՆԵՐԸ ԺԹ ԵՎ Ի ԴՅՄԵՐՈՒՄ

(Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՇՆՍԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Հծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի ձևանդամներին 1600-ամյակի առթիվ «Էջմիածին» ամսագրում գրածս հոդվածաշարի առաջին մասում (1959 թ., ԺԱ, էջ 38—44), որը կրում է «Մեսրոպ Մաշտոցը որպես գրուառյաց», խորագիրը, մենք տեսանք, որ մեր զիրը հորինողը ոչ միայն անմահ է որպես հայ գրականություն և ազգային դպրոց սուհղծող, Հայ Եկեղեցին ասորական և հունական լեզուներից ազատող, այլև որպես մեծ լեզվաբան և հանճարեղ մանկավարժ:

Ինչպես առաջին հոդվածի խորագիրն է ցույց տալիս, այդուղ լուսաբանվել է անմահ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի մանկավարժական բազմաբեղուն գործունեության միայն մի բնագավառը և գրուառյան հեգական մեթոդով կաղմամատակ մանկավարժը հայ այրբենարանների մանրազնին ուսումնասիրության հիման վրա ցույց է տրված, որ մեր բազմավաստակ մանկավարժը հայ դպրոցի ուսամության մեջ ամենապատվավոր տեղն է գրավում ոչ միայն որպես նրա հիմնադիրը, այլև որպես մեր առաջին գրուառյաց ուսուցիչը, առաջին հայ այրբենարանի (ուրեմն և առաջին հայ դասագրքի) հեղինակը, հայերենի գրուառյան հեգական մեթոդի հիմնադիրը, ուրիշ խոսքով, հայոց լեզվի առաջին մեթոդաբանը:

Մեսրոպ Մաշտոցի «սիրոբայիկ կապօք» նորինած նշանագրերը (այսինքն՝ Մեսրոպյան այրբենարանը) 1500-ից ավելի տարիների ընթացքում հրատարակվել է առանց հեղի-

նակի անունը հիշատակելու սկզբում, իհարկե, ձեռադիր, իսկ 1567 թվականից՝ նաև տպագիր:

Հեգական մեթոդով կաղմամատ Մեսրոպյան այրբենարանները համարյա նույնությամբ 1567—1920 թվականներին 10 երկրների շօքաղաքներում տպագրվել են «Քերական կամ այրբենարան», «Քերական որ է այրբենարան», «Տետրակ այրբենական», «Համառոտ այրբենարան», «Այրբենարան համառոտ», «Տետր այրբենական», «Դիրք այրութենից» և այլ անուններով, հաճախ «յարմարեալ իվալ ժամանակաց» ենթավերնագրով:

Սկսած ԺԵ դարից, Թովմա Մեծոփիցու և շատ ուրիշների կողմից Մեսրոպյան այրբենարանի մեջ մտցվում են բազմապիսի բարեփոխումներ:

ԺԵ—ԺԷ դարերում լույս տեսած այսպիսի բարեփոխված (ուրիշ խոսքով՝ Մեսրոպյան նորաձև) այրբենարանների մասին խոսվել է իմ երկրորդ հոդածում («Էջմիածին», 1960. թ., էջ 34—42), իսկ սույն երրորդ հոդածում խոսվելու է ԺԹ և ի դարերում լույս տեսածների մասին, որոնցից առայժմ հաջողվել է ձեռք բերել և ուսումնասիրել հետեւալները.

1. Սարգիս Աղայավելյանց, «Տետրակ այրութենական», Մադրաս, 1809.

2. Հովհանն Աղանուրյանց, «Այրբենարան կամ Աղանուրական կարգ ուսմանց», Կալկաթա, 1824.

3. Մինաս Վարդապետ Բժշկյան, «Վարժութիւն մանկանց», Վենետիկ, 1824, Թ տպ. 1888.

4. «Սկիզբն ընթեցանութեան հայկական տասից կամ նոր, զարենալի և դիւրին այրքենարան և հեգերէն», Վիեննա, 1825, թ տպ. 1893.

5. Գրիգոր դպիր Փեշտիմալճան, «Փեղան լեզուագիտութեան», Կ. Պոլիս, 1827.

6. «Հայնակ և մանոնակ», Վիեննա, 1834.

7. Աղեքսանդր Խուռարաշչյանց, «Գիրք հայկարութեան հայկագիտան լեզուի», Պետերուրդ, 1838.

8. Հակոբ և Դավիթ Արզանյաններ, «Այրքենարան հայոց ի պէտա նորուառուն մանկանց», Տփխիս, 1838.

9. Կարապետ Պողոս, «Նախադրութ վարժութեան», Մոսկվա, 1838.

10. Գրիգոր ավագ սարկավագ Սուքիանց, «Այրքութենք հայոց և ուսաց», Մոսկվա, 1839.

11. Մեսրոպ Թաղիադյանց, «Մեսրոպիան այրքենարան», Կալկաթա, 1840.

12. «Այրքենարան և հեգարան նոր կարդալ սկսող տպայոց համար», Զմյուռնիա, թ տպ. 1844, ե տպ. 1851, 60 էջ.

13. Արսեն վարդապետ Բագրատունի, «Նոր այրքենարան և հեգերէն», Վենետիկ, 1850.

14. Մտեփանոս Նազարյան, «Առաջին հոգին կերակուր», Մոսկվա, 1853.

15. «Նոր այրքենարան կամ սկիզբն ընթեցանութեան հայոց հանդերձ կարեւոր գիտելօք», Տփխիս, 1854.

16. Ռափայել Պատկանյան, «Նոր այրքենարան հայկական», Պետերուրդ, 1856.

17. Զարմայր Մսերյանց, «Նոր այրքենարան հայերէն լեզուի», Մոսկվա, 1856.

18. «Առաջին դասագիրք մանկանց», Նյու-Յորք, 1861.

19. Հովհաննես Թերթերյանց, «Այրքենարան հայկական լեզուի», Մոսկվա, 1858.

20. Ճանիկ Արամյան, «Դասարան հայկագիտանց», Փարիզ, 1860.

21. Ամբրոսիոս վարդապետ Գալֆայան, «Պատկերագր այրքենարան մանկանց», Փարիզ, 1860, թ տիպ 1861.

22. Մկրտիչ վարդապետ Տիգրանյան, «Այրքենարան բիւրդերէն և հայերէն», Կ. Պոլիս, 1861.

23. Մարտիրոս վարդապետ Մժեմյանց, «Նոր այրքենարան կամ բանալի հայերէն վերծանութեան», Երուաղեմ, 1861.

24. Ներսես Մեզպուրյան, «Առաջնորդ հայ ընթեցանութեան կամ նոր բերական», Կ. Պոլիս, 1861, թ 2 տպ. 1909.

25. Զարմայր Մսերյանց, «Նոր այրքենարան հայերէն և ուսացեն», Մոսկվա, 1863.

26. «Նոր այրքենարան կամ ընթեցարան հայկագիտանց», Թիֆլիս, 1865.

27. Նահապետ Թոփլյան, «Այրքենարան նոր և դիւրիմաց ոնով», Թեոդոսիա, 1865, թ տպ. 1868.

28. Հովհաննես քահանա Խաչյան, «Այրքենարան համառու», Կալկաթա, 1870.

29. Գարեգին վարդապետ Սրվանձտյան, «Նոր բնիքեցարան», տետրակ Ա, Կ. Պոլիս, 1870, թ տպ. 1875.

30. Բագարատ Արթինով., «Դիւրուսոյց այրքենարան, հեգարան և ընթեցարան հայկագիտանց», Կ. Պոլիս, 1872, թ տպ. 1873.

31. «Բանալի Սուրբ Գիրքը բանալու», Նոր Յորք, 1875, թ տպ. 1883.

32. Հ. Գ. Առնառույան, «Այրքենարան կամ առաջին գիրք մանկանց», Տփխիս, 1902.

33. «Այրքենարան հայերէն և ուսացեն», Ալեքսանդրովու, 1907, թ տպ. 1908.

34. Հ. Գ. Առնառույան, «Քերական կամ այրքենարան», Տփխիս, 1908.

35. «Նոր բերական», պատկերազարդ, Կ. Պոլիս, 1920:

ԺԹ և ի գարերում Մեսրոպյան նորաձև այրքենարաններ այնքան շատ են տպագրքել, որ հնարավոր չէ նախորդ հոդվածի ձևով դրանցից ամեն մեկի նկարագրության և վերլուծության վրա կանգ առնել առանձին-առանձին, ուստի բավկանանալու ենք միայն ընդհանուր ակնարկով, ծանոթանալու ենք այրքենարաններում կատարված բարեփոխություններին և նորամուծություններին, ըստ գրուստացման շորո շրջանների:

Ա. Սկսենք տառանունները սովորելու կամ տառանախաչության շրջանից, որին մեծ մասամբ հատկացվում են այրքենարանների առաջին երկու էջերը, երրեմն մեկ (№ 5, 9, 14), երրեմն նույնիսկ վեց (№ 21) և անգամ յոթ էջ (№ 34): Հնաձև այրքենարաններում սովորաբար տրվում էր մեկ էջ:

Բուն տառանախաչության ուսուցումը հեշտացվում է նրանով, որ

1. Այրքենարանի առաջին էջում մեծ մասամբ տրվում են միայն փոքրատառերը, իսկ № 26-ում մեծատառերը նույնիսկ տրվում են հեգերի բաժնից հետո:

2. Որպեսզի գրապատկերները լավ տպավորվեն աշակերտների հիշողության մեջ, № 13, 22, 23, 24, 30, 32, 33, 34 և 35 այրքենարաններում այրուենը սկզբում շատ խոշոր 1—2, նույնիսկ 5 էջերում (№ 20) տրվում է հաստ. թափ, մեծ մասամբ տառերը առանձին վանդակների մեջ առած: Իսկ Արսեն վարդապետ Բագրատունին այրքենարանից (№ 13) առաջ դրան տալիս է 10 էջ:

3. Գրապատկերներն իրարից հեշտությամբ տարրերելու համար № № 12, 15 և 26 այր-

**Ե Ա Ր
Շ Ո Յ Թ Ե Կ Բ Ա Տ**
Կ Ե Մ

Պ Ֆ Ո Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ս Ա Մ Բ Ե Ր Ե Ր Ա Ց Վ Ո Բ Ը
Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ս Ա Մ Բ Ե Ր Ե Ր Ա Ց Վ Ո Բ Ը



1854—Հ Ա Վ Ր Ա Խ Ո Բ Ը

Դ Տ Բ Խ Ո Բ Ը

Ա Ռ Ա Ր Ա Բ Ա Խ Ե Խ Ո Բ Ս Ա Մ Բ Ե Ր Ե Ր Ա Ց Վ Ո Բ Ը
Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ս Ա Մ Բ Ե Ր Ե Ր Ա Ց Վ Ո Բ Ը
Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ս Ա Մ Բ Ե Ր Ե Ր Ա Ց Վ Ո Բ Ը

բնիարաններում տրվում են նաև նմանաձեռներում՝ «իրարև նման» գրեր, օրինակ՝ ատ, թշ, դժ, ձժ և պղին:

4. Տառերը կանոնավոր և ճիշտ արտասահմանային վարժեցնելու համար տրվում են նաև «նմանանելուն» (№ 15, 16) կամ «ձայնակից» գրերը (№ 24): Այդ այրենարաններում հատուկ ուշադրություն է դարձվում ուղղափառության վրա՝ աշակերտաներին նմանանելուն եռաստիճան բաղաձայները (թ, պ, փ, կ, կ, ք, թ, ր....) կանոնավոր արտասահմանի սովորեցնելու վրա: Այս մասին Ռ. Պատկանյանը 1856 թվականին Պետերբուրգում լույս ընծայած իր «Նոր այրենարան հայկական»-ի էջ 13-ում գրում է: «Հարկ անհրաժեշտ կայ ի վերաց ուսուցչաց զառանձին ուշադրութիւնն աշակերտաց դարձուցանել յանսուիկ տառո որոց հնչինք առաւելապէս նմանին միմիանց, որպիսի են թ պ փ, գ կ ք, դ թ թ, ձ ծ ց, շ ն խ դ, ո ր զի նորքամի ի գործ դիցեն զմին փոխան միւսոյն, այլ զիւրաքանչիւրն պարզ և մեկին արտասահմանենաւ: Խսկ 1854 թվականին Թթիլիսի ներսիսան պարոցի հրատարակած «Նոր այրենարան»-ի էջ 40—44-ում տրվում են նաև

«մէկ քանի տառերի հնչմանց վրայ հարկաւոր ժանօթութիւններ», «որտեղ ասվում է, թե ե՞րբ յ տառը չի հնչվում, ե՞րբ հնչվում է որպէս կիսաձայն և ե՞րբ՝ բաղաձայն. խոսվում է նաև դ տառի մասին բառի սկզբում, միշտում և վերջում. ե՞րբ է ուն վ կարդացվում. ե՞րբ է իւ-ը իվ կարդացվում և ե՞րբ՝ յու: Տրվում են օրինակներ և կատարվում են վարժություններու թայց, իհարկե, սրանք ավելի շուա տրվում են ուսուցիչների համար:»

5. Հետագայում կարդալու դժվարությունները վերացնելու նպատակով՝ «Մեսրոպյան նորածեալ այրենարանների տառանանշության բաժնում նեցերին անցնելուց առաջ տրվում են փակագրերը (մե, մէ, մի, մկ, մն, վն)` «միմիանց հետ կապած գրերը» (№ 15), «յարակիցք» (№ 24), «տառք կիցք» (№ 28):

6. Այրութենը մեքենայորեն անգիր անելու դեմ պայքարելու համար, բացի հնաձեկ այրենարաններում եղած տառերի պէէս պասավորությամբ տրված այրութեններից, գործածվում են նաև հուեառաջությամբ տըրված քառատառերի (քաղց, զերէ... № 1-ում), այրութենի սկզբի և միշտ տառերից համակցած երկատառերի (ան. թմ. զն. եղ. զո... № 22-ում) և այլ զուգակցումներ:

— 5 —

Տ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Պ Ա Զ Գ Ա Փ Ք Փ

Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Վ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Լ Ի Վ Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Զ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Ք Ա Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Վ Ա Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Վ Ա Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Ա Մ Վ Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Վ Ա Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Վ Ա Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Վ Ա Շ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը
Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը Հ Ա Մ Ե Ր Ա Խ Ե Խ Ո Բ Ը

ընծայած իր շատ մատչելի և բառիս լայն իմաստով՝ ժողովրդական այրբենարանում (№ 29) աշակերտներին տառածանալ է դարձնում տառերի հնչունային անունները (ա, բ, գ, դ, թ) տալով հենց սկզբից՝ գրուաւցման առաջին դասից:

10. Սակայն այս շրջանի ամենամեծ առավելությունը կարդալը գրելու հետ միասին անցնելն էր, որ թարմություն և բազմազանություն էր մտցնում պարապմունքների մեջ։ Այս նպատակով համարյա բոլոր Մեսրոպյան նորածն այրբենարաններում արվում է նաև նոտրգիր այրուբենը, ըստ որում երբեմն նույնիսկ այրբենարանն սկսվում է նրանով (№ № 3, 6) և նոտրգիրը կոչվում է նաև ձեռաց գիր։

«....Թողումք հին ժամանակի այն նախապարմունքը, որ մինչև Սաղմոս շավարտէր աշակերտ մի, գիր սովորելու չեխն նստեցունէր, որով միայն ընթերցանութիւն սովորելու համար տարիներ կը կորսընցունէին։ Ուրիշ ազգաց այս մասին բռնած ընթացքն ու մեր վարժարանաց մէջ եղած քանի մը փորձերը յայտնի կը ցուցանեն, թէ աշակերտ մի այսօր սկսեց այրբենարան, այսօր կրնայ գիր ալ սկսիլ, ամենակին շնայիլով լաւ կամ վատ գրելուն։ Այս ընթացքին օգուտն այն է, որ տղայն ընթերցանութիւնը շուտ կը սովորի, սովորածը կանոնաւոր կ'ըւլայ. թութակի պէս բերականի բառերը բերան առնելով լսովրիր և միանգամայն

Ծ Հ Հ Յ Հ Յ Հ Յ

ա ւ թ ժ դ է զ ջ ջ է լ թ թ թ թ թ թ թ
հ հ ա զ ա մ ս հ հ հ հ հ հ հ հ հ հ
է մ թ թ թ թ թ թ թ թ թ թ թ թ թ թ

ա ր դ դ դ դ դ դ դ դ դ դ դ դ դ դ դ
կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ կ

հ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ
ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ
ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ
ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ ա յ

մ դ ։

Այս մասին շատ որոշակի խոսում է Գաբեգին վարդապետ Մրվանձոյանը իր այրբենարանի (№ 29) առաջարանում. «Նոտր գիր դնելով՝ ուզեցինք, որ մանկտին կարդալ սկսելուն հետ՝ գրել ևս սկսի ուսանիլ։ Զայս կը խնդրենք յատկապէս վարիչներէն. շատ դիւրութիւն կ'ընծայէ մանկտոյն՝ տառերի ձեւերը ճանաչել գրելով և գրել ճանաչելով։»

Գրուաւցմանը հենց առաջին օրից գրել սկսելու անհրաժեշտության մասին հանգամանորեն խոսվում է նահապետ Թոփչյանի այրբենարանում (№ 27).

գիրն ալ հետը կը սովորի բաւական ուղղագրությամբ։»

Այս հարցում գործնական մոտեցում է ունենում Ռաֆայել Պատկանյանը, որը 1856 թվականին Պետերբուրգում լուս ընձայած իր «Նոր այրբենարան հայկական»-ում 4 թերթ վայելլագրական օրինակներ է տալիս այրբենարանի վերջում որպես հավելված։ Այդ մասին նա այրբենարանի առաջարանում գրում է. «Ի վերջ ամենայնի յաւելաք զգաղափարս վայելլագրութեան, որ

Հայութ Ժ. Ե.						
Հայկաթագիր:						
Բ	Բ	Գ	Դ	Ե	Զ	Կ
Փ	Ւ	Լ	Խ	Ե	Զ	Վ
Ջ	Ո	Ր	Ե	Շ	Շ	Ա
Տ	Ո	Վ	Շ	Շ	Զ	Ֆ
Ռ	Ո	Վ	Շ	Շ	Շ	Ց
Օ Ֆ						
Հայութ Ժ. Ե.						
Ա	Ա	Բ	Բ	Գ	Գ	Վ
Ազգ	Բնդ	Հայկ	Հայա	Տեղ	Տեղ	Տեղ
Արք	Ճճու	Ղազա	Ղազա	Խառ	Խառ	Խառ
Գիր	Խճչ	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ
Դաշ	Շճու	Մարտ	Մարտ	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ
Եղբ	Խոս	Անցու	Անցու	Մարտ	Մարտ	Մարտ
Զահ	Շուշ	Նախու	Նախու	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ
Լոշ	Խոս	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ	Շիմանկ
Ռազ	Հապ	Ծան	Տեղ	Ծան	Տեղ	Ծան
Ռազ	Հապ	Ծան	Տեղ	Ծան	Տեղ	Ծան
Հայութ Ժ. Ե.						
Հայութ Ժ. Ե.						
Հայութ Ժ. Ե.						
Հայութ Ժ. Ե.						
Հայութ Ժ. Ե.						
Հայութ Ժ. Ե.						
Հայութ Ժ. Ե.						

առ ի շգոյէ գեղեցկագունից՝ ու սակաւ օգուտ և զիւրութիւն ընձեռեն թի՛ աշակերտաց և թէ՛ ուսուցչաց»:

թ. Անցնենք գրուսուցման երկրորդ՝ վանկեր և առանձին միավանկ բառեր կարդալու կամ գրականության շրջանին, որին Մեսրոպյան նորածն այրբենարաններում հատկացվում է հեգերի բաժինը մինչև երկվանկ բառերը:

ինչպիսի՞ բարեփոխություններ են կատարվել հեգերի այս մասում:

1. № 3, 16, 18, 20 և 26 այրբենարաններում հեգերը սկսվում են փակ երկտառ վանկերով (աք, եք, էք...), իսկ № 7-ում՝ խառն (բաց և փակ վանկերով՝ բա, աբ, բե, եբ) վանկերով: Իհարկե, փակ վանկերը գիրկապ անելն ավելի հեշտ էր: Այնինչ, Մեսրոպյան հնածն այրբենարաններում փակ վանկերը տրվում էին 210 բաց վանկերից հետո:

2. Այստեղ հեգերի բաժնի ձևավորումը ավելի հաջող է, քան հնածն այրբենարաններում: Վանկերի քառասուները իրարից անշատված են գծերով (№ 4) կամ զգալի տարածություններով (№ 24), տրվում են մասնաւորերի (№ 30), համարների (№ 29), դասերի (№ 26, 31) բաժանված: Իսկ

Զ. Մսերյանցը 1856 թվականին Մոսկվայում հրատարակված իր տեսությունագիր (№ 17) գիրկապ անելը հեշտացնելու նպատակով փակ վանկերի առաջին ձայնավոր տառը (ա, ե, է, ը, ի, ո, օ) տալիս է յուրաքանչյուր տողի սկզբում, իսկ երկրորդ բաղաձայն տառը (բ, գ, դ և այլն) յուրաքանչյուր սյունակի վերևում, այսպես

ԴԱՍ Ե.

թ	գ	դ	զ	թ	պ	ծ
Ա Աբ	ազ	ադ	ազ	աթ	աթ	ած
Ե Եբ	եզ	եդ	եզ	եթ	եթ	եծ
է էբ	էզ	էդ	էզ	էթ	էթ	էծ
Ը Ըբ	ըզ	ըդ	ըզ	ըթ	ըթ	ըծ
Ի Իբ	իզ	իդ	իզ	իթ	իթ	իծ
Ո Ոբ	օզ	օդ	օզ	օթ	օթ	օծ
Օ Օբ	օզ	օդ	օզ	օթ	օթ	օծ

3. Միավանկ բառերն աստիճանաբար են երկարացվում, նախ տրվում են երկտառ, ապա՝ եռատառ, հետո՝ քառատառ և վերջում հնագատառ բառեր (№ № 16, 35):

4. Մեսրոպյան նորածն այրբենարանների շնորհիվ լայն տարածում է ստանում գիրկապը հնչունային անվանատվությամբ (բաղաձայնը լոկ ըթ-ով արտասանելով): անել տալը, որը, ինչպես տեսանք, հեշտացնում էր գրաւուցման աշխատանքը:

5. Հնածն այրբենարանների այս բաժնում միօրինակ ձևով տրվում էին միայն 1 200 երկտառ վանկեր և միավանկ բառեր, այնինչ, նորածն այրբենարաններից մի բանիսում (№ № 12, 26, 35) միավանկ բառերը տրվում են համարների կամ դասերի բաժնած, ըստ որում յուրաքանչյուր դասում չորսական սյունակով 30—40-ական բառը և բառերից հետո երկուական սյունակով 12—36-ական նախադասություն բաղկացած սկզբում՝ երկու, ապա՝ երեք և չորս բառերից: Իսկ 1850-ական և 1870-ական թվականներին նյութառքում տպագրված Մեսրոպյան նորածն այրբենարաններում (№ № 18, 31) երկու և երեք բառերից բաղկացած նախադասություններ են տրվում նույնիսկ եռագիր միավանկ բառերից առաջ, այսինքն՝ «երկագիր» վանկերից հետո, ինչպես տեսնում ենք էջ 57-ում:

ինչ խո՞սք, որ երկտառ և եռատառ կարծ բառերով նախադասությունները գրաւուցման պարագմանքները հենց առաջին դասերից դարձնում են բովանդակալից, հետաքրքրական և գրավիչ:

Գ. Այս շատ արժեքավոր նորությունը մտցվում է Մեսրոպյան նորածն այրբենա-

ԴՐԱՄԻ ԴԵՎՈՒՄ			
1—12.			
Ժ	Թ	Հ	Կ
Ա	Բ	Թ	Հ
Ա	Օ	Օ	Ա
<hr/>			
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ			
Ա	Ե	Ե	Ա
Ե	Ա	Ե	Ա
Ա	Հ	Հ	Ե
Ա	Ե	Ե	Ա
Ա	Ե	Ե	Ա
Ա	Հ	Հ	Ե
Ե	Ա	Ե	Ա
Ե	Հ	Հ	Ե
Ե	Ե	Ե	Ա
<hr/>			
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ			
Ա	Ե	Ե	Ա
Ե	Ա	Ե	Ա
Ա	Հ	Հ	Ե
Ա	Ե	Ե	Ա
Ա	Հ	Հ	Ե
Ե	Ա	Ե	Ա
Ե	Հ	Հ	Ե
Ե	Ե	Ե	Ա

րանների նաև բազմավանկ բառերի հեգերի բաժնում՝ առանձին բազմավանկ բառեր կարդալու կամ վանկակապուրյան շրջանում:

Հնաձև այբբենարանների այս բաժնում տրվում են միայն բառեր (720 երկվանկ, 144 եռավանկ, 64 բառավանկ, 40 հնգավանկ և 40 կեցվանկ բառեր): Այնինչ № 12, 26, 31, 35 Մեսրոպյան նորաձև այբբենարաններում բազմավանկ բառերի յուրաքանչյուր խմբից հետո տրվում են առանձին նախադասություններ անցած բառերից բաղկացած, ըստ որում 1809 թվականին Մադրասում տպագրված՝ Ս. Աղայիկելանցի «Տետրակ այբուբենական»-ում պահանջվում է ընթերցանությունը գիտակցական դարձնել, բացատրել առանձին նախադասությունների բառերը, ինչպես ասված է էջ 44-ում: «Հասկացուցանել նոցա զնշանակութիւնս բառիցն և բանից»: Իսկ Մ. Թաղադրյանը այդ նույնը կատարում է իր բառարանում գործածած համարյա բոլոր բառերի բացատրությունը տալով:

Մակայն այդ այբբենարանների մեջ մենահետաքրքրական վանկակապության մեջ համանմանության (անալոգիայի) եղանակի գործադրությունն է «Առաջին դասագիրք մանկանց» այբբենարանում (№ 18),

որի էջ 16-ում տրված են նկարներ և նրանց տակը համանման բառեր, օրինակ,

նկ. հավ	նկ. մահին	նկ. մարդ	նկ. շուն
հաւ	մահին	մարդ	շուն
նաւ	դահին	յարդ	բուն
քաւ	դամին	զարդ	տուն
լաւ	կարին	բարդ	բուն
ցաւ	կափին	սարդ	մուն

Դ. Վանկակապության շրջանով ավարտվում էր Մեսրոպյան նորաձև այբբենանների բուն այբբենական մասը և սկսվում էր շորորորդ՝ ամբողջական տեքստ կարդալու շրջանը, որին հատկացվում է այբբենարանի նորայինական մասը:

Մեսրոպյան հնաձև այբբենարանները չունեին ամբողջական տեքստեր, նույնիսկ առանձին նախադասություններ: Կարդալու համար այնտեղ տրվում էին միայն անկապառեր, որոնցով աշակերտներին վարժեցնում էին կարդալու տեխնիկային:

Հնաձև այբբենարանից հետո որպես ամբողջական տեքստ սովորաբար կարդում էին «Մաղմուի առաջին կանոնը»:

Մեսրոպյան նորաձև այբբենարանի բովանդակության տեսակետից նորությունն այն էր, որ սկսնակ գրաճանաչ երեխնան պիտի կարդար այբբենարանի նորայինական մասի մատղելի բազմապիսի նյութերը իրեն համար հասկանալի լեզվով:

Կանգ առնենք նորայինական մասի բովանդակության և լեզվի վրա:

Մեր ձեռքի սակ եղած 35 այբբենարաններից միայն № 5-ը չունի ամբողջական տեքստ: Նորայինական մասի ծավալը շատ բազմապահ է: ամենաքիշը բաղկացած է 5 էջից (№ 27, 32), իսկ ամենաշատը՝ 263 էջից (№ 3): Այբբենարանների Փորմատը նույնպես բազմազան է, ամենափոքրը 12×10 սմ. է (№ 29), իսկ ամենամեծը 22×34 սմ. (№ 16):

Այս այբբենարաններից 8-ը երկլեզվան են, որոնցից 1-ը՝ հայ-հունգարերեն (№ 6), 5-ը՝ հայ-ոռուսիրեն (№ № 10, 16, 17, 25, 33), 1-ը՝ հայ-թուրքերեն (№ 5) և 1-ը՝ քրդերեն-հայերեն (№ 22): Այս այբբենարանները հիմնականում հայոց լեզուն շիմացող հունգարախոս, ոռոսախոս, թուրքախոս և քրդախոս հայերին ոչ միայն հայերեն խոսել սովորեցնելու նպատակ են հետապնդում, ուստի կարդալու տեքստը տրվում է երկու լեզվով էլ՝ մեկ էջը հայերեն, իսկ կից էջը՝ ուստի լեզվով և համապատասխան բառարանով:

Ալս 35 այբբենարաւաններից 15-ը (№ 1, 8, 9, 11, 14, 15, 16, 20, 21, 22, 23, 24, 28, 29, 35) անմիջապես ընթերցարանի բաժնին շեն անցնում, այլ բուն այբբենական մասից հետո տալիս են հեգարաւաններ՝ բառերը վանկերի բաժանած: Դրանց մեջ կան աղոթքներ, սաղմուններ, ավետարանից հատվածներ, Հավատու Հանգանակ, Ս. Գրիգորից հատվածներ, առանձին նախաղասություններ և այլն: Վերջիններս երբեմն դասավորված են առանց վերնագրերի, բայց այբբենական կարգով և կրում են բարոյախոսական, խրատական բնույթ, կան նաև իմաստուն խոսքեր՝ ասացվածքներ, առածներ և այլն:

Ընթերցարաւանների բաժնում, բացի վերոհիշյալ նյութերից, կան բազմապիսի, մեծ մասամբ հանրագիտական բովանդակությամբ, գիտությունների բոլոր բաժիններից զանազան նյութեր՝ աշխարհագրությունից, բնագիտությունից, ընդհանուր, կրոնական ու հայոց պատմությունից, աստղաբաշխությունից, թվաբանությունից և այլն, ինչպես և բարոյակրթական և խրատական պատմավածքներ բազմապիսի հետաքրքրական թեմաներով, ինչպես օրինակ՝ իմաստասիրության, հնարագիտության, աղքատասիրության, արդարության, հնազանդության, անհիշաշրջության, ազգասիրության, որդեսիրության, ծնողասիրության, հայրենասիրության մասին: Այսպիսի բազմապիսի նյութերով աշքի էր ընկնում Մինաս Վարդապետ Թժշկյանի «Վարժութիւն մանկանց» այբբենարան-ընթերցարանը:

Հիմնալի և շատ հարուստ նյութեր կային հայրենագիտությունից ծ. Արամյանի «Դասսարան Հայկազն մանկանց այբբենարաւանը ընթերցարանի բաժնում»:

Գրավիլ էին «Հայմակ» և մաճոնակ» այբբենարանի զվարճալի կարճ առանձները:

Առանձնապես ջերմ հայրենասիրական բովանդակություն ունի Գարեգին վարդապետ Սրբանձայանի «Նոր ընթերցարան»-ի ու տետրակառ-ը (Կ. Պոլիս, 1866 թ., թ տպ. 1875 թ.), որի առաջարանում ինքը հեղինակը հետևյալ կերպ է բնորոշում այբբենարաւի բովանդակությունը.

«Այս նոր ընթերցարանը այնպիսի ոճով և նիփով շինեցինք, որ կրնայ դիրութիւն տալ տղոց. քանզի իր փոքրիկ հասակին մէջ տեսած ու լսած քաններ կը կարդայ, որ իր բնութիւն կ'ուզէր բարբառել, նոցա վրայ խօսք կազմել:

Ընդեմ բառերով, պարզ ոճով և զուարձալի եղանակով շինուած այս Հայկական ընթերցարան կը յուսամք ու միայն դիրութիւն տայ մանկուույն, այլ և կրթէ ու սիրելի անէ

նոցա Հայաստանի հայոց ընտանեկան կենցաղարութիւն ու Հայրենի երկրին գեղեցկութիւն և սովորութիւն, որոց նկարագրութեան մասին կը կարդայ այստեղի:

Մանկուույն հետ մանկուի եղած ենք այս գրած ժամանակ և յատուկ ընտրած ենք այն առարկաներ, որք աւելի Հայաստանի մանկուույն տեսանելի, լսելի և զգալի են և որք հայ առարկաներ են՝ քան թէ օտար:

Ուզելով աւելի բնութեան վայելլութեանց բարեկամ ու ծանօթ անել հայ մանկուին, մեծաւ մասամբ դաշտաց, ծաղկանց, թռչնոց, անասնոց, այգեաց և արմտեաց վրայ խօսքեր յօրինած ենք: Նաև կրօնական և բարոյականն ևս մէջ խառնելով շատ տեղ և բուրոյ խօսք՝ տարուան չորս եղանակներով լրացուցած ենք:

Պիսպէս սովորութիւնը, խաղը և տօնք և արտօստք յիշատակած ենք, ուզելով՝ որ նոցա մէջ արդէն կրթուին և գաղթական հայ մանկուին ևս իւր բնիկ Հայրենական երկրին և եղայրց ծանօթ և ընկեր լինի»:

Հեղինակը չէր սխալվում: Նոր ոճով՝ «Մանուկներուն պատշաճ, հասկնալի և սիրելի բառերով և առարկաներով տպագրեալ» «Նոր ընթերցարան» դասագրքերը շատ տեղերէ լաւ ընդունելութիւն գտան» («Գրոց-Բրոց», էջ 14—15). ոչ միայն Կ. Պոլսի հայ մամուլը, այլև ուսուցիչները հեղինակին գրած շնորհակալական նամակներում արտաշայտում էին իրենց գոհունակությունը: Նույնիսկ քառորդ դար անց, 1892 թվականին, «Մշակ» օրաթերթը իր № 144-ում գրում է, որ «Նոր ընթերցարան» այբբենարանը «իր բովանդակութեամբ և մանկական լեզուով Տաճկաստանում հրատարակուածների մէջ դեռ մինչև այսօր առաջինը պէտք է համարել»:

Այսպիսով, մեր բանահավաքման և բանասիրության նախահայրը, հայ աղքագրության անմահ հիմնադիր Գարեգին վարդապետ Սրվանձայանը նաև պատվագոր տեղէ գրավում հայ դասագրքի պատմության մեջ որպես շնորհալի և հայրենասեր հեղինակ:

Այժմ անցնեք Մեսրոպյան նորածեալ այբբենարաւանների լեզվին, որը միշտ գրաբար չի եղել:

Բացառապես գրուսուցման հեգական մեթոդով կազմված այբբենարաւանները լույս են տեսել մինչև ԺԹ դարի 60-ական թվականները: Սակայն գրանից հետո էլ Մեսրոպյան այբբենարաւանների հրատարակությունը զուգընթաց շարունակվում է նույնիսկ մինչև ի դարի 20-ական թվականները հնչունային և նորագույն այլ մեթոդներով կազմված այբբենարաւանների հետ: Այնինչ, գրաբար լեզվով գրված այբբենարաւան-ընթերցարաւանները լոյն

են տեսել մինչև 1856 թվականը (Պետքուրգում Ռ. Պատկանյանի «Նոր այրենարան հայերէն լեզուի»), իսկ 1858 թվականից լույս են տեսնում միայն աշխարհաբար լեզվով։ Հետեւաբար, 1859 թվականը աշխարհաբարի վերջնական հաղթանակի տեսակետից պատմական շըրշապարձային տարի է ոչ միայն հայ գրականության, այլև հայ այրենարանի պատմության մեջ։

Մեսրոպյան այրենարանների հեղինակների մեջ աշխարհաբարի համար առաջին մարտնչողը իրավամբ պիտի համարվի Կղեռապատրա Սարաֆյանը (ինք չհաշվենք 1781 թվականին Տրիեստում լույս տեսած թուրքախոս հայերի համար «Նոր այրենարան», հանդերձ մեկնութեամբ տաճկական բառից հայկական աշխարհաբար լեզուով» հայ-թուրքերեն այրենարանը, որը վերահատարակվել է 1786, 1797 և 1815 թվականներին), նաև 1788 թվականին Պետքուրգում լույս ընծայած իր «Գիրք որ կաշի բանալի զիտուրեան» հայ-ոռուսերեն այրենարան-ընթերցարանում ունի աշխարհաբար հատվածներ, ինչպես այդ տեսանք մեր նախորդ հոգվածում։

Բնչպիս նշված, այնպիս և նման երկեղվան այլ այրենարանները գրվում էին մեծ մասամբ առևտրական հայերի համար և հետապնդում էին գործնական նպատակներ։ Սովորաբար գրանց մի էջը լինում էր աշխարհաբար, մյուս էջը՝ օտար լեզվով։ Այդպիս էին նաև հայ-գերմաներեն երկեղվան այրենարանը 1788 թվականին Տրիեստում («Հայեակ և նեմենեակ, շարագրած յեղիսարէթ հայոց քաղաքը և իր յատուկ խարճովն տիպած վասն պիտոյութեան հայ տղոց Տրանսիլվանիոյ երկրին»), հետագայում հայ-հունգարական երկեղվան այրենարանը 1834 թվականին վեհեննայում («Հայեակ և մանենակ, շարագրած ի Հայաքաղաքան Տրանսիլվանիոյ և տիպացուցած իր քաղաքի խարճովն վասն պիտոյութեան հայ տղոց»), որի էջ 13-ից բերում ենք երկու նախադասություն այրենարանի լեզվին ծանոթացնելու նպատակով։

1. «Մի՛ իստահայ այնպէս բան, ինչին տէր շիս»։

«Անխսմըքութեանը մեջ մի յուսանատուի»։

Նույն նպատակով բերնք մի քանի հատվածներ Մեսրոպյան նորածն սովորական այրենարաններից։

2. «Միահնգամայն պատիկ տղաք իրենց հասակին յարմար խօսակցութիւններ ու շփոցած հարկատը բաներնին ասոր մեջ կարդալով՝ ձանձրութիւն շեն զգար, ու սրբ-

տերնուն մեջ բաղձանք կը վառուի անլի փուրով կարդալ կամ ուրիշ զիտուրիւններ սորվիլ»։

«Աշխարհաբար խօսած ա-տե-նըս պետք չէ խօս-ժիս մեջ օ-տա-րա-կան բառներ խառնեմ, որ-պէս զի խօսած լեզուս խառնած չըլ-լայ, հա-պա մա-նուր ըլ-լայ։ Թէ որ բառ-ի մը աշխարհաբար լեզվով է որ վարպետիս նուր ըլ-լայց»։ Վիեննա, Թ տիպ, 1830, էջ 3-4, 14)։

3. «Եկուր լեզի նետ խօսինք։ Կանուն ելլելը շատ օգտակար է»։

«(Այրենարան և հեղերէն, յերիւրեալ յաշխարհիկ լեզու առ հեշտեաւ մարզութիւն մանկանց տղայոց», Վիեննա, Թ տիպ, 1844 թ., էջ 15)։

4. «Հա յու լեզուն շատ նին լեզուն»։

«Իր լեզուն չ գիտ նա լը ա մօր է»։

«Կար դալ ու բան սոր վիլ սի ըռ-դը՝ մեծ ու պի տա նի մարդ կը լայ»։

(Արսեն Բագրատունի, «Նոր այրենարան և հեգերէն հայերէն շիտակ հեգել սորվելու դպրատանց տղոց համար», Վիեննաիկ, 1850, էջ 76)։

5. «Ե թէ բա րե կամ ներ ես ըս տանում, փոր ծով ըս տու զիր նո բանց և շու տով մի հա աւ տար նոցա»։

«Հա աւ տա րիմ բա րե կա մը զօ բա որ պաշտ պան է, ով որ զը տաւ նո բան զը տած է գանձն»։

(Մտեփանու նազարյան, «Առաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխաների համար», Մուսկվա, 1853 թ., էջ 7)։

6. «Ա մէն կորց բածը կը զը տըն ի, բայց ծա մա նա կը և կեան բը չի զը տարն ի»։

(«Նոր այրենարան կամ սկիզբն բնրեցանութեան հայոց», Տիֆլիս, 1854 թ., էջ 45)։

1788—1858 թվականներին աշխարհաբար լեզվով լույս տեսած այն 6 այրենարաններից բերված քաղվածքները մեզ համոզում են, որ երեխաներին իրենց հասկանալի լեզվով կարդալ-գորել սովորեցնելու փորձերը շատ ավելի վաղ են սկսվել մեր առաջավոր մանկավարժների կողմից և 70 տարվա ընթացքում շատ ավելի ուժեղ պայքար է մղվել աշխարհաբարի վերջնական հաղթանակի համար դասավանդության մեջ, բան այդ նկարագրվել է հայ մանկավարժու-

թյան պատմության և մեր մեթոդական գրականության մեջ:

Ի վերջո, մի քանի խոսք Մեսրոպյան նորածն այլքենարանների արտաքին ձևավորման ժամանակակից կանգ առնենք նրանց պատկերազարդման վրա, որը գրուուցումը հետաքրքրական դարձնելու լավագույն նորություններից մեկն է:

Սկզբում նկարները լինում են առանց տեքստի հետ որևէ կապ ունենալու, գլխավորապես որպես զարդարանք, այլքենարանի գրաշապկի առաջին և երկրորդ էջերում, մասամբ և գրքի միջում, ինչպես օրինակ՝ 1824 թվականին Կալկաթայում 2. Աղանուրյանի (№ 2) և Վենետիկում Մինաս վարդապետ Բժշկյանի (№ 3), 1828 թվականին Կոստանդնուպոլսում Գրիգոր Պափիր Փեշտիմալճյանի (№ 5), 1840 թվականին Կալկաթայում Մեսրոպ Թաղիաղյանի, ինչպես և Ռ. Պատկանյանի, Գարեգին վարդապետ Սրբանձտյանի և թ. Արթինոֆի այլքենարաններում:

Տեքստի հետ կապ ունեցող և ուսուցողական նպատակով նկարներ տրվում են 1830—1860 թվականներին Զմյուռնիայում, Փարիզում, Նյու-Յորքում և մասամբ Մոսկվայում լույս տեսած Մեսրոպյան այլքենարաններում (№ № 12, 22, 18, 31, 17): Այս տեսակետից շատ հետաքրքրական է 1844 թվականին Զմյուռնիայում Դ տպագրու-

թյամբ լույս տեսած «Այլքենարան և հետաքանություն» որի «պատկերազարդության» մասին շատ դրական է արտահայտվող Պերճ Պոռշյանն իր «Հուշիկներ»-ի էջ 12—13-ում (թիֆլիս, 1894 թ.).

«Առաջին այլքենը ես սովորել եմ բերանացի՝ հինգ տարեկան ժամանակս հորիցու, իսկ տառածանալություն՝ եղորիցս:

Հայրս երևանից ուղարկել էր այլքենարանը. մի ամսից նա վերադարձավ և գտավ ինձ վարժ կարդալիս:

Զգիտեմ՝ բնական ընդունակության վերագրելու է, թե դասագրքիս նորածնությանը ու պատկերազությանը, որ ես երկու շաբաթի մեջ վարժ կարդում էի:

Դիպվածով, թե բախտի բերմամբ՝ ինձ վիճակից ոչ այն ժամանակվա ընդհանրացած «Քերական» անվանված դասագիրքը, այլ ժամանակի համար միանգամայն նոր դասագիրք:


Որքան հիշում եմ, Զմյուռնիայի բողոքականաց տպագրություն էր այն՝ տաճկահայ բարբառով և արդի մեթոդով ու պատկերազրդություն:

Նյութի դյուրըմբոննելիությունն ինձ ստիպում էր գիրքը ձեռքից չթողնել. այսպիսով կարձ միջոցում անգիտակցարար գրավարժ վեցիս:

Եվ իսկապես ինչպես կարող էին աշակերտին չհետաքրքրել այլքենարանում տպված կապկի, աղվեսի, արծվի, բվի, ճայի, կաքավի, կրիայի և այլ նկարները:

Ավելի շատ նկարներ կան Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանի 1860 թվականին Փարիզում լույս ընծայած «Պատկերազարդ այլքենարան մանկանց»-ում, որտեղ ոչ թե նախորդ այլքենարանի նման բոլոր նկարները տրված են առաջին երեք էջերում, այլ 100-ից ավելի կենդանիների և զանազան նկարները տրված են միավանկ, երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ բառախմբերի բաժիններում, թե՛ այդ բառերի կարդալը հեշտացնելու և թե նրանց նշանակությունը բացատրելու համար, օրինակ, էջ 30 տրված են աղավնու և թիթեռնիկի նկարները և նրանց տակ համապատասխան բառերը վանկերի բաժանած և նույնը առանց վանկերի բաժանելու Ընդհանրապես, այս այլքենարանը ֆրանսիական նուրբ ճաշակով, բազմաթիվ գեղեցիկ պատկերներով մի սիրուն հրատարակություն էր, — ինչպես ճիշտ նկատում է Լեոն:

Իր գեղարվեստական ձևավորմամբ աշքի էր ընկնում նույն թվականին նույն տեղում, պոլսեցի նախկին գերձակ, ինքնուս շնորհալի հեղինակ, մեծ հայրենասիր ծանիկ. Արամյանի իր նորաբաց տպարանում իր իսկ հորինած տառերով տպագրած «Դաշտարան



հայկազն մանկանց» այրբենարան-ընթերցարանու Այդ ոսկեկազմ, շրեղ հրատարակության մասին հիացմունքով է խոսում Աղեքսանդր Երիցյանը իր «Ը. Արամյանը» հոդվածում. «....Նրա այրբենարանը նշանավոր է ոչ թե յուր մեթոդի կողմից, այլ իբրև շտեսնված ոչ մինչև այն ժամանակը, ոչ մինչև հիմա, մի փառավոր և պատկերազարդ տպագրություն («Փորձ» ամսագիր, 1879 թ., VI, էջ 202—207):

Մինչև այժմ մեր գրականության մեջ հայերենի գրուուցման հեգական մեթոդի մասին գրվել է նկատի ունենալով միայն Մեսրոպյան այրբենարանները և նրանով պարապող խալֆաներին: Հենվելով մեր գրողների երկերում հին դպրոցի գեղարվեստական վերարտադրությունների և հին դպրոցի դեմ պայքառող Խ. Արովյանի, Պ. Պողյանի, Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Ղ. Աղայանի, Ս. Մանդինյանի, Ա. Բահաթրյանի և ուրիշ մանկավարժների ամենախիստ արտահայտությունների վրա՝ մեր մամուլում հաճախ ընկել են շափազանցության մեջ և անհիմն կերպով եղրակացրել, թե հայերենի գրուուցման հեգական մեթոդի մեջ ոչ մի փոփոխություն չի եղել, ոչ մի նորություն չի մտցվել. այդ մեթոդով կարդալ և գրել սովորեցրել են միշտ նույն «այր-ժե-ճեռա»-ի ձևով, ինչպես Տեր-Թողիկի (Րաֆֆի), գյուղական խալֆայի (Ալ. Արարատյան), Մկրտիչ Վարպետի (Ռ. Պատկանյան), տիրացու Մոսիի (Մուրացան), Շապոյի և Վահան խալֆի (Պ. Պողյան) դպրոցներում: Հեգական մեթոդը համարվել է «բարբարոսական ու սպանիչ» (Լիո), «տաժանակիր, որով 3—4 տարվա ընթացքում հաղիկ էին գրագետ դառնում» (Տ. Ռաշմանյան), «քնարեր ու մահաշունչ» («Արևելյան մամուլ»), «անհոգի և հոգեսպան» (Ս. Մանդինյան), իսկ այդ մեթոդով կազմված բոլոր այրբենարանները՝ տանջանքի աղբյուր:

Ոչ միայն գրուուց հեղինակները Մեսրոպյան նորաձև այրբենարաններում, այլև առաջազրոր գրուուց-ուսուցիչները գործնականում՝ իրենց մասնավոր դպրոցներում աշխատել են կիրառել հեգական մեթոդի նոր, դյուրուուց եղանակներ՝ բարեփոխություններ մտցնել իրենց դասավանդության մեջ:

Այսպես, օրինակ, 1764 թվականին Թուրքիայի Կուտինա քաջարում Հովհաննես վար-

դապետը, որը հայտնի է Տեսե մականունով, իր բաց արած դպրոցում «նախ փոքրագոյն մանկանց տայր գիր գրել, գրելով զգիրն համագամայն զանուանս գրոց և ուսանէին, ապա սկսանէին գրել բերական... յետոյ սկսանէին գրել զաղմոս»: Այսպիսով, նա իր աշակերտներին տառածանալ է դարձնում տառերը գրել տալով, նրանց կարդալ է սովորեցնում բառերը գրել տալու միջոցով, ուրիշ խոսքով, նա գրուուցյուն անցնում է ոչ թե կարդալու, այլ գրելու մեթոդով:

Հովհաննես վարդապետը իր այս մեթոդով մեծ հաջողություն է ունենում, ինչպես վկայում է նրա անհայտ ականատես-ժամանակակիցը իր «Պատմութիւն Կուտինայ քաղաքին» ձեռագրում («Ճուցակ հայերէն ձեռագրաց մատենագրանին Միթթարեան ի Վիեննա», կազմեց Հակոբոս վարդապետ Տաշյան, Վիեննա, 1895, № 518), ասելով. «Ահա այսպէս դիւրագոյն ճանապարհ մի գտնալ... մեծագոյն հիացման արժանի» գործ է կատարում «երանելի հոգին» և «ի մէջ սուղ և գուզնաքեայ ժամանակի հինգվեց տարեկան տղայիքն լինէին բացարձակապէս ընթերցող»:

Հովհաննես վարդապետը, որպես ջանադիր և առաջավոր ուսուցիչ, իր գրելու մեթոդով և գիտակցարար կարդալ սովորեցնելու եղանակով գրավում է ոչ միայն փոքրահասակներին, այլև հասակավորներին, որոնք, ինչպես նրա անհայտ ժամանակակիցն է գրում, կարճ ժամանակում դառնում էին վարծ կարդացողներ և արագ գրողներ, որ տեսնողներին զարմանք էր պատճառում:

Սկսած ԺԵ դարից, հայերենի գրուուցման հեգական մեթոդը շարունակ կատարելագործվել է և Մեսրոպյան այրբենարանները բարեփոխվել են: Նորահայտ բաղմաթիվ նորաձև այրբենարանները մեջ համեզում են, որ հայ դպրոցի անցյալում կան շատ պայծառ էշեր: Հայ մանկավարժական միտքը անցյալում քարացած չի եղել: Ընդհակառակ, հնադարյան մշակույթ ունեցող տաղանդավոր հայ ժողովուրդը կարողացել է մշակել ինքնուրուց և ինքնատիպ մանկավարժական ուժին դպրոցի աղբյուրի մեջ աղանդում են առաջարկություն, որն աշխատել է գտնել նաև գրուուցման դյուրին եղանակներ՝ օգտվելով թե՝ դարերի ընթացքում իր կուտակած փորձից և թե՝ առաջազրոր երկրների մանկավարժական նվաճումներից:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԶԵԿՈՒՅՑ ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ստորև կհրատարակենք ներկա տարվու առաջին վեցամյացին մեջ Հիմնարկությանս կողմեն կատարված հատկացումները և օժանդակությունները ի նպաստ հայկական գործերու:

Խնշպես պիտի տեսնվի, Հիմնարկությունս շարունակած է իր գործունեությունը կեղրոնացնել ուսումնական և մշակութային ծրագիրներու և դպրոցական ձեռնարկներու, ինչպես և հանրային նկարագիր ունեցող բարեսիրական ձեռնարկներու վրա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

1. Պատվո փոխատվություն բարձրագույն ուսումներու համար.— Պատվո փոխատվության հիման վրա, զանազան երկիրներու համարարաններուն և բարձրագույն վարժարաններուն մեջ հայ ուսանողներու կրթաթոշակներ հատկացնելու նպատակով կեղրոնական վարչությունը հաստատեց 75 000 դոլարի հիմնադրամ մը, 1961—1962 տարեշրջանին համար։ Սույն գումարը սահմանված է նախորդ տարեշրջաններուն մեջ ընտրված ինշպես և ներկա տարեշրջանին մեջ ընտրելի պատվո թոշակավորներու։

2. Կրթաբոշակի հատկացում դպրեվաներու մեջ։ — Խնշպես ժանուարված էր մեր վերջին զեկույցով, ըստ հայկական ուսումնարաններու օժանդակության ընդհանուր ծրագրին, կեղրոնական վարչությունը կրթաթոշակներ հատկացուց ի նպաստ դպրեվանքերու մեջ ուսանող աշակերտներու, նախորդ զեկույցով ժանուարվաներեն հետո կատար-

վեցան նաև հետեւյալ հատկացումները, 4 տարվան համար, ի նպաստ որոշ թիվով աշակերտներու յուրաքանչյուր հաստատության մեջ։

Դոլար	
ա. Երուսաղեմի ժառանգավորաց	10 000
բ. Ս. Խաչ դպրեվանք, Ստամբուլ	10 000
գ. Մխիթարյան Բնծայարան, Վենետիկ	6 000
դ. Մխիթարյան Բնծայարան, Վիեննա	6 000
ե. Ջմմառի Բնծայարան	4 000
զ. Հայ ավետարանական Աստվածարաւ	4 000
նական վարժարան, Թիվրութ	4 000
	<hr/> 40 000

3. Հատկացում Ս. Խաչ լիսեի, Ստամբուլի— Կեղրոնական վարչությունը որոշեց նախորդ երկու տարեշրջաններուն այս հաստատության հատկացված տարեկան 15 000 դոլարի օժանդակությունը շարունակել 1961—1962, և 1962—1963 տարեշրջաններուն ևս, և այս նպատակով քվեարկեց 30 000 դոլարի նոր հատկացում մը։

4. Համալսարանական բացառիկ կրթարշակ թրազիլիո մեջ։ — Հիմնարկությանս թրազիլիո ուսումնական հանձնաժողովին հետ համախորհուրդ, կեղրոնական վարչությունը 2 500 դոլարի բացառիկ կրթաթոշակ մը սահմանեց, որ պիտի հատկացվի բրազիլահայ համալսարանականի մը։ Այս հատկացումը, որ ներկայիս մեկ տարվան և մեկ անգամվան համար կատարված է և փորձառական հանգամանք ունի, պիտի տրվի թեկնածուի մը, որ փայլուն հաջողությամբ ավարտած է համալսարանական ուսումը։

կփափագի կատարելագործել իր մասնագի-
տությունը:

5. Հատկացում Կալիֆոռնիո համալսարա-
նին թերկիլի նյուդին հայկական գրադարա-
նին.— Կեղրոնական վարչությունը 5 000
դոլարի հատկացում մը կատարեց ի նպաստ
Կալիֆոռնիո համալսարանին թերկիլի ճյու-
ղին հայկական գրադարանին Սույն գումա-
րով պիտի զնվին հայերեն և հայագիտական
գիրքեր նույն հաստատության հայկական
գրադարանին համար:

6. Ժողով Բոնիֆասիո վարժարանին սարքա-
վորման համար.— Սառ-Փաուլովի (Բրազիլիա) ժողով Բոնիֆասիո հայ վարժարանին
կազմածներուն վերանորոգման համար հատ-
կացվեցավ 3 555 դոլար:

7. Երուսաղեմի Պատրիարքարանին տպա-
րանին համար.— Երուսաղեմի Պատրիար-
քարանին տպարանին հատկացվեցավ 20 300
դոլար, նոր տողաշար մեքենայի մը զնման
համար:

8. Վիեննայի Միխիթարյան տպարանին հա-
մար.— Վիեննայի Միխիթարյան միաբանու-
թյան հատկացվեցավ 20 000 դոլար, նոր տո-
ղաշար մեքենայի մը զնման համար:

9. Մաեկավարժական ամառնային դասըն-
քացի մը համար, Սևո, Ֆրանսա.— Եարու-
նակեղով անցյալ տարի Սիյուութի հայ կեր-
որդական վարժարաններու տնօրիններու
համար գործադրված ծրագիրը, որոշվեցավ,
որ այս տարի ևս սեպտեմբեր ամսուն հայ
նախակրթարաններու 12 տնօրիններ մաս-
նակցին Սևո (Ֆրանսա) Մանկավարժական
միջազգային կեղրոնին ամառնային դասըն-
քացքին. Այս նպատակին համար կեղրոնա-
կան վարչությունը հատկացուց 6 000 դոլար:

10. Թաղթալի հայոց առաջնորդարանին.—
Թաղթալի Սրբոց Թարգմանչաց վարժարա-
նին վերաշնության համար նախապես հատ-
կացված 28 000 ստերլինգի վրա կեղրոնա-
կան վարչությունը կատարեց 2 250 ստեր-
լինգի (= 3 300 դոլար) հավելում մը, ըստ
շինության ընդարձակյալ ծրագրին:

ԲԱՐԵՍԻՒՐԱԿԱՆ ՄՐԱԳԻՐՆԵՐ

11. Խորզուրյուններ Երուսաղեմի Պատ-
րիարքարանին մեջ.— Արկածի հետևանքով
Երուսաղեմի Պատրիարքարանին խոհանոցը
և սեղանատունը փլուզումի ենթարկված ըլ-
լալով, Հիմնարկությունը մասնակցեցավ ան-
հրաժեշտ վերանորոգման ժամանակուն 4 500
դոլարի օժանդակությամբ մը:

12. Երուսաղեմի գաղթականներուն հա-
մար.— Հիմնարկությունը 11 200 դոլարի օ-
ժանդակություն մը հատկացուց Երուսաղեմի

Պատրիարքարանին մեջ պատսպարված հայ
գաղթականներու պարենավորման ժաման-
քուն, 1961—1962 տարեշրջանին համար:

13. Ս. Փրկիլ հիվանդանոցին համար,
Ստամբուլ.— Ստամբուլի Ս. Փրկիլ հիվան-
դանոցը ունետկենյան նոր գործիքով մը և
ուղիղությունի նոր կազմածներով օժտելու
նպատակով Հիմնարկությունս կատարեց
23 000 դոլարի հատկացում մը ի նպաստ այս
հաստատության:

ԳԻՏԱԿԱՆ ՄՐԱԳԻՐՆԵՐ

14. Ազունիել (Լիբանան) բուժաբեին հա-
մար.— Ազունիել բուժարանին կից հետա-
խուզական կեղրոնի մը կառուցման համար
Հիմնարկությունը կատարեց 4 000 դոլարի
հավելվածական հատկացում մը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ 1961-Ի Ա. ՎԵՑԱՄՍՅԱ- ՅԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ

1. Համալսարանական պատվու	
փոխատվությանց համար	75 000
2. Դպրեվանդքերու կրթաթոշակ	40 000
3. Ս. Խաչ լիսեին	30 000
4. Համալսարանական բացառիկ	
կրթաթոշակ (Բրազիլիա)	2 500
5. Թերկիլի համալսարանին	5 000
դրադարանին	
6. Ժողով Բոնիֆասիո վարժարա-	
նին սարքավորման	3 555
7. Երուսաղեմի Պատրիարքա- րանին տպարանին	20 300
8. Վիեննայի Միխիթարյանց տպա- րանին	20 000
9. Մանկավարժական դասրն- թացք (ՄԱԿ)	6 000
10. Թաղթալի առաջնորդարանին	6 300
11. Նորոգություններ Երուսաղեմի	
Պատրիարքարանին մեջ	4 500
12. Երուսաղեմի գաղթականներու	
պարենագին	11 200
13. Ս. Փրկիլ հիվանդանոցին հա- մար կազմածներ	23 000
14. Ազունիել բուժարանին	4 000
	251 355

Մինչև 31 դեկտեմբեր 1960 կա-
տարված հատկացումներու
գումար

2 800 425

Մինչև 31 հունիս 1961 կատար-
ված հատկացումներու ընդ:

3 051 780

ԳԱԼՈՒՍ ԿՑՈՒԼՊԵՆԿՑԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

